

2934

Signature of F.

Manuscript of the original manuscript

See Serials

9(47)

4-50

1939



Բ. ՎԵՐԻՈՎԵՆ

30 MAY 2011

ՆՈՒՍԱՍՏԱՆԸ

ԻՎԱՆ ԱՀԵՂԻ  
ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ  
ԺԱՄԱՆԱԿ



9(47)  
4-50

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ  
ՅԵՐԵՎԱՆ • 1939

9(47)

127

24 JAN 2006

45-50

Բ. ՎԵՐԻՌՎԵՆ

ար

ՌՈՒՍՍՍՏԱՆԸ  
ԻՎԱՆ ԱՀԵՂԻ  
ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿ

357-  
88

2934

11.10.2013

MS KAL 48



4755  
39

Б. ВЕРХОВЕНЬ  
РОССИЯ В ЦАРСТВОВАНИЕ  
ИВАНА ГРОЗНОГО

Государственное издательство полит. литературы  
Ереван • 1939

### ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԵԿԹՆՈՄԻԿԱՆ XVI ԴԱՐԻ ԱՌԱՋԻՆ ԿԵՍՈՒՄ



դարը Արևմտյան Յեվրոպայի պատմության մեջ մտել է վորպես կապիտալի այսպես կոչված նախասկզբնական կուտակման ժամանակաշրջանի սկիզբ: 1492 թ. Գրիստափոր Կոլումբոսը հայտնագործեց Ամերիկան: Իրան հետևեցին աշխարհագրական մի շարք ուրիշ մեծ հայտնագործություններ: Բացվեցին նոր ճանապարհներ դեպի Հնդկաստան՝ յեվրոպացիների յերևակայության մեջ հեքիաթային հարստություններ ունեցող յերկիրը: «Վոսկին մի գարմանալի առարկա յե: Ով նրան տիրում է, նա տեր է այն ամենի, ինչ նա ուզում է»—գրում էր Կոլումբոսն իր նամակներից մեկում:

Մինչև աշխարհագրական մեծ հայտնագործությունները, Արևմտյան Յեվրոպայի կապն Արևելքի հետ իրականացվում էր Միջերկրական ծովի վրայով: XII—XIII դարերում Արևելքի հետ տեղի ունեցող առևտրի զարգացման կապակցությամբ առանձնահատուկ նշանակություն ձեռք բերին իտալական քաղաքներ Վենետիկը, Ճենովան և ուր.: Նրանք առևտրական մոնոպոլիստներ դարձան Միջերկրական ծովի վրա և XIII դարում փոխարկվեցին ամենահարուստ առևտրական քաղաք-հանրապետությունների: Թուրքերի կողմից 1463 թ. Բյուզանդիայի գրավումից և նրանց կողմից իրենց տիրապետության հաստատումից հետո Վենետիկն ու Ճենովան կորցրին իրենց առևտրական նշանակությունը: Թուրքերն իրենց տիրապետությունը տարածեցին ամբողջ Փոքր Ասիա-

յք, Մերխայի, Պաղեստինի և Հյուսիսային Աֆրիկայի վրա: Թուրքական տիրապետութեան հաստատումը Մերձավոր Արևելքում քայքայեց յեվրոպական և, առաջին հերթին, իսպալական առևտուրը: Առևտրական վաղեմի ճանապարհներն անկման հասան: Թուրքերը սկսեցին բարձր մաքսեր դնել արևելյան ապրանքների վրա: Այդ վոսկու և արծաթի արտահոսում առաջացրեց ղեպի Ասիա: Յեվրոպական յերկրները հարկադրված էին վոսկու և արծաթի նոր աղբյուրներ փնտռել:

Յեվրոպական միջերկրածովային առևտրի ճգնաժամի այս իրադրութեան մեջ ե՛լ ավելի յեն ուժեղանում ղեպի Արևելք տանող նոր առևտրական ճանապարհների տենդագին վորոնումները: Այդ վորոնումների մեջ մեծ նախաձեռնութիւն յերևան բերին Պորտուգալիան և Իսպանիան, վորոնք ընկած էին ղեպի Հնդկաստան և ղեպի վերստին հայտնադործված Ամերիկան տանող նոր ճանապարհների հատման տեղում: Հենց այդ բանն էլ նրանց առաջ քաշեց XVI դարում առաջին տեղը յեվրոպական մյուս յերկրների մեջ: ●

Վոսկի վորոնելու նպատակով բազմաթիւ արկածախնդիրներ և վաստակի սիրահարներ հազարներով նետվեցին ղեպի նոր յերկրները և ղեպի հին յերկրները նոր ճանապարհներով: «Ավազալաքյունն ու ավարառութիւնը—իսպանական արկածախնդիրների միակ նպատակն է Ամերիկայում...»,—գրում է Մարքսն իր ժամանակագրական քաղվածքներում: Ամերիկայում, Հնդկաստանում, Աֆրիկայում պորտուգալական, իսպանական, հոլանդական և մյուս վաճառականներն ու ազնվականները կողոպտում էին տեղական բնակչութեանը, Ֆիզիկապես բնաջնջում էին հարյուր հազարավոր մարդկանց: Կողոպտված հարստութիւնը փոխադրվում էր Յեվրոպա և բազմ յեր ծառայում Արևմտյան Յեվրոպայի կապիտալիստական զարգացման հիմնադրման համար:

«Վոսկու և արծաթի հանքավայրերի հայտնադործումն Ամերիկայում,—գրում էր Մարքսը «Կապիտալ»-ի I հատորում,—բնիկ ազգաբնակչութեան արմատախլումն, ստրկացումն ու հանքարաններում վողջ-վողջ թաղելը, Արևելյան Հնդկաստանի նոր-նոր սկսվող նվաճումն ու կողոպտումը, Աֆրիկան սևամորթների առևտրային վորսի արգելոց դարձնելն արտադրութեան կապիտալիստական դարազլխի արշալույսն են նշում»<sup>1</sup>:

Կապիտալիզմի պատմութիւնը յերբեք չի յեղել խաղաղ իդիլիա: Նա մարդկութեան պատմութեան մեջ մուծված-դրված է, Մարքսի արտահայտութեամբ՝ հրի ու սրի բոցավառող լեզվով:

Յեթե Արևմտյան Յեվրոպայում սկսվում էր կապիտալիստական արտադրութեան արշալույսը, ապա XVI դարի առաջին կեսի Ռուսաստանը իր զարգացմամբ հետ էր մնում արևմտա-յեվրոպական առաջավոր յերկրներից: Այդ հետամնացութիւնը բացատրվում էր ամենից առաջ նրանով, վոր Ռուսաստանը 240 տարվա ընթացքում գտնվում էր թաթարական լծի ծանրութեան տակ: Թաթարական խաները կողոպտում էին ուսուցողներին, այրում էին քաղաքներն ու գյուղերը, գերի էին տանում տղամարդկանց ու կանանց, ուսսական յերկրներից հավաքում էին ծանր հարկ, արգելակում էին ուսգական միասնական կենտրոնացված պետութեան ստեղծմանը, կասեցնում էին Ռուսաստանի տնտեսական զարգացումը: Միայն Ռուսաստանի ազատադրումը թաթարական լծից XVI դարի վերջին ու ուսսական ազգային պետութեան ստեղծումն ապահովեցին առևտրի և արհեստային արտադրութեան համեմատաբար արագ զարգացումը:

Իվան Կայիտան, վոր իշխում էր Մոսկվայում XIV դարի առաջին կեսում, ուսսական հողերը հավաքելու ու միացնելու և Մոսկվայի իշխանութիւնն ամրապնդելու իր քաղաքականութեամբ սկիզբ դրեց ուսսական ազգային պետութեան գոյացմանը: Բայց ուսսական ազգային պետութեան ստեղծողը, ինչպես ընդգծում է Մարքսն իր «XVIII դարի գաղտնի դիվանագիտութիւնը» աշխատութեան մեջ, Մոսկվայի մեծ իշխան Իվան III-ն էր, վոր իշխել է 1462-ից մինչև 1505 թ.: Իր իշխանութեան սկզբում Իվան III-ը թաթարական հարկատու յեր: Նրա իշխանութիւնը վիճարկվում էր Տվերի, Ռյազանի, Նիժնի-Նովգորոդի և այլ ուղբլային իշխանների կողմից: Նովգորոդն իշխում էր հյուսիսում վորպես ինքնուրույն քաղաք, իսկ լեհ-լիտվական պետութիւնը ձգտում էր նվաճել Մոսկովիան և Մերձբալթիկան:

Լեհ-լիտվական պետութեան հետ մեկտեղ առանձնապես Մոսկվայի վտանգավոր հակառակորդներն էին թաթարական խաները: Թաթարական լծի դեմ մղված պայքարը կարևորագույն դործոն էր XV դարի Ռուսաստանում հզոր կենտրոնացված պետութիւն ստեղծելու: Այդ մոմենտն ընդգծված է ընկեր Ստալինի կողմից ՌԿ(Բ)Կ X համագումարին արված իր՝ «Պուսսակցութեան հերթական խնդիրները ազգային հարցում» ղեկուցման մեջ:

<sup>1</sup> Մարքս, Կապիտալ, I հատ., XXIV գլ., էջ 722, Հայկուսհրատ, 1933 թ.:

Ընկեր Ստալինն ասում եր «... թուրքերի, մոնղոլների և Արևելքի այլ ժողովուրդների արշավանքից պաշտպանվելու շահերը պահանջում էյին անհապաղ կենտրոնացված պետութուններ կազմել, վորոնք ընդունակ են սանձահարելու արշավանքի գրոհը»:

Իր պետութւյան կենտրոնացումն ուժեղացնելու համար Իվան III-ը պայքարում եր Ֆեոդալական բաժան-բաժանվածութւյան վերջնական լիկվիդացիայի համար: Հենկելով Նովգորոդի բնակչութւյան ներքնաստիների վրա, վորոնք կողմնակից էյին Մոսկվային միանալուն, Իվան III-ը ջանջախեց Լեհաստանի և Լիտվայի կողմից սատարվող Նովգորոդի բոյարութւյանը՝ և 1478 թ. Նովգորոդը մտցրեց Մոսկվայի պետութւյան կազմի մեջ: Իվան III-ը 1505 թ., Վեդրոշա գետի վրա ջանջախելով լեհ-լիտվական դորքը, Լիտվայից հեռ խլեց ուսսական մի շարք նախկին իշխանութւյուններ, վոր նա զավթել եր XIV դարում և XV դարի սկզբին: Մոսկվային միացվեցին նմանապես Տվերի, Ռյազանի, Նիժնի-Նովգորոդի և այլ իշխանութւյուններ:

Վորպես արդյունք՝ Մոսկովյան պետութւյունը նշանակելիորեն աճեց: Ֆեոդալական ինքնուրույն իշխանութւյունների տեղ ստեղծվեց ուսսական միասնական ազգային պետութւյուն, իսկ Մոսկվայի մեծ իշխան Իվան III-ը ընդունեց «Թագավոր համայն Ռուսիո» տիտղոսը: Ռուսական ազգային պետութւյունն աճում ու ամրանում եր: Նա այժմ բռնում եր հարյուր հազարավոր քառակուսի կիլոմետր տարածութւյուն: Նույն այդ ժամանակ թուլանում էյին նրա հարևանները, և մյուսներից ավելի թուլանում եր Վոսկե Հորդան:

«Գաղտնի գլխանադիտութւյան» մեջ Մարքսը հետևյալ կերպ եր բանաձևում Վոսկե Հորդայի անկման պատճառները XV դարում.

«Իվանի գահակալութւյունից դեռ շատ առաջ,—դրում եր Մարքսը,—Վոսկե Հորդան արդեն թուլացած եր,—ինչպես ներսից՝ շնորհիվ կատաղի յերկպառակութւյունների, այնպես եր դրսից՝ շնորհիվ նոդայան թաթարներից անջատվելու, Թեմուրի (Թամերլանի) ներխուժման, կազակութւյան ուժեղացման և Ղրիմի թաթարների թշնամութւյան»:

1480 թ. Իվան III-ը հրաժարվեց հարկ վճարել Վոսկե Հորդայի խանին: Վերջինս պատերազմի գնաց Մոսկովիայի դեմ: Վոսկե Հորդայի զորքն արդեն դանդաղում եր Ոկա գետի ափին, բայց,

տեղեկութւյուն ստանալով հորդայում տեղի ունեցած հուզումների մասին, խանը հեռ դարձավ: Այսպիսով, Իվան III-ը առանց արյուն թափելու մնաց «հաղթող»: Ռուսական պետութւյունն ազատվեց Վոսկե Հորդայի լծից:

Ռուսական ազգային պետութւյան ստեղծումը, Ֆեոդալական բաժան-բաժանվածութւյան լիկվիդացիան Իվան III-ի թագավորութւյան հիմնական արդյունքն եր: «Թագավորութւյան վերջերքին,—դրում եր Մարքսը «Գաղտնի գլխանադիտութւյան» մեջ,—Իվան III-ին մենք տեսնում ենք անկախորեն գահին նստած՝ ձեռք-ձեռքի աված բյուզանդական վերջին կայսրի դասեր հետ: Նովգորոդը հնազանդված եր նրան: Վոսկե Հորդայի մնացորդները խոնավում են նրա դռների մոտ: Լիտվան հլու գործիք եր նրա ձեռքում»:

«Ջարմանքից ապշած Յեվրոպան,—նշում եր այնուհետև Մարքսը,—վորն Իվան III-ի թագավորութւյան սկզբում հազիվ թե նույնիսկ յենթադրում եր Լիտվայի և թաթարների միջև տեղավորված Մոսկովիայի գոյութւյան մասին,—չմեց իր արևելյան սահմաններում մի վիթխարի կայսրութւյան անակնկալ յերևան գալով»:

Ռուսական ազգային պետութւյան ամրացման համար արտաքին թշնամիների դեմ մղած պայքարում և իր սեփական իշխանութւյան ուժեղացման համար Իվան III-ը հենվում եր իր ծառայող զինվորականները—ճորտ գյուղացիներին շահագործող կալվածատերերի վրա: XV դարում կալվածատերեր կամ աղնվականներ սկսեցին կոչվել այն զինվորականները, վորոնք զինվորական ծառայութւյան մեջ էյին Մոսկովյան ցարի զորքերում: Իրենց ծառայութւյան ժամանակամիջոցում իրենց ծառայութւյան համար նրանք ստանում էյին հողային սեփականութւյուններ, կամ «կալվածներ»: Կալվածների տերերն սկսեցին կոչվել կալվածատերեր:

Իվան III-ն ուժեղացրեց գյուղացիների Ֆեոդալական կալվածութւյունը կալվածատերերից: Առաջ գյուղացիներն իրավունք ունեյին մեկ տիրոջից մյուսի մոտ անցնելու: Իվան III-ը 1497 թ. մի որեքն հրատարակեց, վորի համաձայն անցնելու իրավունքը սահմանվում եր գյուղատնտեսական տարվա վերջնապուց հետո, միայն Յուրիի որը, մի շարքի վա ընթացքում նրանից առաջ և մի շարքի վա ընթացքում նրանից հետո: Գյուղացիները կալվածատիրոջը վճարում էյին բահրա, մշակում էյին նրա հողերը, հավաքում բերքը, հնձում խոտը, նրա համար կառուցում աղարանք և այլն: Նրանց, ովքեր բահրա չէյին վճարում կամ

խուսափում էյին «կոռ»-ից (այսպես եր կոչվում կարվածատիրոջ համար կատարվող աշխատանքը), «տանջադանձման» էյին յեն-թարկում, այսինքն՝ դադանակներով կամ մտրակով սաստիկ ծեծում և բանազցում:

Ռուսական ազգային պետութեան գոյացումը արագացնում է յերկրի տնտեսական զարգացումը, նպաստում ապրանքա-փողային հարաբերութեանների արագ աճմանը: Ռուսաստանի տնտեսական զարգացման մեջ տեղի ունեցող այդ տեղաշարժերն ստանձնապես նկատելի յեն դառնում XVI դարի կեսերին:

XVI դարի առաջին կեսին Ռուսաստանում նկատվում եր քաղաքների թվի վիթխարի աճում, քաղաքային բնակչութեան ավելացում, արհեստային արտադրութեան զարգացում, վերջինիս անջատումը գյուղատնտեսութեանից և արհեստավորների կենտրոնացումը քաղաքներում: Աճում ու գարգանում է ներքին և արտաքին առևտուրը:

XVI դարի սկզբին Ռուսաստանում հաշվվում եր 96 քաղաք, իսկ XVI դարի յերկրորդ կեսին՝ մոտ 170 քաղաք: Նրանց մեջ Նովգորոդը, Սմոլենսկը, Պսկովը, Նիժնի-Նովգորոդը, Մոժայսկը և ուրիշ: Այդ քաղաքներից յուրաքանչյուրում հաշվվում եր քաղաքային բնակչութեան ավելի քան հազար տուն: XVI դարում Մոսկվան ուներ միջանի հազար տուն և Յեվրոպայի խոշորագույն քաղաքներից մեկն եր: Անդլիական ճանապարհորդ Չենսլորի վկայութեամբ, վորն այցելել է Մոսկվան XVI դարի կեսերին, Մոսկվան այն ժամանակ ավելի լայնածավալ եր, քան Լոնդոնն իր արվարձանների հետ մեկտեղ վերցրած:

Ռուսական մի շարք քաղաքներում արհեստավորները կազմում էյին բնակչութեան զգալի տոկոսը: Որինակ, Տորոպցա քաղաքում արհեստավորները կազմում էյին բնակչութեան 12%-ը, իսկ Ուստյոմնայում—27%-ը: Միջանի քաղաքներում այդ տոկոսը բարձրանում եր մինչև 40-ի: Արհեստավորների մի մասը աշխատում եր հավաքադուրդների համար, վորոնք միջնորդներ էյին հանդիսանում արհեստավորների և սպառողների միջև: Բայց նրանց մեծ մասն ինքն եր վաճառում իր շինվածքները: Կիտայ-գորոզում, վորն առևտրային Մոսկվայի սիրտն եր, կային հարյուրավոր կրպակներ, տաղավարներ, նստարաններ, ուր Մոսկվայի արհեստավորներն իրենք էյին վաճառում իրենց շինվածքները:

Մոսկովյան պետութեան միջանի քաղաքներ այն ժամանակներում վերածվել էյին խոշոր արհեստային արտադրութեան

կենտրոնների, վորոնք իրենց շինվածքներով սպասարկում էյին ամբողջ յերկիրը: Այսպես որինակ, Մոլոմոզորը հուշակված եր փոկի կաշվից պատրաստած իրենց շինվածքներով: Վոլոգդան արտադրում եր մեխ, խարխիս, կացին և գերանդի: Նովգորոդն ու Պսկովը գանգ էյին ձուլում: Վլադիմիրի սահնակները և կարգայի դիպոտ գդալները տարածված էյին ամբողջ Ռուսական պետութեան մեջ:

Արհեստի զարգացումն արտահայտվում եր նաև նրա մասնագիտացմամբ—նոր, արհեստային ավելի նեղ մասնագիտութեանների առաջացմամբ: Մոսկովյան պետութեան քաղաքներում այն ժամանակ հաշվվում եր մինչև 210 արհեստային մասնագիտութեան: Գերակշռում էյին ուտելիքների արտադրութեամբ զբաղվող մասնագետները՝ հացադործները, կարկանդակադործները, կվաս պատրաստողները և ուրիշ: Այնուհետև դալիս էյին առօրյա կենցաղի առարկաներ արտադրող արհեստավորները՝ կաշեգործները, մաշկակարները, դերձակները, մուշտակ կարողները և ուրիշ:

Մեծ նշանակութեան ուներ մետաղի մշակութեամբ և նրանից զենք պատրաստելու արտադրութեամբ զբաղված արհեստավորների խումբը՝ սուսերագործները, զրահագործները և ուրիշ:

Արհեստավորները ճիտված էյին «մրտած» խրճիթներում, վորոնք վոչ լուսամուտ ունեյին, վոչ տախտակե հատակ, վոչ ել ծխնելույզ, քաղաքների ծայրամասերում, վորևե տեղ հորվանով-կայում (այսպես եր կոչվում XVI դարի Մոսկվայում արհեստավորական արվարձաններից մեկը): Մնվում էյին, ինչպես ժողովրդական առածն է ասում, «ձվի կճեպից պատրաստած ապուրով»: Շատերին արհեստը բնավ չեր ապրեցնում: Յեվ, չունենալով «սեփական կյանքը», այսինքն՝ գույքը, նրանք մուրացկանութեան էյին անում:

Անդլիական ճանապարհորդ Ռիչարդ Չենսլորն իր հուշիկներում խոսում է Մոսկովիայի քաղաքների աշխատավոր բնակչութեան արտասովոր չքավորութեան մասին: Նա գրում է. «Այստեղ անհամար քանակի չքավորներ կան, և նրանք ապրում են ամենախղճուկ ձևով: Յես տեսա, թե ինչպես նրանք ուտում են ծովատառեխի աղաջուր և ամեն տեսակի նեխած ձկներ»:

Արհեստի հետ կողք-կողքի XVI դարում յերևան էյին գալիս նաև ավելի խոշոր ձեռնարկութեաններ, հիմնված ճորտ գյուղացիների աշխատանքի վրա: Զարգանում է աղադործութեանը, պոտաշի արտադրութեանը և հանքային գործը: Այդ արտադրու-



թյունները պահանջում էյին զգալի քանակությամբ աշխատող ձեռք:

Կարելիացում և Ուրալում արդյունահանվում էր բավական մեծ քանակությամբ յերկաթ: Հյուսիսում, Սուլիէնգոդսկում գտնվում էյին Ստրոգանովներ վաճառականների աղի խոշոր յեփարանները:

Արհեստի զարգացումն ու քաղաքների աճումը ընդլայնում էյին ներքին առևտուրը: Միքանի քաղաքներ վերածվեցին առևտրական խոշոր կենտրոնների: Առևտրային շրջանառության մեծությամբ XVI դարում առաջին տեղը բռնում էր Մոսկվան, վորի վրայով էյին անցնում բոլոր առևտրական ճանապարհները: Մոսկվայի առևտրային շրջանառությունը կազմում էր յերկրի ամբողջ շրջանառության 1/3-ը:

Անդրիական ճանապարհորդ Չենսլորն իր հուշիկներում, վորոնք վերարեբում են XVI դարի կեսերին, գրում էր, թե ամեն առավոտ միայն Յարոսլավլի ճանապարհով Մոսկվա էյին դալիս հացով, ձկնով և այլ բաներով բեռնավորված 700—800 սահակներ:

Մոսկվայից հետո, ըստ ապրանքաշրջանառության մեծության, դալիս էյին Նովգորոդը, Կազանը, Նիժնի-Նովգորոդը, Յարոսլավլը, Կոստրոման, Պսկովը, Տվերը, Վոլոգդան, Վելիկի Ուսայուգը: Հարավում նոր-նոր աճել սկսած քաղաքներ Տուլան, Կալուգան, Սերպուխովն ու մյուսն. դարձան առևտրական կարեւոր կետեր:

Յարոսլավլի մասին նույն Չենսլորը գրում է, վոր «դա շատ մեծ քաղաք է: Այնտեղի ապրանքները—կաշին, ճարպը և հացը—շատ մեծ քանակությամբ են և վորոշ քանակությամբ մեղրամոմ կա, բայց այն այնպես շատ չէ, ինչպես մյուս քաղաքներում»:

Բազմաթիվ մանր առևտրականների հետ կողք-կողքի, վորոնցով վիտում էյին Մոսկվան և մյուս քաղաքները, հայտնվեցին նաև խոշոր վաճառականներ, այսպես կոչված «հյուրերը», վորոնք գրադվում էյին վիթխարի կապիտալների շրջանառություններով: «Հյուրերը» Մոսկվայում մոտ 30 հոգի էյին: Մոսկվայի այնպիսի «հյուրերը», ինչպես Նիկիտանիկովը, Վորոնինը, ունեյին տասնյակ սեփական դյուղեր, ձկնորսարաններ ու աղահանքեր, միլիոնների շրջանառություններ:

XVI դարի ամենաանվանի առևտրականներ Սարոգանովները առևտուր էյին անում ամբողջ Ռուսաստանով մեկ—Պերմից մին-

չև Մոսկվա և Արխանգելսկից մինչև Ռյազան: Նրանք վաճառում էյին իրենց յեփարանների աղը, ձկնորսարանների ձուկը, Միբերի ժողովուրդների կողոպտվելու հետևանքով ստացված մորթիները: Ստրոգանովներն առաջինը կազմակերպեցին հանքային խոշոր արտադրություն Ուրալում:

Չարզանում էր նաև արտաքին առևտուրը: Այդ առևտրում առաջին տեղը բռնում էյին մորթիները: Մորթիները վաճառում էյին Արևմուտքի վաճառականներին և Արևելքին տարեկան միքանի հարյուր հազար վոսկի ուրբուր: Թանգ արժեք սևազորչ ազվեսը և առանձնապես բարձր էր գնահատվում սամույրի գեղեցիկ մորթին: Մեղրամոմ արտահանվում էր տարեկան մոտ 50 հազար փութ:

Արտահանվում էյին և այնպիսի ապրանքներ, ինչպես ճարպը՝ Մմոլենսկիչ Յարոսլավլի, Նովգորոդի, Տվերի յերկրներից. մեղրը՝ Ռյազանի և Մուրոմի յերկրներից. վուշը՝ Պսկովից և կանեփը՝ Մմոլենսկից և Վյազմայից. աղն ու ձյուլթը մեծ պահանջարկ էյին գտնում արտասահմանյան շուկայում. ձուկն ու ձկնկիթը գնում էյին Իսպանիա ու Իտալիա. արտահանվում էյին նմանապես փայլարը, բորակը, ծծումբն ու յերկաթը:

Յեվրոպական վաճառականները Ռուսաստան էյին ներմուծում ձուլածո արծաթ, պղինձ, մահուղ, հայելի, ժանյակ, կաշի, ասեղ, գինի ու միդդ:

Ասիական վաճառականները վաճառում էյին մետաղայա դործվածքներ, գորգեր, թանկագին քարեր: Մոսկվայի պետությունն առևտուր էր անում Լիտվայի, Լեհաստանի, Իրանի և այլ յերկրների հետ:

Ապրանքա-փողային հարաբերությունների աճումը Մոսկովյան պետության մեջ XVI դարում հասցրեց ճորտ դյուղացիության շահագործման հետագա ուժեղացմանը: Միաժամանակ սրբվում էր պայքարը Ֆեոդալների դասակարգի ներսում՝ կալվածատերերի և բոյարների միջև: Վոտչիննիկ<sup>1</sup> (ժառանգական կալվածատեր) —բոյարներն ամենից ավելի խոշոր հողային սեփականատեր-Ֆեոդալներն էյին: Նրանցից շատերը, առաջներում ինքնուրույն, այսպես կոչված ուղեւային իշխանները, XV—XVI դարերում հանդիսանում էյին ցարերի մերձավոր սպասավորները: Կալ-

<sup>1</sup> Բոյարները վոտչիննիկներ էյին կոչվում այն պատճառով, վոր հողը նրանց սեփականությունն էր և անցնում էր հորից վորդուն «պապեճական տիրապետություն» որենքներով:

վածատերերը, ճառագող զինվորականները հարց եյին դնում խոչոր վտախննիկ-բոյարների արտոնությունները լիկվիդացիայի յենթարկելու մասին և հողն ու ճորտերն հոգուտ իրենց վերաբա-  
ժանելու մասին:

Մոսկովյան ցարերը կենտրոնացված իշխանության համար բոյարների ու իշխանների դեմ մղած պայքարում հենվում եյին ազնվական-կալվածատերերի վրա: Մոսկովյան ցարերի՝ կենտրոնական իշխանության ամրապնդմանն ուղղված քաղաքականությունը պաշտպանում էր նաև պոսադի (վաճառավայրի) ընակ-  
չությունը, այսինքն արհեստավորներն ու քաղաքների մանր վաճառականները:

Պոսադը խոչոր քաղաքական դեր էր խաղում XVI դարում: Հենվելով կալվածատերերի ու պոսադի վրա Մոսկովյան ցարերը ստեղծում եյին կենտրոնացված ուժեղ պետություն: Այսպես երայն իրազրությունը, վոր կազմավորվեց Մոսկովյան պետության մեջ XVI դարի 30-ական թվականների մոտերքը:

### ԲՈՅԱՐԱԿԱՆ ԻՆՔՆԻՇԵՍԱՆՈՒԹՅԱՆ ՏԱՐԻՆԵՐԸ

Վասիլի III ցարի մահից հետո, վոր տեղի ունեցավ 1533 թ. դեկտեմբերին, Մոսկովյան գահի ժառանգ. դարձավ նրա յերեքամյա վորդին, Իվան III-ի թոռը, Իվան Վասիլևիչիչը, կամ Իվան IV-ը, վորը հետագայում կոչվեց Ահեղ: Նա ծնվել է 1530 թ. ոգոստոսի 25-ին Վասիլի III-ի յերկրորդ կնոջից՝ լիսվական իշխանուհի Յելենա Գլինսկայայից, վորը զբավեց Մոսկովայի պետության կառավարչուհու տեղը: Պետության փաստական կառավարիչը դարձավ նրա սիրելի Իվան Որոլենսկին:

Իվան Որոլենսկու՝ պետության միանձնյա կառավարումը գեթ մաղբություն աղաջացրեց բոյարների կողմից և ամենից առաջ Վասիլի III-ի մերձավորների՝ Վասիլի և Իվան Ծույսկիների, Բելսկու և այլ իշխանների ու բոյարների կողմից:

Իմադրությունն արտահայտվում էր տարբեր ձևերով և մասնավորապես՝ Յելենա Գլինսկայային վրձնչացնելու ձգտումով: Վերջապես 1538 թ. գարնան այդ հաջողվեց նրանց: Յելենա Գլինսկայային թունավորեցին: Միջանի որ անց բոյարները բռնեցին Իվան Որոլենսկուն և դատաստան տեսան նրա գլխին: Տարեգրության մեջ այդ առթիվ ասված է՝ «Յեմ արդելին գնա ի պալատն հանկույտ ապարանից առ ախտոսով և մեռուցին գնասովով և բռնությամբ յերկայթյա»: Այսպիսով քաղցի ու բռնությունների ոգնությամբ նրանք մեռցրին Իվան Որոլենսկուն:

Իվան Որոլենսկու անկումից հետո սկսվեց բոյարական ինքնիշխանության ժամանակաշրջանը, վորը տևեց 10 տարի: Բոյարները շատ եյին, և նրանց միջև մշտական յերկպառակություններ եյին տեղի ունենում պետական իշխանության համար: Նա, ով իշխանություն ուներ իր ձեռքում, ուներ և պետական գանձարանի բանալին:

Վասիլի III-ի որով գանձարանը բավականին մեծ էր: Այդ գանձարանից ոգտվել ցանկանում եյին բոլորը՝ թե Ծույսկիները՝ Իվանն ու Վասիլին, թե Իվան Բելսկին, թե Գլինսկիները և թե ուրիշները: Նրանցից յուրաքանչյուրը ջանում էր իր դիրքն ոգտադրածել անձնական շահերի համար:

Ժամանակակիցներից մեկն այդ առթիվ նկատում է «ամենայն վոք վասն յուր հոգա, և վոչ վասն թագավորության և վոչ վասն ժողովրդյան», այսինքն՝ ամեն մեկն իր սեփականի, անձնականի մասին է հոգում:

Ժամանակակիցների վիայությամբ, բոյարները մեկը մյուսին բանտ եյին դրում և նույնիսկ մահվան մատնում: Յերկպառակչական դաժան պայքարը տեղի յեր ունենում նաև պետության ժամանակավոր կառավարիչների միջև:

Սկզբում իշխանությունը հափշտակեց Վասիլի Ծույսկին և բանտ դրեց Իվան Բելսկուն: Հետո Վասիլի Ծույսկին «մեռավ», ինչպես ասված է տարեգրության մեջ և նրա տեղը բռնեց Իվան Ծույսկին, վորը հռչակվեց նրանով, վոր, լինելով մեծ իշխանի փոխանորդը Պսկովում, այնտեղ վայրագություն էր անում, տարեդրի արտահայտությամբ, «վորպես առյուծ»: Այդ դաժան բոյարը թալանում էր պետական գանձարանը և իշխեց միջանի տարի: Նրան փոխարինելու յեկավ նոր իշխող-իշխան Անդրեյ Ծույսկին: Վերջապես, իշխանության բաժանման մեջ մասնակցություն ունեցան ապագա ցար Իվան IV-ի ազգականները՝ նրա մորական ազգականները՝ Գլինսկի իշխանները:

Ինչ էր տեղի ունենում բոյարական ինքնիշխանության հետևանքով, մեկ բռնացողի ու կողոպտիչի շարունակ մյուսով փոխարինվելու հետևանքով: Ռուսիայում դրանից ամենից առաջ և ամենից շատ տուժում եյին գյուղացիներն ու քաղաքային ներքնախավերը:

Յուրաքանչյուր կառավարիչ իշխանության գլուխ էր կանգնում վոչ թե մեռակ, այլ «հանդերձ ազգատոճիվ յուրով»: Կառավարիչը բերում էր մի ամբողջ գունդ բոյարներ, վորոնք

զբալում էյին զորավարներէ, կուսակալներէ տեղերը և այլն: Այդ բոլոր տեղերը արվում էյին պետութեան նոր ժամանակավոր կառավարչի ազդականներին կամ բարեկամներին: Այդ իշխանաւորներէց ամեն մեկը զործում եր հար ու նման իրեն տիրոջ, այսինքն՝ փութաջանորեն կողոպտում եր աշխատավորական մասսաներին:

Այդ ժամանակավոր կառավարիչները առանձին ուշադրութեամբ էյին դարձնում պետական գանձարանի վրա: Իվան Ահեղը Մոսկովայի իշխաններից մեկին՝ Անդրեյ Կուրբակուն զրած նամակում այսպես է նկարագրում այդ փաստը: «Ի՞նչ ասեմ ծնողներս գանձարանի մասին: Ամեն ինչ հափշտակեցին նենգ դիտաւորութեամբ, իբր թէ վորպե՞ս ոտճիկ բոյարների զաւակներին, այնինչ բոլորն իրենց համար վերցրին, և բոյարների զաւակներին պարզեւտրում էյին վոչ զործի համար, կարվածներ էյին շնորհում, վոչ ըստ արժանիքի, մեր հոր և պապի գանձարանից իրենց համար վոսկե ու արծաթե անոթներ նախազարգեցին և նրանց վրա իրենց ծնողների անունները գրեցին, կարծես թէ այդ ժառանգական գույք յեղած լիներ»:

Այնուհետև Իվան Ահեղը գրում եր. «Մեր հորեղբայրների աները, գյուղերը և կարվածքները վերցրեցին, իրեն համար բնակութեան հաստատեցին նրանցով... Յեվ ինչքա՞ն չարիք զործեցին նրանք: Բանի՛քանի՛ բոյարների ու զորավարների, մեր հոր բարյացակամներին մեռցրին...»: Ժամանակավոր կառավարիչները պետական գանձարանը կողոպտեցին—տարան, իսկ հոր շատ բարյացակամներին, այսինքն նրա հայր Վասիլի III-ի կողմնակիցներին, սպանեցին:

Յեթև գյուղացիութեանն առանձնապես խիստ եր տուժում բոյարական-ինքնիշխանութեանից, ապա վատ դրութեանն եր ստեղծվում նաև շարքային ազնվականութեան համար, այսինքն՝ Փետրալական իշխող դասակարգի ամենաբազմամարդ խմբի համար: Գյուղացիներէ առիթով տարեգիրը շատ հակիրճ դիտողութեան և անում, թէ այդ իշխանները, բոյարները էյին «վայրագք, վորպես առյուծք, հանդեպ ոստկաց»: Բայց ազնվականներն էլ խիստ շատ էյին տուժում բոյարական ինքնիշխանութեանից, վորովհետև, հենց վոր փոխվում եր ժամանակավոր կառավարիչը, տեղի յեր ունենում ծառայող զինվորականների փոխումը:

Առանձնապես տուժում էյին այն ազնվականները, վորոնք իրենց զինվորական ծառայութեանների համար նոր էյին ազնվական դարձել: Ինչո՞ւ էյին նրանք տուժում: Վորովհետև բոլոր

իշխան-ժամանակավոր կառավարիչները ուղեւային իշխանների սերունդներն էյին: Նրանք ունեյին իրենց սեփական զինվորականները: Ժամանակավորապես իշխանութեան հասած նոր կառավարիչն իր հետ բերում եր մի ամբողջ զունդ յուրայիններ, վորոնց և ջանում եր պարզեւտրել ու տեղավորել: Իվան III-ի և Վասիլի III-ի ջանքերով ստեղծված Մոսկովայի ազնվականութեանն արհամարհելի դրութեան մեջ ընկաւ: Բավարարվում էյին միայն այն ազնվականութեան շահերը, վորը զինվորական տարր եր յեղել նախկին ուղեւային իշխանների մոտ:

Ժամանակավոր կառավարիչների ծանր հարկահանութեաններից խիստ տուժում էյին նմանապես և վաճառականները: Այդ պատճառով վաճառականութեանը նույնպես շահադրդոված եր, վոր բոյարական ինքնիշխանութեանը վերջանար: Բոյարական ինքնիշխանութեան համեմատութեամբ, վորը թուլացնում եր ուսական պետութեանը, ցարական ինքնակալութեանը պրոգրեսիվ եր, վորովհետև ինքնակալ ցարը պայքարում եր կենտրոնացված պետութեան համար, ընդդէմ բոյարական ինքնազլխութեան ու կամայականութեան: Յարական իշխանութեան պրոգրեսիվութեանը ընդդո՞ւմ եր Ննգելսը. «Փետրալիզմի քայքայման և բուրժուազիայի զարգացման մասին» հոգւածում: Ննգելսը գրում է. «...Թաղավորական իշխանութեանը (das Königtum) պրոգրեսիվ տարր եր,—այդ միանգամայն ակներև է: Նա կարգի ներկայացուցիչն եր՝ անկարգութեան մեջ, կազմավորվող ազգի ներկայացուցիչը՝ ի հակադրութեանն ապստամբող վաստակական պետութեանների բաժան-բաժան լինելուն: Այն բոլոր հեղափոխական տարրերը, վորոնք գոյանում էյին Փետրալիզմի մակերևույթի տակ, հակվում էյին թաղավորական իշխանութեան կողմը, ինչպես և թաղավորական իշխանութեանն եր հակվում նրանց կողմը»<sup>1</sup>:

Ինչ վերաբերում է փոքրահասակ ցար Իվան IV-ի և ժամանակավոր կառավարիչների միջև յեղած փոխհարաբերութեաններին, ապա նրանք կազմվում էյին բավականին յուրակերպ: Ժամանակավոր կառավարիչները հաճախ հազվի չէյին առնում ցարին: Իսկ նա հրաշալի հասկանում եր, վոր բոյարները վրասնադութեան են անում իր շահերի դէմ և թալանում են, ինչպես ինքն եր արտահայտվում, իր հոր և պապի ջանքերով կուտակված գանձը:

<sup>1</sup> К. Маркс и Ф. Энгельс, 4. XVI, с. I, 42 445:

Անդրեյ Կուրբսկուն գրած նամակներում Իվան Ահեղը մատնանշում էր.

«Ինձ ու յեղբորս՝ Գյորգիյին, սկսեցին դատարարակել, վորպես ոտարերկրացիների կամ վորպես մուրացկանների: Հագուստի և սնունդի ի՛նչ կարտուսթյուն ասես վոր չենք քաշել: Վոչ մի բան մեր կամքով չէր լինում, վոչ մի բանում մեզ հետ այնպես չէին վարվում, ինչպես հարկավոր էր վարվել յերեսանների հետ: Մի բան՝ հիշեցնեմ. պատահում էր մենք խաղում ենք, իսկ իշխան Իվան Վասիլյեվիչ Շույսկին նստած է նստարանի վրա, արժունկով հենված մեր հոր անկողնուն և վոտները նրա վրա դրած»:

Մեծ իշխանի անկողինը—Վասիլի III-ի անկողինը, իսկ այժմ, բոս ժառանգության, Իվան IV-ինը, անձեռնմխելի առարկա յեր: Յեվ այդ պատճառով Վասիլի Շույսկու նման վերաբերմունքը դեպի Իվանի անկողինը ակնհայտ վիրավորանք էր ապագա ցարին:

Իվան IV-ի մեջ աստիճանաբար ատելություն էր կուտակվում դեպի իշխաններն ու բոյարները: Այդ ատելությունն ուժեղանում էր Իվանի դատարարակության ծանր պայմանների հեռանալով: Նրա աչքի առջև տեղի էլին ունենում սպանություններ, հաճախ՝ նրա սիրելի մարդկանց մասսայական սպանություններ: Այդ արդեն պատանեկական հասակում Իվանին հասցրեց խլատ դատանության՝ ընդդեմ ժամանակավոր կառավարիչների: Յերբ 1543 թ. սպանեցին նրա սիրելի բոյարին, վորին նա ամեն կերպ պաշտպանում էր մահից, Իվանը հավաքեց բոյարներին և նրանց բավական հաստատորեն հայտարարեց, վոր նրանք, ի չար գործադրելով նրա պատանեկությունը, անորինություններ են գործում և վոր նա մահապատժի կենթարկի նրանց՝ պարագլխին: Այդ պարագլուխը կառավարիչ Անդրեյ Շույսկին էր: Իվանը հրամայեց բռնել Անդրեյ Շույսկուն և, ինչպես ասում է տարեգիրը, «հրամայեց մատնել դնա ի ձեռս շնապանաց, և շնապանք առին և սպանին գնա»:

Մակաչ գրանից հետո էլ դրությունը չփոխվեց: Իշխանության գլուխ կանգնեցին Գլինսկիները, այսինքն դեռահաս ցարի մորական ազգականները: Նրանք ցարին դատարարակում էին նույն վտգով, զարգացնելով նրա բոլոր վատ գծերը: Գլինսկիներն ամեն կերպ խրախուսում էին նրա անկարգությունները: Ապագա ցարը հաճախ ձի նստած իր ընկերների հետ միասին սլանում

էր Մոսկվայի փողոցներով, ձիու տակ դցում անցորդներին և ուրախանում գրանով: Փոխանակ պախարակելու պատանի Իվանի այդ արարքները, Գլինսկիներն, ընդհակառակը, դրանք խրախուսում էին: Նրանք ասում էին. «Ահա թե ինչպիսի քաջ, արի ցար է մեծանում»: Նրանք դրդում էին նրան մահապատժի յենթարկել իրենց համար անցանկալի մարդկանց:

Միակ լուսավոր շողը Ահեղի մանկության ու պատանեկության մեջ—այդ նրա կրթությունն էր, վոր նա ստացավ մետրոպոլիտ Մակարիի ղեկավարությամբ:

Մետրոպոլիտ Մակարին շատ կրթված մարդ էր, XVI դարի Ռուսաստանի ամենակրթված մարդկանցից մեկը: Նա Իվան Ահեղին դատարարակում էր ինքնակալ միապետի վտգով: Նա մանկությունից յուրացնել էր տալիս նրան ինքնակալության դադափարը, պետական ամուր իշխանության դադափարը, իշխանություն, վորն անբաժանելիորեն դանդում է ցարի ձեռքում: Իբր հետ միասին նա նրան տալիս էր գիտության այն հիմունքները, վորոնք կարելի յեր տալ XVI դարի պայմաններում, այսինքն՝ առանձնակի ուշադրություն էր հատկացնում ավիտարանական տեքստերի ուսումնասիրությանը, աստվածաշնչի ուսումնասիրությանը: Իվան IV-ը, բացի դրանից, ծանոթ էր հունական դիցաբանությանը, հունական, հռոմեական և բյուզանդական գրողների առանձին ստեղծագործություններին: Նա XVI դարի համար բավականին պատկառելի կրթություն ստացավ: Ինչպես ընդգծում է ժամանակակիցը, «հուսմանն զբոց ձոխ և հույժ ճարտարաբան...», այսինքն՝ բավականին պատրաստված էր այն ժամանակվա դիտության տեսակետից:

1546 թ. դեկտեմբերին Իվանը կանգնեց պետությունը ինքնուրույնաբար կառավարելու ճանապարհին:

1547 թ. հունվարին տասնյոթամյա Իվանը հանդիսավոր կերպով թագադրվեց, հայտարարեց իրեն ինքնակալ ցար:

Այդ ժամանակից սկսվեց նրա՝ պետության ինքնիշխան կառավարումը: Բայց սկզբում դեռ ուժեղ էր բոյարական ինքնիշխանությունը: Կոնստանդնուպոլսի պատրիարքն իր որհնությունն ուղարկեց Իվան IV-ին և նրան ճանաչեց որինական ցար: Այդ շատ բարձրացրեց ուսական ցարի հեղինակությունը: Հենվելով ազնվականության վրա, Իվանը վճռական կոխվ սկսեց բոյարների դեմ՝ իր իշխանությունն ամրացնելու համար: Նրա ամբողջ ներքին քաղաքականության նպատակն է ուժեղացնել ազն-

4755  
569



վահանութեան տնտեսական ու քաղաքական դերը ռուսական պետութեան մեջ և ամրացնել ինքնակալութեան կենտրոնացված իշխանութիւնը:

ՄՈՍԿՎԱՅԻ ՊՈՍԱԴԻ ԱՊՍՏԱՄԲՈՒԹՅՈՒՆԸ 1547 ԹՎԻՆ ՅԵՎ ԻՎԱՆ IV-Ի ՌԵՅՈՐՄՆԵՐԸ

1547 թ. Մոսկվայում մեծ հրդեհ յեղավ: Մոսկվան այն ժամանակ, բացառութեամբ Կրեմլի հիմնական շէնքերի, փայտաշեն էր, և այդ պատճառով այրվում էր շատ հաճախ: Բայց այնպիսի ավերիչ հրդեհ, վորպիսին 1547 թ. ամռան հրդեհն էր, դեռ յերբեք չէր յեղել: Վիթխարի քանակութեամբ շէնքեր այրվեցին Մոսկվայի կարևորագույն փողոցներում—Ռոժդեստվենկայում, Պոկրովկայում, Վարվարկայում: Այրվում էր Կիտայգորոզը, Կրեմլը՝ ցարական պալատով, բոյարական տներով ու տաճարներով: Քիչ էր մնում այրվել ինքը մետրոպոլիտը: Տարեգիրն ասում է, վոր այրվեցին մոտ յերկու հազար բնակիչներ: «...Յեվ ամենայն այդիք խանձեցան և ի բանջարանոցս՝ ամենայն բանջար և խոտ»: Հրդեհից հետո Մոսկվայի բնակիչները գրեթե կեսը մնաց առանց տունուտեղի և գույքի: Այդ արագացրեց ժողովրդական զայրույթի պոթիլումն ընդդեմ բոյարների ինքնիշխան կառավարման:

1547 թ. հունիսի վերջին տեղի ունեցավ Մոսկվա քաղաքի պոսադի ապստամբութիւնն ընդդեմ բոյարական ինքնիշխանութեան: Ժողովուրդն սպանեց Գլինսկիներից մեկին, իշխան Յուրիյին և իրեն ատելի ուրիշ բոյարների: Շատ բոյարներ Միխայիլ Գլինսկու գլխավորութեամբ, տարեզրի արտահայտութեամբ, «հոսեցան», այսինքն՝ փախան Մոսկվայից:

Ինքն Իվան IV-ը Մոսկվայից փախավ մերձմոսկովյան Վորոբյեվո դյուղը: Վերջապես, բոլոր կողմերից զորքեր հավաքելով և մի տեղում կենտրոնացնելով նա ճնշեց ժողովրդական ասպետամբութիւնը: Բայց մասսաների դժգոհութիւնը ցարին ստիպեց վորոշ զիջումներ անել, ստիպեց մտածել ներքին ռեֆորմներ անցկացնելու մասին:

1547 թ. ապստամբութիւնից հետո Իվան IV-ն իրեն մտտեցրեց նոր մարդկանց—ազնվականութեան միջից յելածներին—Փեռզայները դասակարգի ստորին խավերին, վորոնք նրա համար հենարան հանդիսացան բոյարական ինքնիշխանութեան դեմ ուղղված քաղաքականութեան մեջ:

Նրա նոր խորհրդականների մեջ մենք տեսնում ենք հոգևորականութեան ստորին խավերից յելած Միլլիստար տերտերին: Նրա կողքին տեսնում ենք Կոստրոմայի ազնվականութեան միջից յելած Ալեքսեյ Չեռոգորովիչ Ադաշևին:

Ալեքսեյ Ադաշևը ցարի սպասավորներից մեկն էր դեռևս նրա մանկութեան տարիներին: Իվանի թագավորութեան հենց սկզբից Ալեքսեյ Ադաշևը բարձր աստիճան է գրավում: Մկզբում նա ստացավ սենեկապետի պաշտոնը: Այն ժամանակ սենեկապետի աստիճանը համարվում էր ամենաբարձր պաշտոնյական աստիճաններից մեկը: Սենեկապետների մոտ էր պահվում ցարական կնիքը, վոր ծառայում էր «նրա ցարական շտապ ու գաղտնի գործերի համար»: Նրանք էլին վարում պետական ամեն տեսակ գործերը՝ թե՛ դանձարանը, թե՛ արտաքին քաղաքականութիւնը (դեսպանական պրիկազ) և այլն:

Իվանը ստեղծում է նոր Չեյրբիտնի (խնդրագրերի) պրիկազ<sup>1</sup>, վորը պետք է ընդուներ այս կամ այն անձի դեմ ուղարկված զանդաաները: Այդ դանդաաները պետք է քննվեյին Չեյրբիտնի պրիկազում և հետ ուղարկվեյին ցարին: Չեյրբիտնի պրիկազը Իվանը հանձնեց Ալեքսեյ Ադաշևին: Հենց նրան էր նա տալիս մեծ խելամտութիւն, հաստատակամութիւն և հմտութիւն պահանջող հանձնարարութիւններ:

Կուրբսիլուն գրած իր նամակում Իվանը մատնանշում էր, թե ինչու համար էր իրեն հարկավոր Ալեքսեյ Ադաշևը. «Տեսնելով ազնվատոհմ իշխանների կողմից կատարվող դալամանութիւնները, մենք վերցրինք... Ալեքսեյ Ադաշևին աղբակույտից և նրան հավասարեցրինք ազնվատոհմ իշխանների հետ, նրանից շտակ ծառայութիւն ակնկալելով»:

Ստեղծվեց ընտրովի ռադա, այսինքն՝ ցարական խորհրդականների այն խումբը, վորն անց էր կացնում բոյարական ինքնիշխանութիւնը սահմանափակելու քաղաքականութիւն: Ռադայի կազմի մեջ էլին մտնում՝ մետրոպոլիտ Մակարին, Միլլիստարը, Ադաշևը և ուրիշ:

40-ական թվականներին յերևան յեկան բոյարութեան դեմ ուղղված աղնվականական զրգածքներ: Առանձին ազնվականներ շեյրբիտնիսներ, այսինքն՝ խնդրագրեր էլին ներկայացնում Իվան IV-ի անունով: Այդ խնդրագրերում դժգոհ ազնվականներն իրենց

<sup>1</sup> Այն ժամանակվա Ռուսիան կառավարում էին պրիկազների (գերատեսչութիւնների) միջոցով:

տեսակետն էյին շարագրում ներքին ու արտաքին քաղաքականու-  
թյան մի շարք հարցերի նկատմամբ: Այդպիսի գրվածքներից,  
այսինքն՝ ազնվականական հրատարակախոսական յեյույթներից,  
ազնվականական պահանջներից ու ծրագրերից մեկն է հանդիսա-  
նում վոմն Իվաչկա Պերեսվետովի 1547—1549 թ. թ. հռչակավոր  
խնդրագիրը:

Իսկ ո՞վ էր այդ Իվաչկա Պերեսվետովը, կամ Իվան Սեմյո-  
նովիչ Պերեսվետովը: Ծագումով նա լիտվացի էր և առաջ ծա-  
ռայել էր մի քանի թագավորների: Նա յեղել էր գանադան յեր-  
կրքներում՝ ծառայել էր հունդարական թագավորին, չեխական  
թագավորին, յեղել էր լեհական թագավորի մոտ:

Իվան Պերեսվետովը յեղել էր նաև Թուրքիայում, լավ գիտեր  
թուրքական կարգերը: Իր գրվածքներում նա բազմիցս վկայակո-  
չում էր թուրքական կարգերի որինակը: Նա կարգացած ու աչ-  
խարհ տեսած մարդ էր, այն ժամանակի համեմատ կրթված:  
Պերեսվետովը Մոսկվա յեկավ դեռևս 1538 թ. և այստեղ առա-  
ջարկեց մի առանձին տեսակ, իր հնարած վահանը զինվորների  
համար, և այդ վահանի համար, վորը ճանաչվեց շատ լավ, նրան  
կարվածք տվին, այսինքն՝ նրան փոխարկեցին ազնվականի: Նա  
դարձավ Մոսկվայի մանր ազնվական:

Իվան Սեմյոնովիչ Պերեսվետովը, ազնվականական այդ առա-  
ջին գրողը, թողել է պատմական խիստ հետաքրքրական շատ  
փաստաթղթեր: Նա մի խնդրագիր գրեց Իվան ցարին: Պատաս-  
խան չստանալով, նա գրեց յերկրորդը: Բացի դրանից նա գրեց  
մի քանի գրական աշխատություններ, որինակ, «Сказание о царе  
турецком Магомете, како хоте сожещи книги греческие...»  
(«Պատմություն վասն թագավորին թուրքաց Մահմեդի, թե վոր-  
պես կամեր այրել զդրչանս հունականս»): Այդ աշխատու-  
թյունները չափազանց հետաքրքրական են: Դրանք հրատարակախոսա-  
կան աշխատություններ են, վորոնց մեջ շոշափում էյին քաղա-  
քական մի շարք կարևորագույն հարցեր, տրվում էր Մոսկովյան  
պետության ներքին դրության խիստ նրբամիտ և մանրամասն ու  
հիմնավոր վերլուծությունը, առաջ էյին քաջվում ներքին ու ար-  
տաքին քաղաքականության հարցերի վերաբերյալ բավականին  
մեծ պահանջներ:

Վորո՞նք էյին նրանց պահանջները: Խնդրագրի առաջին նա-  
խագծում, այն մոմենտին, յերբ Իվան Ահեղը դարձավ պետու-  
թյան ինքնակալ կառավարիչ, Պերեսվետովը ամենից առաջ  
հարձակվեց ազնվատոհմ իշխանների վրա, վորոնք, իշխանու-

թյան գլուխ կանգնելով, — կողոպտել են գանձարանը և վատթա-  
րացրել հասարակ ուղմիկների, այսինքն՝ ազնվականության մաս-  
տանքի դրությունը: Իր աշխատություններից մեկում նա գրում  
էր, թե այն ազնվատոհմ իշխանները, վորոնք կառավարել են  
մինչև ցարի շափահաս դառնալը, քայքայել են պետությունը,  
թուլացրել են կենտրոնացված իշխանությունը և այլն: Մասնա-  
վորապես, նա ասում էր, վոր ազնվատոհմ իշխանները ծաղր ու  
ծանակի էյին յենթարկում հասարակ մարդկանց, վորոնց ներկա-  
յացուցիչն է համարում նա իրեն: Նա գրում էր՝ «Յես, ճորտդ  
Իվաչկա Պերեսվետով» տուժեցի նրանցից: «Իսկ այժմ, թագա-  
վոր, վիրավորանքներից ու քաջըռուկից մերկ ու բորիկ և հեռի-  
ստ եմ»:

Այնուհետև նա գրում էր, վոր այդ՝ «ուռսական ցարի աղն-  
վատոհմ իշխաններն իրենք հարստանում են ու ծուլանում, իսկ  
նրա թագավորությունը աղքատացնում... իսկ ջրխատոնեյական  
հավատն ամուր կերպով չեն պաշտպանում և թշնամու դեմ կա-  
տաղորեն մահու խաղ չեն խաղում, դրանով ստում են աստծուն  
ու թագավորին», այսինքն՝ նա ուղղակի մեղադրում էր Ֆեոդա-  
լական վերնախավի բոլոր ներկայացուցիչներին այն բանում, վոր  
նրանք որավուր՝ ցարին խաբելով հարստանում են ու ծուլանում,  
իսկ թշնամիների դեմ վատ են կովում: Նրանք պատերազմի ժա-  
մանակ բանակ են կործանում, իսկ խաղաղ ժամանակ պետու-  
թյունն են կործանում. պետության կառավարման մեջ հետապըն-  
դում են միայն իրենց անձնական շահերը և թալանում են թագա-  
վորի գանձարանը:

Իսկ ի՞նչ էր առաջարկում Պերեսվետովը: Նա մասնանշում  
էր, վոր «ուղմիկներով ցարն ուժեղ է ու անվանի» և այդ պատ-  
ճառով պետք է հոգ տանել հասարակ ուղմիկների մասին: Խոս-  
քը վոչ թե դյուղացիների մասին էր, այլ ծառայող զինվորական-  
ների մասին, ազնվականության մասին էր: «Ձգինվորն պահյա  
վորպես գրագե խնամյալ և հանապաղ ուրախ արա զսիրտ նորա  
և վոչ իվիք ամյաց ի վերա նորա զթախիժ», — գրում էր Պերե-  
սվետովը:

Հետաքրքրական է նշել, վոր Պերեսվետովը բոլոր ուղմիկ-  
ների նկատմամբ միատեսակ վերաբերմունք ունենալու կոչ չէր  
անում: Նա ասում էր, վոր հարկավոր է հատուկ ուշադրություն  
յերևան բերել այն ուղմիկների նկատմամբ, վորոնք ցարի շահերն  
են պաշտպանում: «Ձգինվորն գայնոսիկ, ույք քաջաբար մար-  
տընչին ընդդեմ թշնամյաց թագավորության ի դործ պատերազ-

մի և աննկուն զորավիշ լիցին քրիստոնեյական հավատույն, զանվանս զինվորաց աշտպիսյաց բարձրացո և զսիրտս նոցա ուրախացո և գոռճիկս ի դանձարանե արքունիո հավել: Պերեովիտովը հասկանում եր, վոր «ուրախացուցանել զսիրտն» կարելի չե ղլխավորապես թագավորական դանձարանից արվող ոռճիկն ավելացնելով:

Այնուհետև նա հարց եր գնում ազնվականության դերն ուժեղացնելու մասին: «Չնոսա (այսինքն հասարակ ուղմիկներին) մերձեցես առ քեզ և համենայնի հավատացես նոցն և զանդատաց նոցա ունին զիցես համենայնի և սիրեսցես զնոսա, վորպես հայրն զորդիս յուր, և յեղիցիս առ նոսա առատաձեռն, զի առատաձեռնությունն վոչ ումեք աղքատացուցանե, այլ զսիրտս թագավորին բաղմացուցանե...»: Այլ խոսքով՝ հենց ուղմիկների հանդեպ ցուցաբերվող արքայական առատաձեռնությունն և նրա քաղաքականության իմաստությունը:

Ի՞նչ հիմնական յեզրակացություն պետք և հանել Պերեովիտովի այս ասածներից: Նա ազնվականության անունից պահանջում եր, վոր հասարակ ուղմիկները լինեն Ահեղի ուշադրության կենտրոնում: Վերջիններս պետք և լինեն ցարի հենարանը՝ նրա ինքնակալ իշխանության ամրացման մեջ: Իրա համար հարկավոր և ուղմիկներին ամեն ինչում աջակցել՝ և ոռճիկը բարձրացնել, և իրեն մոտեցնել, և վոր ցարը նրանց համար լինի վորպես հարազատ հայր:

Ի՞նչ եր առաջարկում Իվաչկա Պերեովետովն արտաքին քաղաքականության բնագավառում: Նա խորհուրդ և տալիս՝ վորպեսզի չվճարվի այն մեծ ոռճիկը, վորը նա պահանջում եր հասարակ ուղմիկների համար, անհրաժեշտ և զորք ուղարկել նոր շրջաններ նվաճելու համար, — մասնավորապես Կազանը նվաճելու համար: Պերեովետովը ընդգծում եր, վոր «Առաքյալ զորս ի վերա Կազանի, աճեցուսցես զսիրտս զինվորաց քոյով արքայական ոռճիկք և զգվանք և բարիքք վողջունիվ... և յերկիրն անդ հույժ բարեբեր...»:

Պերեովետովի և այն բոլոր ազնվական ուղմիկների հիմնական պահանջները, վորոնց շահերը նա արտահայտում եր, հանդուժում եյին բոյարության դեմ մղվող պայքարի ուժեղացմանը, բոյարական ինքնիշխանության լիակատար լիկվիդացիային, ըստ վորում՝ բավական վճռական միջոցներով կատարվող լիկվիդացիային, հասարակ ուղմիկների նշանակության ուժեղացմանը և

ակտիվ արտաքին քաղաքականության զարգացմանը: Իվան Պերեովետովը պահանջում եր բոյարության նկատմամբ վճռական միջոցների դիմել: Նա ասում եր, վոր այն բոյարներին, վորոնք ցարին մերձեցել են վոչ թե իրենց զինվորական ծառայությունների, այլ իրենց մեծազարմության շնորհիվ, վորոնք ամեն ինչում հակաձառում են նրան, դիմադրում են նրա քաղաքականությանը և ճնշում են հասարակ ուղմիկներին, «վայել և հրով այրել և այլ դաժան մահու մատնել զնոսա, զի մի բաղմացի չարիքն»:

Պերեովետովի այդ պահանջը համընկնում եր Իվան Ահեղի ներքին և արտաքին ապագա քաղաքականությանը:

Ի պատասխան ազնվականության այն պահանջներին, վորոնք մասնավորապես արտահայտված են Իվաչկա Պերեովետովի գրքվածքներում, Իվան Ահեղն իր թագավորության սկզբում ձեռնարկեց մի շարք ներքին ռեֆորմներ մտցնել, վորոնց նպատակն եր ամրացնել ինքնակալությունը և վոչնչացնել բոյարական ինքնիշխանության մնացորդները:

Ի՞նչ կար մինչև Իվան Ահեղի ռեֆորմները, ինչպե՞ս ևր կառավարվում Մոսկովյան պետությունը:

Ուղեկային իշխանների սերունդներն ունեյին իրենց գործը և իրենց ծառայող զինվորականները, բաշխում եյին հողը վասալներին և հաճախ հանդգնում եյին իրենց նույնիսկ թագավոր կոչել: Այդ իշխանները հաճախ հայտարարում եյին՝ «Մենք ևս Ռյուրիկի սերունդներն ենք, մենք ցարին հավասար ենք, ուստի և կարող ենք այնպես գործել, ինչպես ցարը»:

Պետությունը բաժանվում եր գավառների: Գավառները բաժանվում եյին վոլոստների: Բայց իշխաններին, բոյարներին պատկանող խոշոր վոպչինաները (հայրենական կալվածները) կառավարվում եյին հենց իրենց տերերի կողմից, ցարերը գավառների և վոլոստների կառավարման մեջ չեյին խառնվում: Յարը գավառներում նշանակում եր փոխանորդներ, իսկ վոլոստներում — վոլոստի պետեր: Թագավորի ներկայացուցիչը, թագավորի փոխանորդը, իսկ վոլոստում վոլոստի պետը ղեկավարում եյին գավառի այն մասի կառավարումը և դատ ու դատաստանը, վորը չեր մանում իշխանների ու խոշոր բոյարների փոռչինաների մեջ: Իրենց գործունեյության համար, կառավարման համար, դատ ու դատաստանի համար փոխանորդն ու վոլոստի պետը տեղական բնակչութունից ստանում եյին ոռճիկ՝ փողով կամ բնավարձով, վորը կոչվում եր «կեր»: Այդպիսի սովորությունը կոչ-

վում եր «կերակրում», իսկ իրենք չինովնիկները կոչվում էին «կերակրվողներ»:

Իրականում կերակրումները դառնում էին շորթում, մշտական հարկահանություններ, կաշառքներ և այլն: Հենց կաշառքները ապրուստի աղբյուր էին ծառայում փոխանորդների ու վոյստի պետերի համար: Ամեն մի փոխանորդ աշխատում էր վերջնել վորքան կարելի յե շատ: Ամեն մեկը, վոր նրա մոտ գասի յեր գնում, աշխատում էր նրան ավելի շատ տալ, վորպեսզի գործը շահի, վորովհետև գործը շահում էր վոչ թե նա, ով արդար էր, այլ նա, ով ավելի մեծ կաշառք էր տալիս:

Այդ կամայականությունը չափազանց ծանր էր անդրադատում տեղական բնակչության վրա, ամենից առաջ գյուղացիության ու պոստադի բնակչության վրա, և նրա մեջ մեծ դժգոհություն էր առաջացնում:

Սովորաբար, յերբ «կերակրվողը» մի այլ տեղ էր դնում, կամ ինչպես այն ժամանակ արտահայտվում էին՝ «կերակրումից ընկնում էր», Չեյրբիտնի պրիկազում նրա վրա հարյուրավոր գանգառներ էին տեղում: Իսկ յերբ նա տեղում նստած էր, նրա վրա գանգառ անելն անհնարին էր, վորովհետև բոլոր գանգառները հենց նրա ձեռքն էին ընկնում: Ահա թե ինչու տարեգիրն ասում է. «Ազնվատոհմ իշխանները հարստանում են քրիստոնյա ազգի արցունքներից ու արյունից քամված անմաքուր հավաքումով», այսինքն՝ հարստանում են կեղտոտ ճանապարհով, աշխատավոր բնակչության արյան և արտասուքի հաշվին:

1556 թ. «կերակրումները» վոչնչացվեցին և տեղերում բոլոր պաշտոնատար անձինք անցան գանձարանից տրվող ոսծիկի: Այդ, առաջին, թուլացնում էր բոյարների իշխանությունը և վորոչ չափով զրկում նրանց կողմից ցուցարբերվող ինքնազլխության ու կամայականության հնարավորությունից. յերկրորդ, կենտրոնացնում էր ապարատը, վորովհետև յերբ փոխանորդը կամ գորավարը ոսծիկը պետական գանձարանից էր ստանում, նա ամբողջովին կախված էր լինում ցարից և նրա մերձավոր ողնականներից: Ուստի «կերակրումների» լիկվիդացիան նշանակում էր պետական ապարատի հետագա կենտրոնացում, և հանդիսանում էր Ֆեոդալների գասակարգի ինքնակալ պետությունն ամրացնող միջոց:

Կառավարման սխեմի յերկրորդ առանձնահատկությունը այսպես կոչված գահերեցությունն էր: Ըստ այդ առանձնահատկության յուրաքանչյուր իշխանի, բոյարի գիրքը հասարակու-

թյան մեջ վորոչվում էր նրա՝ ըստ ծագման, ըստ մեծագարմության բռնած այս կամ այն տեղով և վոչ թե ըստ արժանիքների: Բոյարներից ամեն մեկը ձգտում էր ապացուցել, վոր նրա ծագումը ավելի բարձր է, և դրան համապատասխան պետական կառավարման մեջ տեղ էր գրավում: Յեթե բոյարը անվանի իշխանական տոհմից էր, ապա նա, անկախ իր ընդունակություններից, կարող էր ամենակամավոր պաշտոնը գրավել: Ընդհակառակը, «վատատոհմ ազնվականը» վոչ մի տեղ չէր մտանում: Բոյարը համաձայնվում էր պաշտոն դրավել միայն այն դեպքում, յերբ համոզվում էր, վոր իր բոլոր պետերը ծագումով իրենից բարձր են: Յեթե պարզվում էր, վոր նրա մերձավորագույն պեան իր ծագումով ավելի ցածր է կանգնած քան ինքը, — որինակ նրա պապը յեղել է բոյար, իսկ այդ պետի պապը յեղել է այդ բոյարի մոտ ազնվական, — ապա նա հրաժարվում էր պաշտոնից և խընդրադիր էր տալիս, թե իրեն «վայել չե» ծառայել այդ պետի հետ:

Գահերեցության ժամանակ ազնվականները յերբեք չէին կարող առաջ գնալ: Այդ պատճառով Ֆեոդալական գասակարգի այդ ստորին խավին էր առանձնապես սուժում գահերեցության կարգերից: Գահերեցությունը հաճախ մազալու բաների յեր հասցրնում: Որինակ, արքայական հացկերույթի ժամանակ կռիվ էր սկսվում, բոյարներից վորեե մեկը դոռում էր, թե իր նախապապը ծագումով ավելի բարձր է յեղել, քան իր սեղանակից կողքի հարևանի նախապապը և իրեն համար տեղ էր պահանջում ցարի գահին ավելի մոտ: Կանայք, որինակ, յեկեղեցում տեղի համար — թե ով պետք է ավելի մոտ կանդնի, նայած իրենց ամուսինների գիրքին — կռիվ էին սկսում: Գոյություն ունի մի պատմություն, թե պատերազմի ժամանակ յերկու առաջնորդներ գահերեցության վեճ են սկսել ուղղակի թշնամու աչքի առաջ, և այս պատճառով, իհարկե, մարտը տանու էր տվել:

Գահերեցությունը մեծ խոչընդոտ էր բարձր պաշտոնների հասնելու ճանապարհին այն մարդկանց համար, վորոնք, շնորհիվ իրենց յեղքի, շնորհիվ իրենց ռազմական քաջության և ընդունակությունների, կարող էին առաջ քաշվել: Դա, իհարկե, խանգարում էր նաև պետության ամրացմանը: Ուստի գահերեցության գեմ մղվող պայքարը ձեռնաու յեր կենտրոնացված ինքնակալական պետության ամրացման համար:

1550 թ. հոկտեմբերին ցարի հրամանով կազմվեց ազնվականական հատուկ «հաղբայակ», վորը կոչվում էր «կարվածատերերի, բոյարների յերեխաների, լավագույն սպասավորների հազա-



ըյակ»։ Ռուսական ցարի լավազույն սպասավորներից ընտրվեցին ամենալավազույնները, թվով հազար հոգի։ Այդ «հազարյակը» դրանցվեց հատուկ «հազարամատյանում»։ Իվան Ահեղի «հազարականները» ստացան մերձմտակովյան լավազույն կալվածներ։ Նրանց, վորպես իր հավատարիմ սպասավորների, Իվան Ահեղը տվեց 180 հազար դեսյատին լավազույն հող, յուրաքանչյուր «հազարական» ստացավ 150-ից մինչև 300 դեսյատին։ Նրանցից կազմվեց մայրաքաղաքի ազնվականության ընտրյալ մասը։ Այդ «հազարականները» կազմում էին ցարի անձնական զվարդիան։ Նրանք անմիջաբար յենթարկվում էին ցարին և արչավանքի ժամանակ կազմում էին այսպես կոչված «ցարի գունդը»։ Հենց նրանք էլ գրավում էին պետության հիմնական պաշտոնները՝ զորավարների, փոխանորդների, պրիկազների ղեկավարների և այլն։

Այժմ արդեն հաշվի էյին առնում վոչ թե Փետրուպի մեծագործությունը, այլ հաշվի էյին առնում, գլխավորապես, այն, թե նա արդյոք գրանցված է «հազարյակ»-ում, թե վոչ։ Այդ «հազարյակի» ստեղծումն ուղղակի հարված էր գահերեցությանը, բոյարության ինքնադիտությանը և ուժեղացրեց Իվան IV-ի կենտրոնացված իշխանությունը։

Այժմ պաշտոններ գրավում էյին առավելապես նրանք, վորոնք մտնում էյին այդ հազարյակի մեջ՝ Մոսկվայի ընտիր ազնվականությունը։

1551 թ., յերբ զորք էր ստեղծվում կազանի վրա արչադիլու համար, հարյուրյակների զլուխ դրվեցին ղեկավարներ «ռազմական գործին հմուտ» մարդկանց թվից։ Այդ դարձյալ հարված էր գահերեցությանը ամենից ավելի կարևոր ապարատում՝ ռազմական սպարատում։

Իվան Ահեղի ռեֆորմների շարքը պետք է դասել ամենից առաջ նոր դատաստանագրքի հրատարակումը 1550 թ.։ Դատաստանագրքի հիմնական հոգսը—ցարական ինքնակալության ամրացումն ու կալվածատիրոջ շահերի պաշտպանությունն է։ 1550 թվի դատաստանագրքում ամենից առաջ ընդգծվում էր, վոր ազնվականները հանվում են ազնվատոհմ փոխանորդների անմիջական ազդեցության վորտրից։ Դատաստանագրքի կետերից մեկում ասվում էր. «Համենայն քաղաքս յերկրին Մոսկովոն կուսակալք ամենևին մի իշխեսցեն դատել զորդիս բոյարաց...», այսինքն՝ բոյարի յերեխաները ցարական փոխանորդների իրավասությանը յենթակա չեն։

Բացի դրանից, ազնվականներին ու վաճառականներին թույլատրվում էր ցելովալնիկներ<sup>1</sup> ընտրել՝ փոխանորդի դատարանում մասնակցություն ունենալու համար։

Իրա հետ միասին ստեղծվում էր սիրած անձերի, կամ սիրած ավազների ինտիտուտ, վորը զբաղվում էր հարկերի դանձումով և դրանով իսկ դարձյալ սահմանափակվում էր փոխանորդների կամայականությունը։

Բացի դրանից, ազնվականների մասին յեղած հոգացողությունը դատաստանագրքի մեջ իր արտահայտությունը գտավ նրանով, վոր հատուկ կետ մտցվեց բոյարի վորդուուն, այսինքն ազնվականին ճորտ դարձնելու անկարելիության մասին։ Առաջ, յերբ ազնվականը դադարում էր ծառայելուց, նա կարող էր ճորտ դառնալ։ Այժմ 1550 թ. դատաստանագրքին այդ խտիվ արգելում էր. «Իսկ զորդիս բոյարաց ծառայողաց, և զորդիս այնույիկ, ույք վոչ են ծառայալ, մի վոք իշխեսցե ի ճորտություն դարձուցանել»։

Վերջապես, դատաստանագրքի մեջ անցկացվեցին Պերեպեկտովի առաջարկներն արտահայտող մի շարք պահանջներ՝ բարելավել զործավարությունն ու վոչնչացնել կաշառակերությունը, վորի վրա էյին հիմնված այն ժամանակի դատարանները։ Դատաստանագրքում կար մի այսպիսի մատնանշում. յեթե դատական պրիստավը, այսպես կոչված «նեղելչիկը», այսինքն այն մարդը, վորը դատարան էր կանչում, կաշառք վերցնի, ապա նրան հարկ էր «մտրակով ծեծել և կաշառքը հետ առնել յեռակի չափով» և, վերջապես, հանել պաշտոնից։

Դատաստանագրքի այս առաջարկները, սակայն, չէյին կարող լիկվիդացիայի յենթարկել զյուրացիների և քաղաքային վերնախավերի նկատմամբ դատարաններում ու պրիկազներում տեղի ունեցող կաշառակերությունն ու կամայականությունը։

Դատաստանագրքը հաստատվեց ղեմակի ժողովում, վորը կազմված էր բոյարների, ազնվականների, հարուստ վաճառականների և բարձրաստիճան հոգևորականության ներկայացուցիչներից։

1551 թ. տեղի ունեցավ յեկեղեցական ժողովը («Մտոզլավ»), վորին ներկա էր ամբողջ բարձրաստիճան հոգևորականությունը։

<sup>1</sup> Յերվայներ (ցելովալնիկներ) կոչվում էյին տեղական ազնվականական ու վաճառականական դասերի, այսինքն՝ հասարակության վերնախավի ներկայացուցիչները, վորոնք խաչն էյին համբուրում (այսինքն յերվում էյին) ի նշան այն բանի, վոր իրենք արդարությամբ կդատեն։

նը, սկսած մետրոպոլիտ Մակարիից մինչև վարդապետները: Նրան կրկին քննարկման ներկայացրին իվան Ահեղի դատաստանագիրքը: Դատաստանագիրքը հավանութուն գտավ:

Այնուհետև այդ յեկեղեցական ժողովում քննարկվում էր յեկեղեցու կանոնադրութունը, վորը կոչվում էր «Մտոգլավ»: «Մտոգլավի» հիման վրա յեկեղեցու բնագավառում անցկացվեց ուեֆորմ, վորը համապատասխանում էր յեկեղեցու կառավարման կենտրոնացման քաղաքականությանը և պայքար էր մղում արքեպիսկոպոսների ու յեպիսկոպոսների դահերեցության դեմ:

Իվան IV-ը, անցկացնելով մի շարք ուեֆորմներ, ամրացնելով իր ուժն ու իշխանութունը, շարունակեց իր պապ իվան III-ի և իր հայր Վասիլի III-ի նվաճողական քաղաքականութունը:

### ԿԱԶՍՆԻ ՅԵՎ ԱՍՏՐՈՒՍՆԻ ՆՎԱՃՈՒՄԸ

Իվան IV-ն իր նվաճողական քաղաքականութունն սկսեց իրականացնել Վոլգայի Թաթարական խանության գավթումից:

XV դարում թաթարական Վոսկե Հորդան վերջնականապես բաժան-բաժան յեղավ, մի շարք խանություններ: Կազմվեցին Կազանի, Աստրախանի, Ղրիմի խանությունները, գառվեց Սիրի-րի թագավորութունը:

Վոսկե Հորդասյում տեղի էլին ունենում մշտական, չընդհատ-վող ներքին պատերազմներ, մշտական կռիվներ խաների միջև, վորոնք հավակնութուն ունեյին Վոսկե Հորդայի խանական դա-հը ժառանգելու:

1437 թ. Վոսկե Հորդայի խաներից մեկը, Ուլու-Մահմեդը, գահընկեց արվեց: Փախչելով Վոսկե Հորդայից, նա գավթեց այն տերիտորիան, վորն անցյալում գրավել էր Բուլղարական պետու-թյունը, և այնտեղ հիմնեց Կազանի խանությունը, կենտրոն ունենալով Կազան քաղաքը:

Կազանի խանությունը ներքին կազմակերպության իմաստով Վոսկե Հորդայի պատճենն էր: Խանության գլուխ էր կանգնած խանը, նրանից հետո գալիս էլին եմիրը (առանձնապես մեծա-գարմ Ֆեոդալը), բեյերը (նման ռուսական իշխաններին), այնու-հետև գալիս էլին մուրզաները և այլն: Ֆեոդալական դասակար-գի այս բոլոր բարձր խմբերը կազմված էլին այն մարդկանցից, վորոնք հարկեր էլին ստանում բնակչութունից, այսինքն, հար-կեր էլին հավաքում թաթարական բնակչութունից և թաթարների կողմից կեղեքվող այլ ազգությունների—մարիներ, մորզվանե-րի, չուվաշների, բաշկիրների, ուզմուրաների բնակչութունից:

Իրենք Ֆեոդալներն ազատ էլին հարկերից: Ծառայության համար նրանք ստանում էլին հողային մեծ տիրապետություններ, ստրուկներ, ճորտեր: Կազանի խանը բնակչութունից հավաքում էր շատ հարկեր, վորոնք հաշվվում էլին մոտավորապես մինչև 13: Կար բնամթերքով տրվող հարկ (յասակ), գոյություն ուներ հողային հարկ, ծխահարկ և այլն: Ընդհանուր ամամբ, հար-կային գործում Կազանի խաները մեծ հնարամտություն էլին յերևան բերում: Գլխավոր հարկը—յասակը կաղմում էր աշխա-տավոր բնակչության յեկամուտի 10%—ը: Յեթե այստեղ ավելաց-նենք դեռ 12 տեսակի այլ հարկեր էլ, ապա հասկանալի կդառ-նա, վոր աշխատավոր թաթարները և խանությանը հպատակ մյուս բոլոր ճնշված ժողովուրդները ծանր լուծ էլին քաշում:

Կազանի խանության տիրապետությունները բավական ըն-դարձակ էլին:

Ֆեոդալներն ունեյին մոտ մեկուկես միլիոն դեսյատին լավա-դույն հող: Այդ հողերը մշակվում էլին կամ ստրուկների աշխա-տանքով, կամ ճորտերի աշխատանքով:

Կազանն առևտրական խոշոր կենտրոն էր: Այստեղ ամեն տա-րի տոնավաճառներ էլին սարքվում, ուր վաճառականներ էլին գալիս Խիվայի ու Բուխարայի խանություններից, Իրանից, Աստ-րախանի վաճառականները և ուրիշ.:

Այստեղ բերում էլին աղ, կտավ, վուշ Ռուսաստանից, մըր-գեր ու դինի Կովկասից ու Անդրկովկասից: Կազանի խանությունն արագորեն հարստանում էր և այստեղ էր գրավում բնակչութուն մյուս խանություններից՝ Ղրիմից, Աստրախանից և այլն:

Կազանի խանության արտաքին քաղաքականության հիմնական ուղղությունը Մոսկվայի դեմ պայքարելն էր: Կազանի խաները արշավանքներ էլին կազմակերպում Ռուսիայի վրա: Ժամանակա-կիցը դրում է, վոր Կազանի խանությունը Ռուսիային Բատիից էլ ավելի շատ էր նեղում: Խաներն առանձնապես աշխատում էլին զերիներ ձեռք բերել, վորոնք ստրուկ էլին դարձվում և խիստ արժեքավոր ապրանք էլին հանդիսանում Արևելքի համար:

Բայց արդեն XV դարի վերջում, ռուսական պետության աճող հզորության կապակցությամբ Կազանում Կազանի Ֆեոդալ-ների մեջ կազմվում է մոսկովայի կուսակցություն: Մտեղծվեց և մի ուրիշ կուսակցություն, Կազանի խանի անսահմանափակ իշ-խանության կողմնակիցների կուսակցությունը, վորը կողմնորոշ-վում էր գլխավորապես դեպի Ղրիմ, վորտեղ թագավորում էր Գիրեյների խանական զինատիրան: Մոսկվայի կողմնակիցների և

Ղրիմի կողմնակիցների միջև դաժան պայքար էր զնում գեռևս ի վան III-ի որով: Յերբ 1479 թ. մեռավ Կազանի խաներից մեկը— Իբրահիմը, Ուլու—Մահմեդ խանի թոռը, նրա յերկու վորդիններին միջև յերկպառակութունն ուժեղացավ: Նրանցից մեկը—Մուհամմեդ—Նմինը Մոսկովյան պետութեանը յենթարկվելու կողմնակից էր, իսկ մյուսը—Ալին՝ Ղրիմի խանին յենթարկվելու կողմնակից: Այդ յերկպառակչական պատերազմում փորձում էյին խառնվել թաթարա—սիբիրական ու Ղրիմի խաները:

Թուրքիան, վորն այն ժամանակ Յելքուպայի հզոր պետութուններից մեկն էր, փորձում էր խառնվել նաև Կազանի խանի դործերում, մանավանդ XVI դարի սկզբին, յերբ խանական դահի վրա նստեցրին զիրենցներից մեկին—Մաֆա—Գիրեյին (1524 թ.): Մաֆա Գիրեյը ուստական պետութեան սաստիկ թշնամի յեր: Նրա որով ուժեղացան հարձակումները Մոսկովյան յերկրի վրա: Նա համարվում էր, ինչպես ասում են թաթարական տարեգիրները, թաթարական ամենից ավելի հզոր ու մեծ թագավորը: Բայց այս խանը, վորը ձգտում էր ուստական պետութունից անկախ լինել, մեռավ 1549 թ.: Նրանից հետո մնաց նրա կինը և յերեքամյա վորդի Ուզեմիր—Գիրեյը:

Կազանի տեղական բարձր դասը, ոգտվելով փաստական խանի բացակայութունից և դահաժառանգի փոքրահասակութունից, ոգուտ քաղեց դրանից: Կազանի խանի խոյաններից մեկը—Շահ—Ալին, հենվելով Մոսկովայի աջակցութեան վրա, 1551 թ. տիրեց խանական դահին: Բայց Սիբիրի խանի ոգնութեամբ, Նոդայան Հորդայի խանի հետ միասին, Մոսկովայի կուսակցութեան հակառակորդները դավադրութուն կազմակերպեցին, տապալեցին Շահ—Ալին և թագավորելու հրավիրեցին Աստրախանի խանութեան ներկայացուցչին, Աստրախանի խանի ժառանգներից մեկին—Յեդիգերին (1552 թ. սկիզբը): Այդ ժամանակ Իվան IV-ն իր զորքերն ուղարկեց Կազանի դեմ: Ռուսական զորքերը կազմված էյին միքանի հարյուր սորելեցներից (աղեղնաձիգներ) և ամբողջովին կոտորվեցին Յեդիգերի կողմից: Այդ պարտութունն Իվան IV-ին ստիպեց ավելի լավ նախապատրաստվել և ավելի շատ զորք ուղարկել Կազանի խանութեան դեմ: Կազանի վրա արշավանքներ կատարվել են առաջ էլ, որինակ, 1506 թ., 1524 թ., 1530 թ.: Հենց ինքը Իվան Ահեղը նույնպես փորձել է միքանի անգամ արշավանքներ կազմակերպել Կազանի վրա: Առաջին արշավանքը կատարվեց 1548 թ., այսինքն՝ յերբ նա դահ բարձրացավ: Բայց արշավանքի համար ժամանակն անհաջող էր

ընտրվել: Ինչպես տարեգիրն է ասում, էր «Ջերմութուն մեծ և խոնավութուն բազում»: Շուտով վրա հասավ ճնհալքը: Վորդայի սառցաշարժն սկսվեց, իսկ ուրիշ ճանապարհներ չկային: Իվան Ահեղն ստիպված էր հետ դառնալ:

1550 թ. Իվան Ահեղը կազմակերպեց յերկրորդ արշավանքը: Բայց Կազանը գրոհով վերցնելու փորձը չհաջողվեց: Հետո դորձյալ սկսվեց ճնհալքը և նորից կարիք յեղավ նահանջելու:

Իվան Ահեղի՝ Կազանի դեմ կազմակերպած առաջին յերկու արշավանքների ձախողման գլխավոր պատճառն այն էր, վոր ուստները Կազանի տակ չունեյին ուղղական ու պարենային բաղա: Յեվ ահա յերկրորդ արշավանքից հետո Իվան Ահեղը աշխատում է ստեղծել այդպիսի մի բաղա:

1551 թ. Կազանից 30 կիլոմետր հեռավորութեան վրա հիմնադրվեց Սվիյաժսկ ամրոցը: Սվիյաժսկ ամրոցի կառուցումը հանձնարարվեց ուստ ինժեներ Իվան Գրիգորյեվիչ Վիրոդկովին, ուղղական տեսակետից անպայման տաղանդավոր մի մարդու:

Ուզլիչի անասուններում Վիրոդկովը նախապես գերաններ պատրաստեց, և 1550 թ. գարնանն այդ գերանները Վորդայով լուղարկվեցին Սվիյաժսկ: Մայիսին ամրոցը հիմնադրվեց, իսկ չորս շաբաթ անց նա արդեն պատրաստ էր: Տարեգրութեան մեջ այդպես էլ գրված է. «Յեվ ավարտեցին դադաքն յենթացս չորից շաբաթուց»: Ամրոցի պատերը կերտված էյին մեկ—մեկուկցված կաղնե գերաններից: Այսպես հիմնադրվեց բազան Կազանի դեմ պայքարելու համար: Հենվելով այդ բաղայի վրա, Իվան Ահեղը 1552 թ. սկսում է յերրորդ արշավանքն ընդդեմ Կազանի խանութեան:

Կազանի տակ ուղարկվեց 150 հազար զորք, 150 ծանր պաշարողական հրանոթներ, այսինքն՝ այն ժամանակի ծանր հրետանին: Արշավանքին մասնակցում էյին յոթ դնդեր՝ Մեծը, Առաջավորը, Պահպանականը, Արքայական գունդը և այլն: Կազանի դրաման մեջ գլխավոր դերը խաղաց հետևակը: Այն կազմում էյին սորելեցները:

Սորելեցները մշտական զորքի սկիզբն էյին, հենց այն մշտական զորքի, վորին հատուկ նշանակութուն էր տալիս Ենգելսը «Ֆեոդալիզմի քայքայումն ու կապիտալիզմի զարգացումն» անունը կրող հոդվածում, վորի մեջ նա ասում է, թե ինքնակալութեան ամբաստնողման համար, Արևմուտքում կենտրոնացված թագավորական իշխանութեան, իսկ Ռուսաստանում, հետևաբար,

ցարական իշխանութեան ուժեղացման համար անհրաժեշտ եր մշտական զորք:

Հենց այդ ել իրադրութեամբ եր ի վան Ահեղը: Նա ստեղծեց կանոնաւոր հետեակ, ստրեկեցներ ընտանիք: Ստրեկեցները հավաքադրվում էին ազատ մարդկանցից, պոսադայիներէից, այսինքն՝ արհեստավորներից, մանր առևտրականներից և այլն: Ստրեկեցները վորոշ ոտճիկ էին ստանում. սովորաբար նրանք ստանում էին 1 ուրբլի փողով՝ տան կառուցման համար և 1 ուրբլի տարեկան ոտճիկ: Բացի այդ 2 ուրբլուց նրանք ստանում էին հաղուստ, ալյուր, կրուպա և ամեն տեսակի բնամատակարարում: Մասալութեան ժամանակամիջոցին նրանց մանր հողակտորներ էին տրվում և թուլյատրվում եր գրադվել արհեստով ու առևտրով:

Հետեակը մեծ դեր խաղաց կազանի առման մեջ, վորովհետև նա լավ եր գինված: Նա ուներ ձեռքի հրազեն ձեռքնարկ-պիչչալների ձևով: Ճիշտ է, այդ զենքը պահաս կատարյալ եր և խիստ ծանր: Այդ հրացանները կամ պիչչալները կրակում էին մոտավորապես 200 քայլ վրա: Նրանց նշանոցային հասողութունը չափազանց փոքր եր:

Ինչ վերաբերում է հրետանուն («նարյադին»), ինչպես նա կոչվում եր այն ժամանակ) ապա նա բաժանվում եր թեթև ու ծանրի: Այն ժամանակվա թեթև հրետանին ներկայացնում էին մեկուկեսանոց և այլ պիչչալները: Նրանք բավականին դիպուկ կրակում էին յերկաթե ուղմբերով: Նրանց հրաձգութեան հասողութունը սովորաբար մոտ մեկ կիլոմետր եր, և նրանք ծառայում էին հակառակորդի հրետանին և կենդանի ուժը վոչնչացնելու համար:

Փայտյա, գերանակապ կամ քարե պարխալը խորտակելու համար ծառայում եր այն ժամանակվա պաշարողական կամ ծանր հրետանին: Նրանք պարսպահար թնդանութներ էին, վորոնք սովորաբար կրակում էին քարե ուղմբերով: Ռումբերի քաշը 40—50 ֆունտ եր, բայց յերբեմն կշռում էին նաև 6 փուլ:

Կային նաև հատուկ, բարձրարձակ թնդանութներ, վորոնք սովորաբար կրակում էին զաղաթնահար կրակով, «հրեղեն ուղմբերով», այսինքն՝ այնպիսի ուղմբերով, վորոնք շրջածելված էին հրարկ քաղաղութեամբ: Այդպիսի ուղմբերը այրում էին բերդապարսպի հետևում յեղած շենքերը:

Ռուսական զորքերի գլուխ էին կանգնած ի վան Ահեղի լավագույն զորավարները՝ Վորոտինսկին, Շերեմյետյովը, Մորո-

զովը և ուրիշ: Նրանց մեջ եր նաև հետագայում հայտնի դավաճան Անդրեյ Կուրբսկին:

1552 թ. ոգոստոսին ի վան Ահեղի զորքերը հավաքվեցին Միլիտանովում և շարժվեցին կազանի վրա:

Կազանն այն ժամանակվա համար բավական ուժեղ ամրոց եր: Քաղաքը շուրջանակի պատում եր գերաններից շինված կաղնե պարխալը, 5 կիլոմետր յերկարութեամբ: Նրա բարձրութունը 7 մետր եր, լայնութունը—6 մետր: Այդ պարխալի մի մասը շրջապատում եր մի խոր փոս, վորը նախանշված եր այն բանի համար, վորպեսզի հարձակվողներին խանգարեք պարսպին մոտենալու: Այդ պարսպի հյուսիսային մասում կրեմլն եր՝ գերանակապ պատերով և խանական քարե պալատով: Հենց այստեղ, խանական պալատի մոտ, գտնվում եր մի դադանի աղբյուր, վորը հնարավորութուն եր տալիս քաղաքի համար աղբյուրի ջուր ստանալու, վորովհետև քաղաքի միջով հոսող Բուլակ գետակը վատորակ ջուր եր տալիս: Կայազորը կազմված եր 30 հազար ընտիր զինվորներից՝ հենց իրեն՝ խան Յեդիգերի հրամանատարութեամբ:

Դրանից դատ, քաղաքից մոտավորապես 20 կիլոմետր հեռու, անտառներում թաղնվել էին թաթարական 20 հազար ուլան: Պարխալների վրա կար հրետանի, բայց շատ վատը: Այդ գլխավորապես յերկաթով պատած փայտյա թնդանութներ էին: Թաթարները ձեռքի հրազեն չունեին: Տեխնիկական տեսակետից ուսուկան զորքերը շատ առավելութուններ ունեին թաթարների հանդեպ:

Կազանի պաշարումը սկսվեց քաղաքի շուրջը պաշարողական ողակի ստեղծումով: Մոտավորապես յոթ կիլոմետր յերկարութեամբ կառուցվեցին հատուկ մեծ տուրեր, այսինքն՝ դրանաձև հողակողովներ՝ 3 մետր բարձրութեամբ: Նրանք միանում էին մի շղթայի մեջ և կազմում էին տեղաշարժվող պատ: Պաշարողական այդպիսի կառուցվածքները տեղավորվեցին քաղաքի պարխալներից 100 մետր հեռավորութեան վրա:

Հետաքրքրական է, վոր կազանի պաշարման ժամանակ ուսուկան ռազմական արվեստի պատմութեան մեջ առաջին անգամ կիրարկվում են ականահատութուններ: Այդ բանի համար ի վան Ահեղն արտասահմանից բերել ավելի սապյորական զործի մասնագետներ, մասնավորապես մի ինժեներ, վորը, ինչպես տարեգիրքն է ասում, եր «հույժ վարժյալ հավերածութուն քաղաքաց», այսինքն՝ քաղաքներ կործանելու մասնագետ եր: Այդ մասնագետին

Հանձնարարեցին ամենից առաջ ավերել ջրի դաղտնարանը: Նրա տակը 60 մետր յերկարությամբ ականային ստորանցք փորվեց և սեպտեմբերի սկզբին աղբյուրը ջրով մեկտեղ քարուքանդ արվեց: Այսպիսով քաղաքը զրկվեց ջրից և ստիպված էր ջուր վերցնել կեղտոտ գետակից:

Թաթարները խիստ ուժեղ դիմադրություն էյին ցույց տալիս ռուսական զորքերին: Կռվին մասնակցում էյին նույնիսկ կանայք ու յերեխաները:

Սեպտեմբերին ռուսական զորքերը նոր միջոցներ ձեռնարկեցին Կազանի պաշարումը ուժեղացնելու համար: Ձեռնարկվեց մի մեծ ական փորել, պատրաստվում էր վճռական հրետակոծություն: Մեղ ծանոթ ինժեներ Վիրոդկովի ղեկավարությամբ ռուսական զորքերը կառուցում էյին պաշարողական հատուկ մի աշտարակ: Աշտարակը բերվեց ջրով՝ մասերի բաժանված վիճակում: Նա Կազանի բերդապարսպից 5 մետրով բարձր էր: Այդ վիթխարի աշտարակի վրա, վորը բացի այդ կարող էր տեղաշարժվել, դրին հրետանի՝ 10 ծանր պիշչալներ, մոտ 50 մեկուկեսանոց պիշչալներ, և նստեցրին հրացանավոր ստրելեցիներ: Աշտարակը մեծ վնաս պատճառեց Թաթարներին: Նրա պաշտպանության տակ առաջ շարժեցրին ամրությունները, և ռուսական զորքերը միջանի տասնյակ մետրի վրա դտնվեցին ամբողջ պարսպներից:

Հոկտեմբերի 1-ին ուժեղ կրակ բացվեց պարսպահար թնդանոթներից, այսինքն՝ ծանր հրետանուց, միաժամանակ պատրաստվում էր վիթխարի ստորանցք: Գետնի տակ դրվեցին յերկուական: Ականների վրա գնաց 240-ական փութ վառոդ: Հոկտեմբերի 2-ին տեղի ունեցավ ականի պայթյունը: Կազանի բերդապարսպը վճռական տեղերում պայթեցվեց և պատերի մեջ առաջացած այդ բացվածքներով ռուսական բանակի հիմնական ուժերն 1552 թ. հոկտեմբերի 2-ին առաջ նետվեցին: Իսկապես, այդ էր վճռեց Կազանի բախտը: Իայց մարտերը տեղի էյին ունենում նաև հենց բուն քաղաքի մեջ: Թաթարներն ուժեղ դիմադրություն էյին ցույց տալիս, ամեն մի փողոց մարտով էր զբաղվում: Կազանը կողոպտվեց և հրդեհվեց: Այնուհետև նորից կառուցված քաղաքում վերաբնակեցրին ռուսական շատ ծառայող զինվորականները—աղնվականների ու վաճառականների, իսկ Թաթարներին թուլթարտրվեց ապրել միայն մերձքաղաքային արվարձանում:

Իայց այդ Կազանի խանության հպատակեցման միայն սկիզբն էր:

Թաթարական բնակչությունը միջանի տարի դիմադրություն էր ցույց տալիս ցարական զորքերին: Դեռ 3—4 տարի պայքար էր տեղի ունենում Կազանի շրջակայքում: 1552—1556 թ. թ. Ժամանակաշրջանում Կազանի հողի վրա միջանի ապստամբություններ յեղան ընդհան ռուսական նվաճողների: Ապստամբները բնաջնջեցին ցարական միջանի ջոկատներ: 1554 թ. Թաթարների ապստամբությունը ճնշելու համար ռուսական ցարին հարկ յեղավ իշխան Կուրբակու գլխավորությամբ Կազանի նախկին խանությունը շարժել մոտ 30 հազար զորք: Միայն միջանի տարի անց Իվան Ահեղին վերջնականապես հաջողվեց տիրել Կազանի խանությանը և իրեն յենթարկել այդ ապստամբ բնակիվող բոլոր ժողովուրդներին,—թաթարներին, մորզվաններին, շուվաչներին, մարիններին, բաշկիրներին, ուղմուրտներին և այլ ժողովուրդներին: Կազան քաղաքը վերածվեց ռուսական բերդի և դարձավ ռուսական Փետոդայների տիրապետության պատվարը: Գրավված հողերը արվում էյին կալվածատերերին, կառուցվում էյին Չեթոկսարի (1556 թ.) Նովոիոկչայսկ (1573 թ.) Տեայուչի (1578 թ.) և ուրիշ բերդերը, գործնց մեջ ոթեանում էյին Մոսկովյան զորքերը: Այդ միջոցներն ապահովեցին ռուսական կալվածատերերի վերջնական ամրացումը նվաճված շրջաններում:

Իվան Ահեղն առանձին ուշադրություն հատկացրեց բաշկիրական տերիտորիաների գավթմանը: Մասնավորապես, այդ նորատակով 1574 թ. նա հիմնադրեց Ուֆա բերդը: Նույն այդ ժամանակ այլ տեղերում հիմնադրվեցին մի շարք ավելի մանր քաղաքներ, այդ թվում Ուրթում քաղաքը: Ինրդերը ծառայում էյին վորպես բազա ռուսների առաջխաղացման համար, այդ շրջանների վերջնական նվաճման և ռուսական Փետոդայների կողմից տեղական բնակչության ճնշման համար:

Կազանի և Կազանի խանության նվաճման հետևանքով ռուսական կալվածատերերը ստացան մոտ մեկուկես միլիոն դեսյատին հրաշալի, Պերեսվետովի արտահայտությամբ «հույժ պիտանի» հող: Վաճառականները ստացան առևտրական շահավետ ճանապարհ, վորը Վոլգայի ու Կասպից ծովի վրայով Ռուսաստանը կապում էր Արևելքի տարբեր շրջանների հետ:

Այդ ժամանակ Աստրախանի Թաթարական խանության մեջ տեղի յեր ունենում ներքին մեծ յերկպառակություն: Պաները ծեծկատում էյին մեկ մեկու: Թաթարական խաների մի մասը ռուսական բանակատեղում էր: Աստրախանի Փետոդայների մեջ գոյություն ուներ յերկու կուսակցություն՝ Մոսկովայինը և Ղրիմ-

Թուրքականը: Կազանի առումից հետո հաղթում է Մոսկվայի կուսակցութունը: Աստրախանին հարևան Նոդայան Հորդայում դեկավարութունը պատկանում էր Մոսկվայի կողմնակիցներին: Աստրախանում այդ ժամանակ նստած էր Յամգուրչեյ խանը, Մոսկվայի հակառակորդը: Մոսկվայի կուսակցութունը, հենվելով նոդայիների ոգնության վրա, վորոչեց տապալել Յամգուրչեյին և նրա տեղը նստեցնել Մոսկվայի կողմնակիցին: Նրանց ոգնության յեկավ Իվան IV-ը:

1554 թ. Իվան Ահեղի առաջին արշավանքին 30 հազար զորք ուղարկվեց ընդդեմ Աստրախանի, ընդդեմ Յամգուրչեյ խանի: Պետք է ասել, վոր աստրախանցիները չպաշտպանեցին իրենց մայրաքաղաքը՝ նրանք փախան: Ինքը Յամգուրչեյն իր հպատակներից ավելի առաջ փախավ Ազով՝ Թուրքական սուլթանի պաշտպանության ներքո: Ռուսները ցար նշանակեցին Դերբիշ-Ալին, Աստրախանի՝ յերբեմնի տապալված մի ցարի, Մոսկվայի կողմնակիցին, նրա մոտ թողին կազակներ մի շուկատ՝ պաշտպանության համար, և նրանից յերդում առան, վոր նա ամեն տարի հարկ կվճարի ռուսական ցարին՝ 40 հազար ալթին դրամով (ալթինը հավասար է յերեք կոպեկի) և 3 հազար մեծ ձուկ: Բացի դրանից, Մոսկովյան զորավարն առաջ քաշեց այսպիսի մի պահանջ. յեթե այդ խանը մեռնի, ապա աստրախանցիները նոր ցարը պիտի վերցնեն Մոսկովյան ցարից:

Բայց 1556 թ. դարնանը Դերբիշ-Ալին անցավ Ղրիմի խանի կողմը, վորին հովանավորում էր Թուրքական սուլթանը: Ռուսական պետության դեմ կատարված այդ յիլույթը առիթ ծառայեց, վոր Իվան Ահեղը սարելեցների նոր ջոկատներ ուղարկեց, վորոնք վերջնականապես նվաճեցին Աստրախանը: Այսպիսով, Վոլգայի ամբողջ մեծ ճանապարհը անցավ Մոսկովյան պետության ձեռքը: Կասպիականի ափերի նվաճումը ապահովում էր հետագա առաջխաղացումը դեպի Իրան, Անդրկովկաս և դեպի Հյուսիսային Կովկաս:

Ձգտելով առաջ շարժվել դեպի արևելք, Իվան Ահեղն աշխատում էր, և բավական հաջող, իրեն յենթարկել Հյուսիսային Կովկասի տերիտորիան: Այստեղ կային շատ մանր իշխանիկներ, վորոնք կռվառում էին իրար հետ: Այդ իշխանիկները կախման մեջ էին գտնվում Ղրիմի խանից: Յերբ Իվան IV-ը զբաղեց Կազանն ու Աստրախանը, նրանք բոլորն աշխատում էին ստանալ նրա ոգնությունը՝ Ղրիմի Գերեյներից պաշտպանվելու համար: XVI

դարի կեսերին չերքեզական և կարարդինական մի շարք իշխաններ ծառայության անցան Իվան IV-ի, Ահեղի մոտ: Հետագայում, 1560 թ. Իվան IV ցարը նույնիսկ ամուսնացավ կարարդինական մի իշխանի աղջկա—Մարիյա Տեմրյուկովնայի հետ:

Իր աներոջը, այսինքն Մարիյա Տեմրյուկովնայի հորը պաշտպանելու պատրվակով Իվան IV-ը՝ Ահեղը Թերեքի վրա կառուցեց մի շարք բերդեր, վորոնք Հյուսիսային Կովկասում Ռուսական պետության հետագա ծավալման բազա էլին ծառայում:

Այսպիսով, Թաթարների, մարիների, չուվաշների, բաշկիրների և Պովոլոչեյի ու Հյուսիսային Կովկասի մյուս ժողովուրդների հպատակեցմամբ Ռուսական աղջային պետութունը սկսում է վերածվել բազմազգ, այսինքն՝ ինքնակալության կողմից կեղծվող զանազան ժողովուրդներից կազմված պետության:

Իվան Ահեղը փորձում էր առաջ խաղալ դեպի արևելք, դրավել Իրանի տերիտորիան, բայց ստիպված էր նահանջել:

Պարսկական տերիտորիան նվաճելու փորձերը ցույց են տալիս, վոր Մոսկովյան պետութունն արդեն այն ժամանակ այնքան ուժեղ էր, վոր իր առաջ խնդիր էր դնում նվաճել այնպիսի մի հզոր հարևանի, ինչպես պարսկական շահն էր:

### ԿՍՊԵՐԻ ԸՆԳԱՐՁՍԿՈՒՄՆ ԱՐՏԱՍԱՀՄԱՆԻ ՀԵՏ

XVI դարի կեսերին Ռուսական պետութունը ընդարձակում է իր կապերն Արևմտյան Յեվրոպայի հետ:

XV դարի վերջի և XVI դ. սկզբի աշխարհագրական մեծ հայտնագործություններն ապահովեցին համաշխարհային պատմության Թատերաբեմի վրա նոր տերությունների յեյնելը:

Իտալիայի փոխարեն առաջին տեղը դուրս յեկան Իսպանիան ու Պորտուգալիան, վորոնք զբաղեցին դեպի Ամերիկա տանող ուղին և դեպի Հնդկաստան տանող նոր ճանապարհները: Համաշխարհային առևտրական ճանապարհների՝ դեպի Ատլանտյան օվկիանոս կատարված տեղաշարժումն իրենց շահերին ծառայեցրին Իսպանիան ու Պորտուգալիան: Անգլիան նոր ճանապարհ է վորոնում դեպի Արևելք—դեպի Հնդկաստան: Անգլիական վաճառականները նոր շուկաներ են վորոնում և փորձում են Հնդկաստան թափանցել հյուսիսային ճանապարհով՝ Պորտուգալիայից ու Իսպանիայից անկախ:

XVI դարի կեսերին հայտնի ծովագնաց Սեբաստիան Կաբոտի նախաձեռնությամբ Անգլիայում կազմվեց «Ձեռնարկու—վաճառա—

կաններէ ընկերութիւնն՝ անհայտ և նույնիսկ ծովային ճանապարհով ցարդ չայցելված յերկրներ, հողեր, կղզիներ, պետութիւններ և տիրապետութիւններ հայտնագործելու համար»։ Անգլիացիները փորձում են անցնել այն ճանապարհով, վոր մեղանում կոչվում է Հյուսիսային Մեծ ճանապարհ, այսինքն՝ այն ճանապարհով, վորը յուրացված է միայն բոլշևիկներէ կողմից այժմ, սոցիալիզմի դարաշրջանում։ Անգլիացիները՝ հյուսիսային այդ ճանապարհը բացելու փորձերը վերջացան անհաջողութեամբ։ Հյուսիսի աշխարհագրութիւնը բոլորովին անհայտ էր նրանց. անգլիացիներն, ինչպէս հարկն է, չգիտէին նույնիսկ նորմալական ակերը։ Չնայած դրան, Լոնդոնի միջանկ վաճառականներ 1553 թ. հավաքեցին 6 հազար ֆունտ ստերլինդ գումարի կապիտալ։ Այդ փողով պատրաստվեց մի արշավախումբ, բաղկացած յերեք նավից՝ «Բարի Հույս», «Լավ Ակնկալութիւն» և «Յղվարդ—Լավ Չեռնարկութիւն»։ Արշավախմբի գլուխ էր կանոնած վոմն Սյու Ռեյլորը։ Նա մեծապարմ մի աղնական էր, ուղիական գործին մեծ գիտակ։ «Յղվարդ—Լավ Չեռնարկութիւն» նավի կապիտանն էր Ռիչարդ Չեսլորը, շատ խելք, մեծ հարգանք վայելող մի մարդ։ Վորպես փորձված ծովագնաց և մեխանիկայի ու աստղաբաշխութեան գիտակ, Չեսլորը նշանակվեց ամբողջ արշավախմբի գլխավոր ղեկավար։ 1553 թ. մայիսի 11—ին արշավախումբն ուղևորվեց հեռավոր ճանապարհորդութեան։ Արշավախմբին մասնակցում էին 116 մարդ, այդ թվում 11 վաճառական։

1553 թ. ոգոստոսի սկզբին փոթորիկը ծովում ցաքուցրիվ արեց անգլիացիներէ խախտա առադաստանավակները։ Յերկու նավ խորտակվեցին Կոլա թերակղզու՝ Մուրմանի ափի մոտ։ Ամբողջ անձնակազմը, մոտ 100 մարդ, վոչնչացավ լնդախտից ու ստանամանիքներից։ Արշավախմբի պեան որաղիքը վարում էր մինչև 1554 թ. հունվարը։ Միայն հետևյալ ձմեռը տեղական բնակիչները գտան խորտակվածների հետքերը և տեսան, վոր յերկու նավ «խարխա են ձգել կանգառանում, իսկ նրա վրայի մարդիկ, բոլորը մեռած են, և նրանց վրա շատ ապրանք կա»։

1553 թ. ոգոստոսի վերջին արշավախմբի վերջին նավը մտավ Հյուսիսային Դիվնայի գետաբերանը, մոտեցավ անհայտ ափերի, վորտեղ գտավ իրեն անձանոթ ձկնորսների։ Այդ ձկնորսները գուրա յեկան Ռուսական պետութեան բնակիչներ։ Չեսլորն իմացավ, վոր նա փոխանակ Հնդկաստանի, վորը ղեկի ինքն էր դրավում առևտրական շահերի մեջ անկշտում անգլիական վաճառա-

կաններին, ընկել է Մոսկովիա, վորի մասին անգլիացիները բավական մշուշապատ պատկերացում ունեյին։

Իվան IV-ը, իմանալով, վոր ինչ-վոր ուտարեկրացիներ նավով Մպիտակ ծով են յեկել, հրավիրեց նրանց իր մոտ Մոսկովա։ 1553 թ. նոյեմբերին Չեսլորն ուղևորվեց Մոսկովա և այնտեղ մնաց միջանի ամիս։ Նրան ընդունեց ցարը, և նա հայրենիք վերադարձավ ուսական ցարի՝ անգլիական թագուհի Մարիյա Արյունահեղին դրած բարեկամական նամակով։

Իր ճանապարհորդութեան արդյունքների մասին Չեսլորի արած հաղորդումից հետո «ձեռնարկու—վաճառականների» ընկերութեանն անգլիական թագուհուց ստացավ Ռուսական պետութեան հետ առևտուր անելու բացառիկ իրաւունքի հատուկ հրովարտակ։ 1555 թ. սկզբին կազմվեց անգլիական վաճառականների հատուկ «Մոսկովյան ընկերութիւն», վորն իր ձեռքում մենաշնորհի առարկա դարձրեց Ռուսաստանի հետ կատարվող առևտուրը։ Նրա կազմի մեջ մտան 207 բաժնետերեր։ Նրանց թիվը հետագայում արագորեն աճում է և 1565 թ. հասնում է մինչև 400 մարդու։ Առևտրական ամուր կապեր են հաստատվում Ռուսաստանի և Անգլիայի միջև։ Ռուսաստանից Անգլիա են արտահանվում կաշի, ձարպ, մեղրամոմ, ձյութ, մորթիներ, կանեփ, վաւ և այլն։

Անգլիացիները փորձում էին Մոսկովիայում դերմանական և հորանդական գործվածքները փոխարինել իրենցով, անգլիականով։ Նրանք Ռուսաստան էին բերում մահուղ, շաքար, թուղթ և դանազան ուղիւմթերքներ։ Իվան IV-ի թագավորութեան վերջում Հյուսիսային Դիվնայի գետաբերանում, ուր սովորաբար գալիս էին անգլիացիները, կառուցվեց ուսական առաջին ծովային նավահանգիստ Արխանգելսկը։ Անգլիացիներն Իվան Ահեղից մեծ արտոնութեաններ ստացան։ 1555 թ. անգլիական առևտրական ընկերութիւնը Իվան IV-ից շնորհագիր ստացավ իրավունք ունենալու ամբողջ Ռուսաստանում ազատ ու անմաքս առևտուր անելու համար։ Անգլիական վաճառականներն ազատվեցին առևտրական մաքսերից. նրանց համար սահմանեցին հատուկ դատարան, յենթարկված հենց իրեն ցարին. նրանք իրավունք ունեյին ապրանքներ տեղափոխել ուր վոր ուղենային, ընդհուպ մինչև Մամարղանդ։ Սովորաբար նրանց ճանապարհն այս էր՝ Մպիտակ ծովով, սուր Վոլոգդայով ղեկի Յարոսլավ և այնտեղից Վոլգայի վրայով նավերով մինչև Կասպից ծովը։ Այսպէս էին նրանք կապվում Արևելքի հետ։

1557 թ. անդլիական վաճառականների մի ամբողջ արշավախումբ «Մոսկովյան ընկերության» գործակալ Անտոնի Ջենկինսոնի գլխավորությամբ չորս նավերով անցավ Աստրախան: Արշավախումբն այնտեղից շարժվեց դեպի Արևելք, Սիվա ու Բուխարա, և այնտեղ վաճառեց իր ապրանքները: 1562 թ. նույն այդ Ջենկինսոնը Վոլգայի ճանապարհով Իրան անցավ և պարսկական շահից մեծ արտոնություններ ստացավ անդլիական վաճառականների համար: 1558-ից մինչև 1581 թ. ընկած ժամանակաշրջանում յոթ արշավախումբ պատրաստվեց դեպի Արևելք: Նրանցից մեկը՝ Բուխարա և վեցը—Իրան:

Անդլիական վաճառականները Իրան ելին ներմուծում մահուդ, բրդե գործվածքներ, կլայեկ, պղինձ, պղնձե անոթներ: Իրանից նրանք արտածում էին հում մետաքս, տախտեղ, իմրիր և այլ համեմունքներ, բրինձ մարզարիտ, թանգաղին քարեր, գորգեր և այլն: Անդլիացիներն իրենց ապրանքները վաճառում էին շատ բարձր գնով: Այդ առևտրի հետևանքով նրանք չափազանց մեծ շահույթներ էլին ստանում: Անդլիական ընկերության գործակալներից մեկի զեկուլյով մենք կարող ենք հաստատել, վոր այն մահուդը, վորը Անդլիայում կտորը վաճառվում էր 6 Փունտ ստերլինգով, Նիթնի-Նովգորոդում գնահատվում էր 17 Փունտ ստերլինգ: Դուրս է գալիս, վոր անդլիացիները ստանում էին համարյա 300% շահույթ: Ռուսաստանում կատարած առևտրից անդլիացիները պակաս շահ չէին ստանում, քան իսպանացիները Հնդկաստանում կամ Ամերիկայում:

Ինչ վերաբերում է Ռուսական պետության վրայով դեպի Ասիա տանող ճանապարհին, ապա այն բավական յերկար էր: Հարկավոր էր անցնել մինչև Սպիտակ ծով, իսկ Սպիտակ ծովից—Աստրախան: Սպիտակ ծովից մինչև Աստրախան տանող այդ ճանապարհը ձմեռը սովորաբար տևում էր 46 օր: Բայց այդ ճանապարհն, այնուամենայնիվ, ավելի կարճ էր, քան թե իսպանացիների՝ մինչև Հնդկաստան կամ Ամերիկա տանող ճանապարհը, վորն այն ժամանակվա հաղորդակցության միջոցների պայմաններում նրանցից խլում էր 2—3 ամիս: Իրենք անդլիական վաճառականներն ընդգծում էին, վոր իրենց համար բավականին հարմար է Իրանի հետ առևտուր անել Մոսկովիայի վրայով: Նրանք տոում էին, վոր ավելի արագ կապ ունեն Արևելքի հետ, քան այն ունեն իսպանացիներն ու պորտուգալացիները: Անդլիացի Մ. Լոկիի օրագրում, վորը վերաբերում է 1575 թ., առանձնա-

պես ընդգծվում է Անդլիայի՝ Ռուսաստանի հետ կատարած առևտրի ոգուտը:

1555 թ. մի ամբողջ նավատորմ ռուսական առաջին դեսպան Ռսիպ Նեպեյայի հետ միասին ուղևորվեց դեպի Անդլիա: Ծանր ճանապարհորդությունից հետո Ռսիպ Նեպեյան վերջապես ընկավ Անդլիա: Նա համաձայնության յեկավ անդլիական թագուհու հետ, վոր ռուս վաճառականներն իրավունք են ստանում անմաքս առևտուր անելու, տներ կառուցելու պահեստների համար, ստանում են շատ արտոնություններ Անդլիայում: Այնտեղից նա իր հետ բերեց զանազան վորակավորման շատ մասնադետներ: Գորսեյը՝ առևտրական ընկերության գործակալ, հետո անդլիական դեսպան Ռուսաստանում, իր «Հուշիկներ XVI դարի Մոսկովիայի մասին» գրքում գրում է, վոր Իվան IV-ը «Անդլիայից բերել ավելի հմուտ շինարարներ, ճարտարապետներ, հյուաններ ու վորմնադիրներ, վոսկերիչներ, բժիշկներ, դեղագործներ և այլն»:

Նույն այդ ժամանակ Անդլիայից Ռուսաստան յեկավ բժիշկ, մաթեմատիկոս և աստղաբաշխ Բոմելին: Ճարտար մարդ լինելով, նա բախական արագորեն առաջ գնաց Իվան Ահեղի օրով, իր համար հեղինակություն նվաճեց և գործում էր վորպես թույներ պատրաստող՝ թագավորին դավաճանողներին թունավորելու համար:

Հարկավոր է նկատել, վոր Իվան Ահեղը, ինչպես ընդգծում են բոլոր ոտարեկրյա գրողները, շատ սիրալիր էր դեպի ոտարեկրացիները, չափազանց հոգ էր տանում, վոր ոտարեկրացիները դային Ռուսաստան, նրա հետ գործարար, առևտրական և ամեն տեսակի այլ կապեր ունենային, ծառայության մնային Ռուսաստանում: Նույնիսկ գերմանական լրտես Հենրիխ Ծտադենը<sup>1</sup>, լինելով Իվան Ահեղի թշնամին, ասում էր այդ մասին:

Ծտադենն ընդգծում էր, վոր Ռուսաստանում այլերկրացիները մեծ արտոնություններ են ստանում, նրանց մեծ ուճիկ են տալիս, լավ տներ են հասկացնում Բովլանովիայում (արվարձան՝

<sup>1</sup> Հենրիխ Ծտադեն, գերմանացի, Ռուսաստան յեկավ վորպես գերմանական կայսրի լրտես, նպատակ ունենալով պարզել Ռուսաստանի սաղմական թուլությունները, Ռուսաստանի նվաճման ճանապարհները և այլն: XVI դարի Մոսկովիայի մասին գրած նրա զիբը մի զեկուցադիր էր գերմանական կայսրին այն մասին, թե ինչպես կարելի յե նվաճել Մոսկովյան պետությունը: Գրքի առաջին զուլը ամբողջովին նվիրված է դրան: Յերկրորդ զուլը կոչվում է «Մոսկովիան կայսերական պրովինցիա դարձնելու պլանը»: Ծտադենը մանրամասն շարադրում էր, թե ինչքան հարկավոր է մարդ ուղարկել Սպիտակ ծովը



այլերկրացիներին համար Յաուզայի գետաբերանում), տալիս են թանգազին կաֆտաններ՝ տակը սամուցրի մետաքս, հաղուստ և այլն: Ողեսները ցարական մենաշնորհ էյին, բայց ոտաբերկրացիներին թույլատրվում էր սեփական ողեսներ պահել: Ամեն տեսակի մաքսատուրքերից նրանք ազատվում էյին: Դրա փոխարեն ոտաբերկրացիներին մահման պատիժ էր սպառնում, յեթե ուսներն իմանային, վոր նրանք մտադրվում են հետ վերադառնալ իրենց հայրենիքը: Իվան Ահեղն ու աղնվականները յեկվոր ոտաբերկրացիներից պահանջում էյին Ռուսական պետությանը ծառայել հավատարմությամբ ու մինչև վերջը:

1548 թ. սկզբին Իվան Ահեղն արտասահման ուղարկում մի գոմն գերմանացի Շլիտտեյին, վորը նրա մոտ ծառայության մեջ էր գտնվում, վորպեսզի նա իր համար մարդիկ բերի՝ Ռուսաստանում ծառայելու: Շլիտտեն այնտեղ վարձում է 123 մարդ, վորոնց մեջ կային ռազմական ինժեներներ, բժիշկներ և այլն: Բայց նրանց բոլորին էլ Լիվոնիան թույլ չտվեց անցնել:

Լիվոնիան ամեն կերպ ջանում էր արդելակել ուսներին յեղքը ղեպի Արևմուտք, խանգարում էր այլ յերկրների հետ հատատեյիք նրանց կապերին: Այդ պատճառով նա Ռուսաստանի համար հավաքադրված մասնաղետներին թույլ չտվեց անցնել:

### ԼԻՎՈՆԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՍԸ

Ռուսական արտասահմանյան առևտրի զարգացման հետ սերտ կապի մեջ է գտնվում նաև Լիվոնական սրտերազմը: Դա Իվան Ահեղի արտաքին քաղաքականության ամենախոշոր միջոցառումն էր:

Ռուսաստանին նավահանդիստ էր հարկավոր Բալթիկ ծովի ափին, Փիննական ծոցում: Հենց դրան էլ ձգտում էր Իվան IV-ը, բայց միայն Պյոտր I-ին հաջողվեց XVII դարի սկզբին յեղք ստանալ ղեպի Բալթիկ ծովը: Ռուսաստանի՝ Արևմտյան Յեկրոպայի հետ ունեցած կապն ուժեղացնելու համար, արտասահմանի հետ

զբավելու համար, ինչ է պետք Պսկովն ու Նովոգորոդը դավթելու համար: Նա Ռուսաստանում հայտնվեց 1564 թ.: Սկզբում աշխատում էր վորպես ղեկավարական պրիկապի թարգման, յեղել է պանդոկապետ, այնուհետև դարձավ կալվածատեր, հետո ծառայության մտով Իվան Ահեղի մոտ, յեղել է սպրիչնիկ: Ուրիշնիայից ոգավեց, վորպեսզի հարստանար ինչպես պետքն է: Դրանից հետո դարձավ վաճառական և, վերջապես, հետ գնաց արտասահման: Այնտեղ նա Ռուսաստանի նվաճման իր պլանը ներկայացրեց գերմանական կայսրին:

կատարվող ռուսական առևտուրն ընդլայնելու համար նավահանդիստ էր հարկավոր վոչ թե Սպիտակ ծովի, այլ Բալթիականի ափին: Հենց դրա մեջ էլ թաղնված է Լիվոնական պատերազմի պատճառը:

Լիվոնիան դանվում էր Մոսկովիայից Արևմտյան Յեկրոպա տանող ճանապարհների վրա: Փիննական ծոցի հարավային ծովափը և Ռիդայի ամբողջ ծոցն անմիջականորեն սահմանակցում էյին Արևմտյան Յեկրոպայի հետ: Լիվոնիան չէր թույլատրում անցնել այն մարդկանց, վորոնց արտասահմանում հավաքադրում էյին Ռուսաստանի համար, նա խանդարում էր ուստական առևտրին: Նարվան ու Ռեվելը և, վերջապես, Ռիգան, բայց ստանձնապես Ռեվելն ու Նարվան, — առևտրական յերկու խոշորագույն քաղաքներ, — ամեն կերպ ջանում էյին իրենց ձեռքը վերցնել Ռուսաստանի առևտուրն արտասահմանի հետ և ուստ վաճառականներին հնարավորություն չէյին տալիս, վոր ապրանքներն իրենք վաճառեն արտասահմանում: Ռուս վաճառականները զբղվում էյին վոչ միայն ապրանքներից, այլ հաճախ նաև կյանքից: Լիվոնցիներն ամեն կերպ կասեցնում էյին արտասահմանյան ապրանքների առաքումը ղեպի Ռուսաստան և առանձնապես արդելակում էյին ղեկը առաքումը, վորը Ռուսաստանն ստանում էր Անգլիայից:

Ի՞նչ էր ներկայացնում իրենից Լիվոնիան: Լիվոնիան — այդ այժմյան Եստոնիայի, Լատվիայի և մասնակիորեն Լիտվայի շրջանն է: XII դարի վերջին այդ շրջանը՝ Ռիդայի և Փիննական ծոցերի ափերը մուտք գործեցին գերմանական շուն-ասպետները, ինչպես անվանում է նրանց Մարքսը: Նրանք իրենց յենթարկեցին սեղական բնակչությանը — լիվերին, Եստերին, լատերին և ուրիշ: Նրանք հախչտակեցին Ռիդայի ծոցի ամբողջ ափը և Փիննական ծոցի հարավային մասը: Զավթած հողերում նրանք կազմակերպեցին սուսերակիրների իրենց զինվորա-ասպետական որդենը և իրենց Լիվոնիա պետությունը:

Գերմանական ասպետ-ազնվականները համարվում էյին կուսակրոններ և միավորված էյին ավանյուրբիստների ու կողոպտիչների կրոնա-ազգական մի կազմակերպության մեջ, վորը կոչվում էր որդեն: Մերձբալթյան հողերը հափշտակող գերմանական ազնվականների գլխավոր որդենը կոչվում էր Տևտոնական: Լիվոնիայի նվաճողները կազմեցին իրենց որդենը, վորը համարվում էր Տևտոնականի բաժանմունք և ստացավ Մուսերակիրների որդեն անունը — նրանց խորհրդանիշը յերկու խաչաձևված սրերն էյին: 1237 թ. յերկու որդենները միավորվեցին:

Գերմանական ասպետները, զավթելով Մերձբայթյան հողերը, փորձում էին առաջ խաղալ դեպի ուսական տերիտորիան, բայց 1242 թ. Չուզ լճի սառուցների վրա իշխան Ալեքսանդր Նեվսկին կործանիչ հարված հասցրեց գերմանական անզգամներին և նրանց հետ շարժեց ուսական հողից:

Լիվոնական դեպանները 1554 թ. յեկան Մոսկովիա, վորպեսզի վերանորոգեն դեռ Իվան IV-ի նախորդների կողմից 1503 թ. կնքված զինադադարը: Իվան IV ցարը Լիվոնիայից պահանջում էր վճարել այն հարկը, վորը պետք է վճարեցին ուսներին նովգորոդցիների կողմից XIII դարում Ջախջախված սահմանամերձ Դերպաի մարզի գերմանական ասպետները: Նա պահանջում էր նաև Արևմտյան Յելթոպայի հետ Բալթիկ ծովի վրայով ազատ առևտուր անելու իրավունք Ռուսաստանի համար, — ստարերկրացիների ազատ անցկացում դեպի Մոսկովիա և հրաժարում Լեհաստանին ու Լիտվային ողնելուց այն դեպքում, յեթե Ռուսաստանը պատերազմ սկսի նրանց դեմ:

Գերմանացիներն Իվան IV-ին խարեցին, նրանք խորամանկության դիմեցին: Համաձայնվելով ընդունել պահանջը, վորպեսզի ժամանակ չահեն, նրանք 1557 թ. ուղղական դաշինք կնքեցին Լեհաստանի հետ: Այն ժամանակ Իվան Ահեղը պատերազմ սկսեց Լիվոնիայի դեմ: Նա հույս ուներ հաջողութուն ունենալու, լավ տեղյակ լինելով Լիվոնիայի ներքին թուլության մասին: Լիվոնիայի ներքին թուլության պատճառն այն էր, վոր այնտեղ շատ ուժեղ էին հակասութունները մի կողմից՝ Մերձբայթյան հողերը նվաճողներին—գերմանական Փեդդալներին և մյուս կողմից՝ եստոնական ու լատիչական ճնշված գյուղացիության միջև: Մորը առևտրութունը դեպի շուն—ասպետները տարեցտարի աճում էր նրանց կողմից տանջվող յերկրի բնիկ բնակչության մեջ: Դրանից զատ, Լիվոնիայում սուր հակասութուններ գոյութուն ունեցին Փեդդալներին և այնպիսի քաղաքների վաճառականական վերնախավի միջև, ինչպես էյին Ռիդան, Ռեվելն ու ուրիշները:

1558 թ. հունվարին Իվան IV-ը ուսական զորքերը Պսկովի կողմից շարժեց դեպի Լիվոնիայի տերիտորիան:

Լիվոնիայի դեմ մղվող պատերազմը սկզբում բավական հաջող էր Իվան Ահեղի համար: Ռուսական զորքերը զբաղեցին մոտ 200 վերստ տարածությամբ տերիտորիա, իսկ 1558 թ. ապրիլից թնդանության ուժեղ պաշարման յենթարկեցին Նարվան: Նարվան այն ժամանակ առևտրական խոշոր նավահանդիստ էր գրեթե

Փիննական ծոցի ափին, այստեղ էյին դաշխ վաճառականները Փրանիայից, Հոլանդիայից, Անգլիայից, գերմանական քաղաքներից: Բայց ամենազլխավորն այն էր, վոր Նարվան հանդիսանում էր Բալթիկ ծովի Փիննական ծոցի բանային: Ռուսներն ամենոր միջանի հարյուր յերկաթե ու քարե ուժերը էյին բաց թողնում քաղաքի վրա: 1558 թ. մայիսի սկզբին Նարվան անձնատուր յեղավ: Իվան Ահեղն առատ ավար ստացավ—ռեվելյան, հանդայան և այլ վաճառականների ապրանքները:

Նարվայի առումից հետո Իվան Ահեղը ցնծում էր: Նա անհպաղ ամբարցրեց Նարվան, վորովհետև հրաշալի հասկանում էր, վոր այն կսկսեն հետ առնել:

Նարվայում ուսների հեղինակութունն ամբարցնելու համար անցկացվեցին քաղաքական բնույթի միջոցառումներ: Իվան Ահեղը Նարվայի բնակիչներին իրավունք տվեց ազատ, անմաքս առևտուր անելու ամբողջ Ռուսաստանում, Նարվան ազատեց զինվորական սթևանումներից, արգելեց զորքերին կողոպտել բնակիչներին: Չորքը պետք է պաշտպաներ Նարվայի բնակիչների շահերը: Նարվայի շուրջն ապրող գյուղացիներին Իվան Ահեղը տվեց հացահատիկ ցանքի համար, հաց՝ ապրուստի համար և ձիեր՝ դաշտերը մշակելու համար: Այդ պատճառով էլ Նարվա քաղաքի «հասարակ մարդիկ» պաշտպանում էյին Իվան Ահեղին և բոլորովին չէյին ուզում նորից անցնել գերմանական տիրապետության տակ: Այդ հեռատես քաղաքականութունը ցույց է տալիս Իվան Ահեղի պետական ու դիվանագիտական մեծ ընդունակութունները:

1558 թ. հուլիսին Իվան IV-ը յերկրորդ հաղթանակը տարավ: Դերպալը, կամ այլ կերպ՝ Յուրկը, Լիվոնիայի խոշոր առևտրական քաղաքն ու քաղաքական կենտրոնն, անցավ ուսների ձեռքը: Ռուսներն այստեղ զբաղեցին մեծ քանակությամբ հրետանի—ավելի քան 500 թնդանոթ:

Այստեղ Իվան Ահեղը նույն քաղաքականութունն էր անցկացնում, ինչ վոր նաև Նարվայում: Դերպալի բնակիչները ստացան ինքնավարութուն, ազատ առևտրի իրավունք: Կողոպտել փորձող զինվորները յենթարկվում էյին պատժի, ընդհուպ մինչև մահապատիժը: Բնակիչների մեջ հեղինակութուն նվաճել, վորպեսզի իր իշխանութունն ամբարցներ Լիվոնիայում, —ահա թե ինչի յերձգտում Իվան Ահեղն իր գորավարներին միջոցով:

Մենք ունենք ստարերկրացիների մի շարք հաղորդադրութուններ Լիվոնիայի դեմ Ռուսաստանի մղած պատերազմի առ-

թիւ: Տրանսական մի հայտնի գրող, յեկեղեցական նշանավոր ռե-  
ֆորմատոր Կալվինին ուղղած նամակում հաղորդում էր, վոր  
մոսկովյան թագավորը շուտով կգրավի ամբողջ Լիվոնիան: Նա  
գրում էր, վոր Իվան Ահեղը—սագմատենչ ու քաջարի մարդ է:  
«Յեթե Յեվրոպայում վորեւէ մի տերութեան վիճակված է անել,  
այդ հենց սրան է վիճակված»,—մատնանշում էր նա յեզրափակ-  
ման մեջ, նկատի ունենալով Ռուսաստանը:

Յեվրոպական տերութեանները հասկացան Մոսկովյան պե-  
տութեան նշանակութեանը, նրա ուժն ու հզորութեանը, վորն  
արտահայտված էր մասնավորապէս արտաքին ակտիւ քաղաքա-  
կանութեան մեջ:

Լիվոնական տարեգիր Բալտագար Ռյուսովը էր ժամանա-  
կագրութեան մեջ նշում էր, թէ ինչու ռուսներին հաջողվեց մի  
շարք հաղթանակներ տանել Լիվոնիայում: Ռյուսովը, չնայած  
վոր Ռուսաստանի քաղաքական թշնամին էր, ընդգծում էր ռու-  
սական զինվորների առանձնակի քաջութեանը. «Առաջին, ռու-  
սները աշխատող ժողովուրդ են: Անհրաժեշտութեան դեպքում  
ուսնն անխոնջ է ամեն տեսակ վտանգավոր ու ծանր աշխատան-  
քում... նրանք բերդում դիմանում են մինչև վերջին մարդը,  
ավելի շուտ կհամաձայնեն, վոր առանց բացառութեան ամենքն  
էլ մեռնեն, քան ուղեկցուբով ոտար յերկիր գնան»: Նա ընդ-  
գծում է ռուսական զինվորների քաջութեանը, սոկոնութեանը  
և անխոնջութեանը և ասում, վոր Ռուսաստանի՝ Լիվոնիայի դեմ  
մղած պատերազմի հաջողութեանների պատճառն այդ էր: Նա  
ինքն էլ համեմատում է ռուսներին գերմանացիներին—Լիվոնիայի  
տերերի հետ. «Իսկ գերմանացիների համար բոլորովին միևնույն  
է, թէ վորտեղ կապրեն, միայն թէ հնարավորութեան լինի լի-  
ստ ուտել ու խմել»:

Լեհական շլյախտիչներից մեկը, պատմարան Գեյդենշտեյնը  
(յեհական թագավոր Ստեփան Բատորիի անձնական քարտուղա-  
րը), նույնպէս Ահեղի յերգվյալ թշնամին, 1584 թվին գրեց «Հու-  
շիկներ Լիվոնական պատերազմի մասին»: Այդ հուշիկներում նա  
ընդգծում էր, վոր Ահեղը ստեղծեց վիթխարի մի տերութեան:  
Նա նշում էր, վոր ռուս ժողովուրդը պատերազմի ժամանակ ան-  
հաժառաղի հաստատակամութեան է ցույց տվել բերդերը պաշտ-  
պանելիս և պահպանելիս, իսկ փախստակներ ռուսների կողմից  
ընդհանրապէս շատ քիչ են յեղել: Նույնիսկ ինքը յեհական թա-  
գավոր Ստեփան Բատորին, ինչպէս պատմում է ստարերկրացի

Պոսեվինը, զարմանում էր ռուսական զինվորների քաջութեան  
վրա:

Ամբողջ Յեվրոպան և ամենից առաջ Ռուսաստանի՝ Բալթիկ  
ծովի կողմից մերձավորագույն հարեանները, այսինքն՝ Գերմա-  
նիան, Շվեդիան, Իսպանիան և Լեհ-լիտվական պետութեանը մեծ  
յերկյուղով եյին նայում Ահեղի հաջողութեանների վրա, վորով-  
հետեւ Շվեդիան ու Իսպանիան, ինչպէս և Լեհ-լիտվական պետու-  
թեանը իրենք եյին շահագրգռված Լիվոնիայի զավթմամբ: Այդ  
պատճառով նրանք Ահեղի նկատմամբ վարում էյին ակնհայտորեն  
անբարյացակամ քաղաքականութեան:

Լիվոնիան 60-ական թվականների սկզբին «կուլախնձոր» էր  
հյուսիս-արեւելյան Յեվրոպայի խոշոր տերութեանների միջև:  
Նա, ով իշխում էր Լիվոնիային, իշխում էր Բալթիկ ծովի վրա,  
նա էր ձեռքումն էր պահում Ֆիննական ծոցը: Տարբեր պետու-  
թեանների շահերը խճճվում էյին Լիվոնիայում, և պատահաբար  
չէ, վոր լիվոնական հարցը—այդ XV դարի յերկրորդ կեսի Յեվ-  
րոպայի համար դիվանագիտական հիմնական հարցն էր:

Վախենալով Բալթիկ ծովում Ռուսաստանի ձեռք բերած հա-  
ջողութեաններից, գերմանական վաճառականներն ու Ֆեոդալնե-  
րը սկսեցին մտածել Ռուսաստանին բրկադայի յենթարկելու մա-  
սին: Նրանք արգելեցին կայսերական քաղաքների առևտուրը  
Նարվայի հետ: Ճիշտ է, դրանից ավելի շատ տուժում էյին իրենք  
կայսերական քաղաքները, քան ռուսականները, բայց այդ՝ գեր-  
մանացիների կողմից Ռուսաստանը բրկադայի յենթարկելու բա-  
ցահայտ փորձ էր: Այդ—պատերազմի մեջ խառնվելու և Մոս-  
կովիայի պետութեան արտաքին քաղաքականութեանը դիմադրու-  
թեան ցույց տալու փորձ էր:

1560 թ. ոգոստոսին Վալկա քաղաքի մոտ տեղի ունեցավ Լի-  
վոնական որդենի վերջին ճակատամարտը ռուսական զորքերի  
հետ: Լիվոնացիները ջախջախվեցին: Ռուսական բանակին հաջող-  
վեց բավական արագ գրավել Լիվոնական պետութեան խոշոր  
բերդերից մեկը—Ֆելլին քաղաքը և զավթել միքանի ավելի մանր  
բերդեր ևս: Նարվայի, Իերպտի ու Ֆելլին բերդի գրավումից հե-  
տո Լիվոնիայի հիմնական մասը ռուսների ձեռքն անցավ:

Ռուսական զորքերի հաղթութեանների հետևանքով տեղի  
ունեցավ հենց իրեն որդենի քայքայումը: Այն ժամանակ հզոր  
դարձած Շվեդիան իր տիրապետութեան տակ է առնում Ռեվել-  
ը—Լիվոնիայի խոշորագույն ծովային նավահանգիստներից մե-  
կը: Լեհաստանն իր տիրապետութեան տակ է առնում Ռիդան:

Իսանիան վերցնում և Պերնովը: Լիվոնիայից մնում և միայն փոքրիկ Կուրլանդիան: Նա հայտարարվեց Լեհաստանից Փետրարական կախվածութան մեջ գանվող դքսութուն:

Ակալեց Լիվոնիայի համար մզվող պայքարի նոր ետապը: Ռուսները ստիպված էին արդեն պայքարել վոչ թե մենակ Լիվոնական որդենի դեմ, այլ միքանի պետութունների՝ Լեհաստանի, Շվեդիայի ու Իսանիայի դեմ: Շվեդիան այն ժամանակ բռնում էր վոչ միայն այժմայն Շվեդիայի տերիտորիան, այլև Ֆինլանդիայի տերիտորիան և ամենահզոր պետութունն էր Յեկրոպայի հյուսիսում: Լեհաստանն այն ժամանակ դաշն էր կապել Լիտվայի հետ, ստրկացրել էր Բելոռուսիան և Ուկրաինան: Նա Ռուսական պետութան ամենաուժեղ թշնամիներից մեկն էր և ձգտում էր նոր տերիտորիաներ գավթել:

Հենվելով իրենց դաշնակիցների վրա, լիվոնցիները 1561 թ. նորից կոխվ սկսեցին Մոսկովյան պետութան դեմ: Հենց 1561 թ. Լեհաստանը պատերազմ հայտարարեց Ռուսաստանին:

1562 թ. դեկտեմբերին Իվան Ահեղը վիթխարի քանակութամբ զորք կենտրոնացրեց Մոժայսկի տակ (մինչև 80 հազար): Բայց միացյալ զորքերից ուսաները մի շարք պարտութուններ կրեցին: Յերբ գլխավոր հրամանատար Կուրբսկին Նեվիլի տակ ջախջախվեց, Ահեղի մեջ կասկած ծագեց գլխավոր հրամանատարի և մյուս զորավարների դավաճանութան մասին: Նա մտնեց անձամբ գլխավորել ուսական զորքը: 1563 թ. փետրվարին Իվան Ահեղին հաջողվեց առնել Պոլոցկը, վոր այն ժամանակ հանդիսանում էր բելոռուսական խոշոր քաղաք, գրավված Լեհաստանի կողմից, և հասնել մինչև Վիլնո: Այսպիսով, Ահեղը տիրեց Լեհլիտվական պետութան բավականին զգալի տերիտորիային:

Շուտով բացվեց խոշոր վոտչինիկ-բոյարների դավաճանութունը: 1564 թ. հունվարին ուսական զորքի աչքի ընկնող պետերից մեկը—Անդրեյ Կուրբսկին, վորը Դերպտի ուսական կայսգորի հրամանատարն էր, փախավ վորպես դավաճան լեհական թագավորի մոտ: Նա փախավ վոչ մենակ, այլ 12 ուրիշ դավաճան-բոյարների հետ, վորոնք առաջ ուսական բանակի խոշոր հրամանատարներն են յեղել: Կուրբսկին անհայտդ իր ողնութունն առաջարկեց լեհական թագավորին, սկսեց հրամանատարութուն անել 15 հազար մարդուց բաղկացած լեհական զորքերի ջոկատին, հարձակվեց ուսական տերիտորիայի վրա, թալանեց Վելիկիյե Լուկին և հետ գնաց: Կուրբսկին լեհական թագավորից պահանջում էր անհայտը հարձակվել Մոսկովիայի վրա: Նա դըր-

դեց նաև Ղրիմի խանին հարձակվել Մոսկովիայի վրա, այսինքն պայքարի ակտիվ դավաճանական քաղաքականութուն էր վարում Մոսկովիայի դեմ:

Անձամբ Իվան Ահեղին հասցեագրած նամակում Կուրբսկին խիստ սուր կերպով էր հանդես գալիս Ահեղի քաղաքականութան դեմ, հարձակվում էր Մոսկովայի իշխանների ամբողջ ցեղի վրա, հայտարարելով, վոր նա յեղել է յեղբայրասպան, արյունախում ցեղ, «ի ծնե դաժան որինազանցութան ու հեշտասիրութան մեջ»: Ահեղին նա անվանում էր տիրան և առանձնապես նրա վրա հարձակվում էր այն բանի համար, վոր նա իրեն ողնականներ էր հայտարարում վոչ թե ազնվագրամ բոյարութունից, այլ քահանայորդիներից, հասարակ ժողովրդից: Դրանով Կուրբսկին արդարացնում էր իր դավաճանութունը: Նամակը վերջանում է մի հաղորդագրութամբ, թե այն գրված է «Վորոնբուրում, իմ թագավոր Ավդուստի քաղաքում»:

Ի պատասխան այդ լիտի նամակին Իվան Ահեղը 105 եջից բաղկացած մի յերկար գրութուն է շարագրում: Այդ իշխան Կուրբսկուն ուղղված այն նշանավոր գրութունն է, վորի մեջ Իվան Ահեղը «հաճոյախոսութուններ» էր փոխանակում իշխանի հետ, կոչելով նրան շուն ու դավաճան:

Իվան IV-ն ընդգծում էր, վոր ազնվատոհմ իշխանների մահատախտիկներն արդարացի յեն, վորովհետև դավաճանների հետ այլ կերպ չի կարելի վարվել:

Կուրբսկու և մյուս զորավարների գործած դավաճանութունը Լիվոնիայի դեմ մղած պատերազմում խթան հանդիսացավ, վոր Իվան IV-ն ավելի վճռական պայքարի անցներ խոշոր վոտչինիկ-բոյարների դեմ, վորոնք ձգտում էին նրա ինքնակալ իշխանութունը սահմանափակել:

### Ո Պ Ր Ի Չ Ն Ի Ա Ն

1564 թ. դեկտեմբերին Իվան IV-ն ընտանիքով անսպասելիորեն մեկնեց Կոյմենսկոյե դյուղը, իսկ այնուհետև ուղևորվեց ավելի հեռու—Ալեքսանդրովսկայա ավանը, վորը Մոսկովայից 115 կլիոմետրի վրա յե (այժմ Ալեքսանդրով քաղ.): Այնտեղից նա նամակ գրեց բոյարներին, թե այլևս չի կարող հանդուրժել այն գրութունը, վորը գոյութուն ունի Ռուսիայում:

Իվան IV-ը նամակ գրեց նաև Մոսկովայի պոստեին, վոր բոյարները դավաճանում են նրան ու ինքնազլխութուն անում, իսկ

վաճառականներից ու ժողովրդից նա դժգոհ չի, «նրանց դեմ դայրույթ չի տածում»:

Մոսկվայի պոստդը պաշտպան կանգնեց Իվանին: Նամակի ընթերցման ժամանակ հրապարակում գոռում ելին, վոր ցարը վերադառնա ու թազավորութուն անի, վոր նրանք թազավորի դավաճաններին չեն պաշտպանում և իրենք կլսնչացնեն նրանց: Յարի մոտ ուղարկվեց բոյարներից, բարձր հոգևորականութունները, պրիկազները մարդկանցից ու վաճառականներից կազմված մի դելեգացիա: Նա համաձայնվեց վերադառնալ ու թազավորել այն պայմանով, վոր լիակատար ազատութուն ունենա դատաստան տեսելու դավաճան-բոյարների դելին: Բոյարները համաձայնութուն տվին դրան ել: Իվան Ահեղը վերադարձավ 1565 թ. հունվարին և սկսեց անցկացնել ուղրիչնիկնայի իր քաղաքականութունը:

Ուղրիչնիկնայի պայքարի միջոց հանդիսացավ այն կալվածատեր ազնվականութան համար, վորի վրա հենվում էր Իվանը, պայքար, վորը մղվում էր հողին և ճորտ դյուզացիներին տիրելու համար, կենտրոնացված ինքնակալ իշխանութան հետագա ամրապնդման համար ընդդեմ իրենց վոտաչինաներում վորպես փոքրիկ թազավորներ նստած բոյարների, ընդդեմ ինքնակալ իշխանութունը սահմանափակելու նրանց ձգտման:

Պետութան մի մասը (հիմնականում պետութան կենտրոնական և հյուսիսային շրջանները, նախկին ուղելային իշխանութունները և այդ իշխանութունների կենտրոնները՝ Մոսկովը, Սուզդալը, Շույան, Դալիչը, Վոլոգդան, Ստարայա Ռուսան, Իելեվը, Վլադիման, Կոզլովսկը և ուրիշները) Ահեղի կողմից գառվեց վորպես ուղրիչնիկնայ: Այդ մարզի բնակիչները կոչվում էին ուղրիչնիկնայներ, այսինքն՝ հատուկ մարզիկ, իսկ այդ մարզի ծառայող պիսկարականները կոչվում էին ուղրիչնիկնայ (ուղրիչնիկնայի ծագում է ռուսական обречь բառից, այսինքն բացի):

Ի՞նչ էլին ներկայացնում իրենցից ուղրիչնիկնայը: Դրանք Իվան Ահեղի շոկոլի մարդիկն էին: Ուղրիչնիկնայի մեջ դասվեց ընտիր ազնվականութան մի հազարյակը: Այնուհետև ավելացվեց ելի հինգ հազար: Այսպիսով, մոտ վեց հազար ուղրիչնիկնայ առանձնացվեցին վորպես ազնվականութան հատուկ արտոնյալ խումբ, վորը Ահեղից ստացավ կալվածքներ և կազմեց նրա զինված հենարանը: Այդ զորքի շեֆը և դավադրութան ղեկավարը Մալ-

յուսա Սկուրատովն էր (Պլեչչեյեվ-Բելսկին), վորը Ահեղի աջ ձեռքն էր հանդիսանում:

Ի՞նչպիսի ազնվականներ առանձնացվեցին ուղրիչնիկնայի համար: Այն ազնվականները և բոյարության այն մասը, վոր ցարն առնում էր իր պաշտպանութան տակ, վորպես իր հավատարիմ սպասավորների: Նա ամեն կերպ ձգտում էր, վոր իրենց հարստությամբ ու սպառազինությամբ նրանք գերազանցեն բոլոր մնացյալներին: Ուղրիչնիկնայը ցարին հավատարմութան հատուկ յերգում էլին տալիս: Նրանք յերգվում էլին, վոր կհաղորդեն ամենքի մասին, ովքեր կփորձեն ցարի դեմ վորևէ վատ բան մատածել, նրանք յերգվում էլին ուղաձուգ միջոցներով պայքարել պետութան ու թազավորի դավաճանների դեմ:

Ուղրիչնիկնայը նույնիսկ արտաքուստ տարբերվում էլին զեմսկի մարդկանցից: Նրանք հատուկ համազգեստ էլին կրում՝ սովորաբար սև կաֆտան շքեղ ու գունազուգուն հագուստի վրայից և թամբին կից շան դուրս ու ցախավել: Այդ խորհրդանիշն էր այն բանի, վոր նրանք պետք է հոտոտելով իմանան, հետախուզելով գտնեն ցարի թշնամիներին և ավլեն-թափեն բոլոր դավաճան-բոյարներին:

Իվան Ահեղն ուղաձուգ պայմաններում պաշտպանում էր իր հավատարիմ սպասավոր-ուղրիչնիկնային, պաշտպանում էր նույնիսկ այն ժամանակ, յերբ նրանք անարդարացի էլին: Այդ մոմենտան է արտացոլված Լեբմոստովի հայտնի «Յերդ վաճառական Կալաչնիկովի մասին» ստեղծադրածութան մեջ: Յարի կոզմից սարքված բռնցքամարտի ժամանակ վաճառականը սպանում է ուղրիչնիկին: Իվանը մարտից առաջ պարզե խոստացավ հաղթողին. «Ով հաղթի, ցարը նրան կպարզեատրի, իսկ ով կհաղթվի, ասաված նրան թողութուն կտա»: Մակայն, յերբ վաճառական Կալաչնիկովը սպանեց ուղրիչնիկին, Իվան Ահեղն հաղթողին մի փոքր այլ տեսակի պարզե և տալիս:

Я топор велью наточить - наострить,  
Палача велью одеть - нарядить,  
В большой колокол прикажу звонить,  
Чтобы знали все люди московские,  
Что и ты не оставлен моей милостью!...

<sup>1</sup> Կհրամայեմ կացին սրել-սրացնել,  
Կհրամայեմ դահին հազցնել-զարգարել,  
Կհրամայեմ մեծ զանգակը հնչեցնել,  
Վոր մոսկովյան բոլոր մարդիկ իմանան,  
Վոր իմ շնորհին դու ել ես դարձել արժան...

Ահա թե ցարական ինչպիսի շնորհ եր սպասում հաղթող-  
վաճառական Կալաչնիկովին այն բանի համար, վոր նա համար-  
ձակվեց սպանել ուրիշնիկին:

Պետութայն մյուս մասը, վորը չէր մտել ուրիշնիկայի մեջ,  
կոչվում եր դեմչինա:

Ձեմսկի մարզիկ—այդ բոյարների ու ազնվականների այն  
մասն էլին, վորոնք զբլված էլին Ահեղի պաշտպանութունից,  
վորոնց դրալի մասն աչքից ընկած եր: Դրանք, զլիաւորապես,  
ուշելային իշխանների սերունդներն էլին, իշխանիկները և այն  
բոյարները, վորոնք անց էլին կացնում ինքնազլխութայն քաղա-  
քականութուն, վորոնք պայքարում էլին Ահեղի ստեղծած կենտ-  
րոնացված ինքնակալ պետութայն դեմ:

Ձեմչինան կառավարում էլին Իվան Բելսկին ու Իվան  
Մստիսլավսկին: Իվան Ահեղը նրանց զլխին թաղավոր դրեց թա-  
թարական նախկին արքայորդի Սիմյոն Բեկրուլատովիչին:

Պետութայն տերիտորիայի մի մասն առանձնացվեց ուրիշնի-  
կայի համար այն նպատակով, վորպեսզի այնտեղից վտարեն բո-  
լոր բոյարներին, ուղելային իշխաններին և նրանց լավազույն հո-  
դերը հանձնեն ուրիշնիկներին: Բոյարներից ու իշխանիկներից  
խլում էլին զուլքը և ուղարկում ծայրամասերը, յեթե չէլին  
սպանում տեղն ու տեղը: Ընդամենը վտարվեցին մոտ 12 հազար  
ընտանիք:

Իվան Ահեղի առաջարկությամբ աչքից ընկած իշխանների  
ու բոյարների կալվածքները հարքունիս էլին գրավվում: Ուրիշ-  
նիկայի մեջ անուված քաղաքների յեկամուտները զնում էլին ուր-  
իշնիկների ոռոկի վրա:

Հենց բուն Մոսկվայում կային աչքից ընկած փողոցներ: Ար-  
տոնյալ դրութայն մեջ էլին Արբատը, Սիվցե Վրաժոյկը և Նի-  
կիտակայա փողոցի մի մասը: Վոզդվիժենկայում, Արբատի մոտ,  
վորտեղ այժմ Լենինի անվան գրադարանի նոր շէնքն է, կառուց-  
վեց ուրիշնային պայտս Իվան Ահեղի համար, վորը հրաժար-  
վեց ազրել Կրեմլում:

Իվան Ահեղը ուղղակի հայտարարում եր, վոր ուրիշնիկայի  
նպատակը—այդ «մարդուկներին տնտղելը», սղուզելն է, և վոչ  
միայն տնտղելը, այլև փոմանց ջարդելը:

Բուրժուական միջանի պատմաբաններ ուժգնորեն ապացու-  
ցում են, վոր Ահեղը—այդ կիսահիվանդ, խեղցնոր մարդ է, վո-  
րը տառապում եր հալածվելու ու կասկածոտութայն մանխայով:  
Այդպիսի պնդումը չի համապատասխանում պատմական իրակա-

նությանը, վորովհետև դավաճանությունն իրոք բույն եր դրեկ  
բոյարների մեջ: Զուր չէ, վոր ժողովրդական մի յեբզում ճիշտ  
կերպով յերգվում է, թե դավաճանությունը նստած է ցարի կող-  
քին, «միևնույն սեղանի շուրջը, ուտում—խմում է միևնույն տե-  
ղից, հազուստ է հագնում միևնույն մահուղից»: Միայնում է  
նաև Պոկրովսկին, վոր կասկածում եր դավաճանութայն առկա-  
յության մեջ: Դավաճանների զլխին դաժան դատաստան տեսնե-  
լը միանգամայն անհրաժեշտ եր ու ճիշտ: Դավաճաններին հար-  
կավոր եր վոչնչացնել, վորպեսզի ստեղծվեր ու ամբացվեր կենտ-  
րոնացված հզոր պետութուն:

1566 թ. կայացավ Ձեմսկի ժողով: Այդ ժողովում կային 374  
մարդ: Նրանց մեջ կային 29 բոյար, մոտ 200 ազնվական, 32 ար-  
քեպիսկոպոս, 12 «հյուր» (խոշոր վաճառականներ), միջանի  
տանյակ մարդ ուրիկագների ծառայող անձնակազմից:

Հիմնական հարցը, վոր քննարկում եր Ձեմսկի ժողովը, Լի-  
վոնական պատերազմի հարցն եր: Ի՞նչպես վարվել այտուհետև,  
չարունակե՞լ պատերազմը, թե՞ վոչ: Յեվ ահա թե ինչ պարզվեց  
վաճառականներն ու ազնվականները կողմնակից էլին պատերազ-  
մին: Որինակ, ազնվականները պարզ ու վորոշ հայտարարեցին.  
«Մեզ թվում է, վոր պետությունը պետք է պաշտպանի այն քա-  
ղաքները (այսինքն՝ լիվոնցիներից խլվածները), իսկ մենք, նրա  
ձորտերը, նրա պետական գործի համար պատրաստ ենք»:

Իսկ բոյարներն այսպես հայտարարեցին. «...պատերազմը  
չարունակել հարկ կլիներ... բայց յեթե թաղավորն ուզենա ցա-  
րի հետ անձամբ հանդիպել ու համաձայնության դալ, ապա կա-  
րելի չէ այդ գործում իրար միջև պայմանագիր կապել»:

Իվան Ահեղը այդ ժողովի որինակով համոզվեց, վոր բոյա-  
րությունն իսկապես դավաճանների բույն եր: 1567 թ. բոյարների  
չրջանում հայտարարվեց դատադրություն Իվան IV-ի և նրա քա-  
ղաքականութայն դեմ:

Ոտարերկրացի Շլիխտինդը իր գրքում հաղորդում է, վոր  
1567 թ. 30 մեծազամ անձեր Իվան Շույսկու զլխավորությամբ  
գրավոր պարտավորություն վերցրին Իվան IV-ին ուրիշնիկների  
ղեկավարների հետ մեկտեղ մասնել յեհական թաղավոր Սիլցի-  
մունդ Ավգուստի ձեռքը, յեթե միայն նա չարժվեր Մոսկվայի վրա:

Իվան IV-ի կատարած հետաքննությունը ցույց տվեց, վոր  
դավաճանությունը խոր արմատներ եր դրել բոյարութայն մեջ:  
Մասնավորապես պարզվեց, վոր Նովգորոդի հոդեոր իշխանու-  
թյուններն էլ, դաշնակցած ցարին մոտիկ միջանի ուրիշնիկների

հեռ, ինչպես իշխան Վյազեմսկին և ուրիշ, դավադրութեան ակտիվ մասնակիցներն էյին: Դավադրութեան հայտարարումից հետո մահապատժի յենթարկվեցին միքանի հազար բոյարներ ու աչքից ընկած աղնալիկաններ: Մահապատժի յենթարկվեցին նաև դավաճանութեան մեջ մերկացված միքանի ուրիշներ: Գլխավոր դավադիր Իվան Ծույսկուն Ահեղն ինքն սպանեց դանակով:

Իվան Ահեղը բոյարներից յերգում էր առնում, վոր նրանք չեն փախչի Լեհաստան կամ Լիտվա: Յերգմանն ի հավելում պահանջվում էր վճարովի առդիր 15 հազար ռուբլու գումարով վողկի Իվան Ահեղի ժամանակի փողով (1913 թ. կուրսով՝ մոտ մեկուկես միլիոն փոսկի ռուբլի):

Հարկավոր է կրկին ընդգծել, վոր բուրժուական ու ազնվականական պատմաբանները, Կարամզինից սկսած, այդ թվում Կոտոմարովն ու Կլյուչևսկին, միաբերան հայտարարում էյին, թե ուրիշներն—այդ անմիտ սպանութեանների արյունահեղ ետպագրյա յե: Հարկավ, նրանց համար խիստ ցավալի յեր, վոր Իվան Ահեղը բոյարական «կապույտ» արյուն էր թափում: Նրանց համար անհարմար էր դրել բոյարներին՝ ցարիզմի դարաշրջանում կատարված մասսայական մահապատիժների մասին:

Ահեղի՝ Դավաճան—բոյարների գլխին դատաստան տեսնելը չէր ներկայացնում ինչ-վոր գերբնական մի բան, վորը հակամեա են պնդելու բուրժուական պատմաբանները, այլ արվում էր աղնավական—կալվածատերերի ուղտին և հանդիսանում էր մի միջոց, վորն ամբացնում էր շահագործող—ֆեոդալների դասակարգի ավելի առաջավոր մասի տիրապետութեանը: Իվան IV-ը, լիկվիդացիայի յենթարկելով յերկրում յեղած բոյարական արտոնութեանները, «կարծես թե ավարտում էր Կալիտայի սկսած ուղեյային ցաքուցրիլ իշխանութեանները մի հզոր պետութեան մեջ հավաքելու գործը» (ԽՍՀՄ պատմութեան համառոտ դասընթաց, Շեստակովի խմբադրութեամբ, Հայ. հրատ., էջ 58):

ԿՄI դարի Յեվրոպայում իշխող դասակարգի մի մասի արյունահեղ դատաստաններ տեսնելը մյուսի գլխին էլ ավելի մասսայական մասշտաբներով էյին անցկացվում, քան Ռուսաստանում: Այս պատճառով այն հայտարարութեանները, թե Ահեղը հողեկան հիվանդ էր, բուրժուական պատմաբանների դատարկ հնարանքն է:

Հետաքրքրական է, վոր արևմտա-յեվրոպական պատմաբաններից վոչ մեկը չի ընդգծել Իվան IV-ի այդ առանձնահատկութեանը: Ահեղը, իհարկե, հողեկան հիվանդ չէր, բայց նա հո-

գեպես անհավասարակշիռ մարդ էր: Այդ բացատրվում է մանկութեան տարիներին ստացած նրա դաստիարակութեամբ և նրա հետագա անբարոյական անձնական կյանքի առանձնահատկութեաններով: Մենակ պաշտոնական նա յոթ կին ուներ: Նրա հոգեկան անհավասարակշռութեան ամենացայտուն օրինակներից մեկը հանդիսանում է զայրույթի մոլուցքի ժամանակ կատարված իր ավագ վորդի Իվանի սպանութեանն իր ձեռքով: Այդ մոմենտն արտասովոր վառ կերպով պատկերված է ռուսական մեծ նկարիչ Ռեպինի հռչակավոր նկարում:

Անհրաժեշտ է նշել ուրիշներնայի նաև հակառակ կողմը: Ռոբրիչնինան վոչնչացրեց Ռուսաստանի բոյարութեան նշանակելի մասը: Իայց բոյարութեան դեմ մղվող կռիվը գնում էր դյուղացիութեան հաշվին: Բոյարների քայքայումն ու վոչնչացումը իր հետևից բերեց դյուղացիութեան մասսաների քայքայում, վորովհետև բոլոր բոյարներն իրենց անտեսական հզորութեանը խաբսխում էյին դյուղացիական ճորտարան աշխատանքի վրա: Յերբ նրանց տիրապետութեանները քայքայվում էյին, քայքայվում էր նաև դյուղացիական տների գրավի մասը: Ուրիշներինը թալանում էյին դյուղացիներին և ամեն կերպ ծաղրաճանակում նրանց: Բոյարական վոչնչացվող վոտչինաների դյուղացիական բնակչութեանն որևէից դուրս էր հայտարարվում:

Ոտարերկրացի Շլիխաինդն Իվան Ահեղի ժամանակվա Ռուսաստանի մասին գրած իր պատմութեան մեջ գրում է Իվան IV-ի՝ դյուղացիութեան գլխին տեսած դատաստանների մասին. «Կալվածքներն ու հացի դեղերը նա այրում ու մոխիր էր դարձնում: Իսկ ինչ վերաբերում է շինականների կանանց, ապա նա հրամայեց նրանց մերկացնել ու անտառները քշել, վորպես տավար, ըստ վորում ծածկարար տեղավորված էյին դարան մտած մարդասպանները, վորպեսզի տանջեն, սպանեն ու հոշոտեն անտառներում թախառող ու փախուստ տվող կանանց»:

Ուրիշներինը իրենց դիրքը հաճախ ուղտադործում էյին անձնական շահերի համար: Հենրիխ Շտադենը, վորի մասին մենք արդեն ասել ենք, միաժամանակ ուրիշներին է յեղել, մասնակցել է բոյարութեան դեմ գործող պատժիչ արշավախմբերից մեկին: Նա արշավախմբի գնաց մենակ իր ձեռով, իսկ վերադարձով ամեն տեսակի բարեքներով լի 22 սայլերով: Շտադենն ուրիշներին դիրքն ուղտադործեց թալանի համար: Այդպես էր հարստանում նաև մյուս ուրիշներինը նշանակելի մասը:

Գաղափարաբանութեան դեմ Իվան IV-ի մղած կռիւնքը շատ կամայականութեամբ ու բռնութեամբ կային աշխատավոր բնակչութեան նկատմամբ:

Վորպես որինակ հանդիսանում է Նովոբորոդի ավերումը 1570 թ.: Ամբողջ քաղաքը դրվեց ուղիղ ինքնակառուցութեան տակ և հրի ու կողոպուտի մատնվեց, այն ինչ դավաճանները հարուստ և ուժեղ բոյարներն էին:

Ազնվական-ուղիղները գյուղացիներին էլ ավելի մեծ չափով էին շահագործում, քան բոյարները: 60—70-ական թիւականներին գյուղացիներն պարտուցեցինը XVI դարի կեսի համեմատութեամբ մի քանի անգամ ավելացան: Ազնվականները ձգտում էին գյուղացիներին ամեն կերպ ամբարցնել իրենց, և մասնավորապես՝ նրանց առնելու ամբարցնել իրենց հողին: Լիւթնական պատերազմը և նախորդ նվաճումները վիթխարի միջոցներ էին պահանջում: «Պատերազմները, — գրում էր անդլիացի Չենկինսոնը, — իրենց հետ քիչ ծախսեր չեն բերում ցարի համար, բայց ամբողջ ծանրութեամբ ընկնում է չքավոր բնակչութեան վրա»: Ճիշտ է, պետութեանը մեծ յեկամուտներ ունեւ հացի վաճառքից: Հացի վաճառքը ցարի մենաշնորհն էր: Հացն առաջ վաճառում էր ցարը, իսկ հետո՝ մնացած բոյարները: Հացի վաճառքից նա ստանում էր մոտավորապես 200 հազար ռուբլի այն դարաշրջանի փողով՝ այսինքն մոտ 20 միլիոն վոսկի ռուբլի: Բայց այդ փողը չէր բավականացնում: Իվան Ահեղը, բացի պատերազմի վրա կատարած ծախսերից, ունեւ անձնական չափազանց մեծ ծախքեր: Նա անձնապես իր համար ունեւ 10 հազար ձի: Թանկ էին նստում նրա բոլոր խնջուքներն ու տոնախմբութեանները:

Անդլիացի Չենսլորն այսպես էր նկարագրում ցարի հանդիսավոր ճաշը. «...ամեն ինչ մատուցվում էր վոսկի սկուտեղներով վոչ միայն հենց նրան, այլև մեզ բոլորիս, և սկուտեղները մասսիվ էին. դավաթները նույնպես վոսկյա էին ու շատ մասսիվ»:

Իվան Ահեղը նմանապես յեկամուտ ունեւ ողեաներից: Ողեաները ցարական մենաշնորհ էին: Յուրաքանչյուր ողեանն տարեկան մոտավորապես 2—3 հազար յեկամուտ էր տալիս: Ի միջի այլոց, գոյութեան ունեւ մի հետաքրքրական սովորութեան: Մարդկանց չէր կարելի ողեանից դուրս կանչել: Յեթե կինը փորձում էր ամուսնուն ողեանից դուրս կանչել, նրան չէին թողնում: Գանում էին, վոր մարդը, նստելով ողեատանը, պետական գործ է կատարում: Մինչև վոր նա այնտեղից ինքը դուրս չգար

մերկ ու բորկի, վոչ վոք իրավունք չունեւ նրան դուրս կանչելու:

Բայց վոչ մի յեկամուտ չէր բավականացնում ցարին, և այս պատճառով կիրաւում էին զանազան ապրիկի տուրքեր:

Հարկերը, գյուղացիութեան վրա գործադրվող ուժեղ ճնշումը քայքայում էին նրան, ջլատում էին յերկրի անտեսական հորութեանը: Այդ քայքայման հետեանքով բնակչութեանը փախչում է Ռուսական պետութեան կենտրոնական շրջաններից: Նա փախչում է դեպի Դոն, դեպի Վոլգա, դեպի Դնեպր: Այնտեղ փախած ճորտ գյուղացիներից կազմվում է ազատ կազակութեանը:

Մոսկովյան պետութեան կենտրոնի ամայացումը գյուղացիներէ քայքայման հետեանքով առանձնապես ուժեղացավ Իվան Ահեղի թագավորութեան վերջերին: Ահա, որինակ, Մոսկովայի դավառում 50 հազար զենայտին վարելահողից Իվան IV-ի թագավորութեան վերջերին 40%—ն ամայացել էր: Կային շրջաններ, վորտեղ ամայացել էր հողի 90%—ը:

1553 թ. Ռուսաստանի կենտրոնով ճանապարհորդող անգլիացի Չենսլորն ապշում էր Վոլոգդայի ու Մոսկովայի միջև խիտ բնակված կետերի շատութեան վրա: Նույն ճանապարհով, բայց արդեն 1588 թ., անցնող անգլիացի Ֆլետչերը զարմանում էր, վոր այդ շրջանում այդքան շատ ավերված և բոլորովին ամայի գյուղեր են գտնվում:

Իր՝ «Ռուսական պետութեան մասին» գրքում Ֆլետչերը խոսում է ռուս ժողովրդի ստրկական ու խցճուկ դրութեան մասին: Նա գրում է. «Բացի հարկերից, տուրքերից, կոնֆիսկացիաներից և ցարի կողմից դրվող հանրային այլ բռնազանձումներից ժողովուրդն այնպիսի թալանի և այնպիսի հարկահանութեանների յեյնթարկված ազնվականների, զանազան իշխանութեանների և հասարակական գործերով ուղարկված ցարական սուրհանդակներէ կողմից... վոր ձեզ պատահում է տեսնել շատ գյուղեր ու քաղաքներ կես մղոն կամ ամբողջ մեկ մղոն յերկարութեամբ բոլորովին ամայի, ամբողջ ժողովուրդն իր նկատմամբ ցուցաբերվող վատ վերաբերմունքից ու բռնութեաններից ցաք ու ցրիվ է յեղել այլ վայրեր»:

Պահպանվել են XVI դարի այսպես կոչված հաշիվհամարային մատյանները, այսինքն՝ հարկերի չափերը սահմանելու նպատակով կատարված առանձին շրջանների անտեսական նկարագրութեանները: Յեթե համեմատենք XVI դարի 70-ական և 80-ական թիւա-



կանները մեկ շրջանի հաշվեհամարային մատյանները տվյալները, ապա ստացվում է, վոր բնակչութունը նվազել է 20—30%—ով:

Առաջ իր բոլոր պարտքերը տալու դեպքում գյուղացին կարող եր աշնանը (Յուրիի որը) մի սեփականատիրոջից մյուսի մաս անցնել: Այժմ գյուղացիներին Յուրիի որն ել արդելեցին անցնել: Ժողովրդական Հիշողությունն այդ փաստի մասին պահպանել է դեռ մինչև այժմ ել դործածվող առածը: «Вот тебе, бабушка, и Юрьев день» (Ա՛յ քեզ, տատիկ, և՛ Յուրիի որը):

Գյուղացիության քայքայումը, հիմնական արտադրական ուժի քայքայումը խախտեց պետության հղորությունը:

Այդ ժամանակ Ռուսաստանի համար արտաքին շատ ծանր իրադրություն է կազմավորվում 1571 թ. Ղրիմի խան Դեվլետ Գիլեյի՝ Մոսկվայի վրա հարձակվելու կապակցությամբ: Դեռ 1558 թ., յերբ Ռուսաստանը տարված եր Լիվոնական պատերազմի սկզբով, նա փորձում եր անակնկալ կերպով հարձակվել Մոսկովյան պետության վրա: 1571 թ., դրդված դավաճան-բոյարների կողմից, վորոնք նրան ասացին, թե սովն ու անողորմածությունները թուլացրել են ուսական զորքին, Դեվլետ-Գիլեյը հարյուր հազարանոց զորքով շարժվեց Մոսկվայի վրա: Յարական զորավարները փորձում էին պաշտպանվել Մոսկվայի արվարձաններում: Ունը մոտեցավ Մոսկվային և հրամայեց այրել արվարձանները: Ծուռով այրվել սկսեց և քաղաքը: Պոսադները, կիտայգործը, Արբառի վրա դանվող Իվան IV-ի սիրելի պալատը—բոլորը վոչնչացան հրդեհից: Բոցերի ճարակ դարձան մեծաքանակ զինվորներ ու բնակիչներ: Այսպիսի իրադրության մեջ Ղրիմի խանը հեշտությամբ ջախջախեց Մոսկվայի սակավաթիվ կայսրորդ: Իրանից հետո խանն ավերեց Մոսկովյան պետության հարավ-արևելյան մարզերի մեծ մասը և վիթխարի ավարով վերադարձավ իր Տավրիդան: Նա գերի տարավ ավելի քան հարյուր հազար ուս: Այսպիսի ծանր իրադրության պայմաններում Իվան IV-ը ձուլում է բոլոր Փետրայներին (բոյարներին ու ազնվականներին) միավորել արտաքին թշնամու դեմ: Այս պատճառով 1572 թ. ուլրիչնինան վերացվեց, մանավանդ, վոր ուլրիչնինայի հիմնական խնդիրներն արդեն իրադրոծվել էին: Ուլրիչնինայի քաղաքականության հետևանքով ինքնակալությունը հաստատվեց Ռուսաստանում:

Վ. Ի. Լենինը իր մի շարք հոդվածներում ընդգծում եր, վոր ինքնակալությունը հանդիսանում է ճորտատեր-կալվածատերերի

դասակարգի դիկտատուրան: Լենինյան այդ կարևորագույն թեզիսի խեղաթյուրումը Պոկրովսկու կողմից հասցրեց նրա՝ իՍՉՄ պատմության մի շարք հարցերի հակալենինյան, հակապատմական մեկնարանմանը: Պոկրովսկու հակալենինյան մեկնարանումներն ուղտադործվեցին ժողովրդի թշնամիների կողմից վորպես ծխածածկույթ նրանց՝ իՍՉՄ պատմության հիմնական հարցերի իրենց հակահեղափոխական խեղաթյուրումը պատմական գրականության մեջ անցկացնելու փորձի ժամանակ:

Ուլրիչնիների կողմից գյուղացիության և Ղրիմի խանի կողմից գրեթե ամբողջ յերկրի խիստ քայքայումը թուլացրին Մոսկովյան պետությունը:

Այդ եր պատճառը, վոր Լիվոնական պատերազմը 1578 թվից ծավալվում եր այնպես, վոր Իվան IV-ը հարկադրված եր մի շարք քաղաքներ հեռ տալ: Հարկավ, այստեղ դեր խաղաց նոր պետությունների—Լեհաստանի, իսկ այնուհետև 1571 թ. Ծվեդիայի միջամտությունը: Բայց այդ անհաջողությունների հիմնական պատճառները պետք է փնտռել բոյարների դավաճանության մեջ, գյուղացիության՝ պատերազմից և ուլրիչնիներից կրած քայքայման մեջ, Ռուսական պետության ամբողջ անտեսության ավերման մեջ:

Իսկ այդ հասցրեց այն բանին, վոր լեհերը նոր թագավոր Բատորի գլխավորությամբ 1579 թ. Ահեղից հեռ խլեցին Պոյոցկը և նրա կողմից նվաճված բեյուուսական մյուս հողերը, իսկ 1580 թ. գրավեցին ուսական միքանի սահմանամերձ բերդեր: 1581 թ. նրանք փորձեցին հափշտակել Պսկովը, բայց Պսկովի հերոսական պաշտպանությունից հետո հեռ չարավեցին ուսական սահմաններից, և նրանց հետագա առաջախաղացումը դեպի Ռուսաստան կասեցվեց:

Լիվոնական պատերազմը մղվում եր 24 տարի: 1582 թ. Լեհաստանի հեռ կնքած հաշտությունից հետո Իվան Ահեղը փոչինչ չստացավ, բայց և վոչինչ չավեց, ինչից սկսեց, նրանով ել վերջատացավ, բայց և վոչինչ ավերին տիրելու փորձը հաջողությամբ չպսակվեց: Նույնիսկ Իվանգործը, վորը ուսական բերդ եր, 1583 թ. Ծվեդիայի հեռ կնքված հաշտությունից հետո անցավ չվեդների ձեռքը:

Բայց Արևմուտքում կրած անհաջողությունները փոխհատուցվեցին ուսական պետության նոր լնդարձակումով Արևելքում: Մոսկովյան պետությունը նվաճեց Արևմտյան Սիբիրի տերիտորիան, Սիբիրի թաթարական թագավորությունը:

XV դարի վերջում տեղի ունեցավ Իրտիչ և Տոբոլ գետերի շուրջը, Բարաբինյան ապիստամաներում ապրող թաթարների միավորումը մի միասնական թագավորութան մեջ: Այդ թագավորութունը Միքիթրական անունը ստացավ գլխավոր քաղաք Միքիթրից, վորը ընկած էր այժմյան Տոբոլսկ քաղաքից 16 վերստ հեռավորութան վրա: Միքիթրի թագավորութան սոցիալական իրակարգը նույն էր, ինչպիսիք նաև թաթարական մյուս խանություններում: Իշխանությունը պատկանում էր խանին և խոշոր Ֆեոդալներին—եմիրներին, մուրզաներին և այլն: Եմիրները, մուրզաները խանի գլխավորությամբ ճնշում էին թաթարական կիսաճորտ բնակչությանը, ինչպես և թաթարների կողմից նվաճված աեղական ժողովուրդներին՝ խանտերին, մանսիներին և ուրիշ.:

XVI դարի 60-ական թվականներին այդ թագավորության գլուխ կանգնեց Քուչում խանը, վորը փորձում էր սլայքարի ակտիվ քաղաքականութուն վարել ընդդեմ իր ուսև հարևանների, ընդդեմ Պերմի մարզի:

Այստեղ Պերմի մարզում ղեկ ՄV դարում հիմնավորվեցին վաճառական Ստրոգանովները: Արդեն XV դարի առաջին կեսին Ստրոգանովներն այնքան հարուստ էին, վոր կարողացան գերությունից փրկանել Մոսկովիայի մեծ իշխան Վասիլի Տյոմուն: Նրանց ժառանգներ Յակով ու Գրիգորի Ստրոգանովները մեծ արտոնություններ էին վայելում Իվան Ահեղի մոտ:

1558 թ. Գրիգորի Ստրոգանովը Իվան IV-ից ստացավ մոտ 150 վերստ յերկարությամբ վիթխարի տիրապետություններ: Իվան ցարը հատուկ հրովարտակներ տվեց Ստրոգանովներին տիրելու այն հարուստ հողերին, վորոնք գտնվում են Կամա գետի հոսանքով դեպի ցած՝ Պերմի յերկրից մինչև Չուսովայա գետը: Իվան IV-ը Ստրոգանովներին մեծ իրավունքներ տվեց իրենց նոր տիրապետություններում՝ հարկեր հավաքել, այդ հողերը ճորտ գյուղացիներով բնակեցնել, ամրոցներ կանգնեցնել ու զորք վարձել պաշտպանության համար: Ստրոգանովները կառուցեցին իրենց ամրոցները՝ Կանկարը (1558 թ.) և Կերչեզանը (1564 թ.): Վարձու զորքի ոգնությամբ Ստրոգանովները հնազանդության մեջ էին պահում խանտերին ու այդ հողերի վրա բնակվող մյուս ժողովուրդներին և զիջատիչ կերպով շահագործում էին տեղական յերկրի հարստությունները: Նրանք Սուլիչեզոգսկի մոտ կա-

ռուցեցին աղի յեփարաններ, մորթիների առևտուր էին անում, այսինքն՝ թալանում էին տեղական բնակչությանը, խլելով նրանից հողը, թանգադին մորթիները—սամուրյի, կուղբի և այլն:

1572 թ. Ստրոգանովներն իրավունք ստացան կազակներ հավաքել՝ պաշտպանելու համար իրենց տիրապետությունները իրենց կողմից կեղեքվող տեղական բնակիչների անընդհատ հարձակումներից և թաթարական Քուչում խանի հարձակումներից: Վերջինս իր դադանի զորձակալների միջոցով բազմիցս փորձում էր ճնշված խանտերին ապստամբեցնել Ստրոգանովների դեմ և այլն: Ստրոգանովները վորոշեցին դատաստան տեսնել խանի գլխին, ընդարձակել իրենց տիրապետությունները և գավթել նոր, մորթեղենով հարուստ յերկրներ: Նրանք զորք հավաքեցին կազակներից: Կազակները—ազատ մարզիկ էին, փախած ճորտերից, քաջարի, կարողանում էին լավ տիրապետել զենքին: Վոլգայի վրա բազմաքանակ կազակային ազատ բնակչութուն էր ապրում: Հուչակալոր Ժեդուլներում, անտառներում ու կիրճերում թաղնվում էին նրանք ցարական զորքերից, կողոպտում էին կալվածատերերին և վաճառականական քարավանները: Վոլգայի վրա զբաղմունք ունեցող Դոնի կազակների ամենաանվանի ատամաններից մեկը, վորը հետո Պերմի յերկիրը փախավ, Յերմակ Տիմոֆեյովիչն էր: Նա «ձագումով անհայտ հոգով հուչակալոր էր», ինչպես ասում է նրա մասին ժողովրդական ավանդությունը: Այդ խիզախ ատամանին իր ընկերներ Իվան Կուլցոյի, Նիկիտա Պանի և այլ քաջ կտրիճների հետ Ստրոգանովներն իրենց մոտ ծառայության հրավիրեցին: «Ունենք ամրոցներ ու հող, բայց դրոժինան քիչ է. յեկեք մեզ մոտ պաշտպանելու Մեծ Պերմը», գրեցին նրանք Յերմակին ու իր ընկերներին: Յերմակը 800-ից ավելի կազակներից կազմված դրոժինայով 1581 թ. ամառն արշավանալով դուրս յեկավ Քուչում թագավորի դեմ: Կազակները լողում էին սրընթաց ու քարքարոտ Չուսովայա գետով: Չուսյած իրենց փոքրաթիվ լինելուն, նրանք իրենց ճանապարհին միքանի անգամ ջախջախեցին թաթարական բազմաքանակ ջոկատների: Տոբոլ գետի ափին տեղի ունեցավ առաջին մեծ ճակատամարտը Քուչումի ազգականի—արքայորդի Մահմեդովու թաթարական բազմաքանակ հեծելազորի դեմ: Թնդանոթների ու պիչչալների կրակով կազակները ջախջախեցին հեծելազորը: Մահմեդովուն փախավ: Իրտիչի վրա յեղած յերկրորդ ճակատամարտում թաթարներն ավելի համառորեն էին կռվում, բայց հրագներ կազակներին արտեղ էլ հաղթութուն բերեց: Թնդանոթների, հրացանների ու

պիշչալներէ ձևօքից փախած թաթարներն իրենց թագաւոր Քուչումին հայտնում եյին. «Ձինյորներ են յեկել այնպիսի աղեղնութիւն, վոր կրակ և նրանցից ժայթքում, իսկ յերբ թրխելում և կասես յերկնքից խոփող կայծակ լինի: Նեաք չես տեսնում— բայց վերաւորում և ու մահացնում, և վոչ մի միջոցով չի կորելի պաշտպանելը»:

Թաթարներն հրապարակեցին իրենց թագաւոր Քուչումին հաղթանակը թանդ նստեց կաղակներին: Նրանցից շատերն ընկան կոպում: Կաղակներէ միջանիսը ուզում եյին հետ դառնալ թաթարները շատ են, իսկ մենք քիչ ասում եյին նրանք: Յերմակը հաստատուն կերպով ասաց. «Մեր ճանապարհը միայն գեպի առաջ է»: Այժման Տորոյսկի մոտ Յերմակին հանդիպեց ինքը Քուչումը գլխաւոր գործով: Կաղակներն համարձակորեն ափ դուրս յեկան և յերեք կողմից հարվածեցին թաթարներին: Կատաղի կռիւից հետո կաղակները հաղթեցին: Քուչումը փախաւ Իշիմի տափաստանները:

1581 թ. հոկտեմբերին Յերմակը գրովեց թաթարական թագաւորութեան մայրաքաղաքը—Սիրիք քաղաքը: Կաղակային առաման Յերմակ Տիմոֆեյեվիչը դարձաւ վիթխարի յերկրի կառավարիչ:

Թաթարների դեմ մղած մշտական կռիւներում Յերմակի ջոկատը հալվում էր: Նա իր ոգնականներից Իվան Կոլցոյին ուղարկեց Սարոգանովներէ մոտ գեկուցում տալու և ոգնութուն խնդրելու: Սարոգանովներն ու Կոլցոն 1583 թ. ընծա առած գնացին Մոսկիւս Իվան Ահեղի մոտ «Հոմանին նիխրելու Սիրիքի թագաւորութունը, թանգաղին սամույրներ, սևադորչ աղվեսներ ու կուզերը»: Իվան IV-ը Սիրիքն առաւ իր «բարձր հովանաւորութեան» տակ և Սարոգանովներին աւատորեն նոր կարվածքներով պարգևատրեց:

Յերմակին Իվան ցարը ընծայեց արծաթե կանթաւոր թաս գինի խմելու, իր հազի մուշտակը և այլ առարկաներ, մասնաւորապես յերկու ծանր զրահ:

Հետագայում Յերմակի ջոկատը մաս-մաս ջարդվեց թաթարական զորքերի կողմից: Յերմակը մնաց միջանի հարյուր կաղակներով, իսկ Ռուսաստանից ոգնութուն չկար: Թաթարների նրա բանակատեղի վրա հարձակվելու ժամանակ, ըստ ավանդութեան, 1584 թ. ոգոստոսին, աղաւթելով թաթարներէ, Յերմակը նետովեց Իրաիչի մեջ և խեղդվեց: Քուչումը նորից վերահանգնեց իր իշխանութունը Սիրիքի թագաւորութեան մեջ: Սա-

կայն վոչ յերկար ժամանակով: Արդեն Իվան Ահեղի մահից հետո, Ֆյոդոր Իվանովիչ ցարի որով Ռուսաստանից նոր զորքեր ուղարկվեցին, և Սիրիքը վերջնականապես նվաճվեց: Կառուցվեցին շատ քաղաքներ՝ Տորոյսկը (1581 թ.), Տյումենը (1586 թ.), Տոմսկը և ուրիշ: 1598 թ. ցարական զորավարները Քուչումին դուրս քշեցին Սիրիքից, իսկ XVII դ. սկզբին՝ Արեւմտյան Սիրիքը դարձաւ ռուսական ընդարձակ պետութեան բաղկացուցիչ մասը: Միւսից այդ հետամնաց, սակավաբնակ յերկրի յուրացումը, նրա արտադրողական ուժերի զարգացումը: Բայց ցարական իշխանութունը յասակ (մորթեղենով արվող հարկ) դրեց տեղական բնակչութեան վրա, վորն անհավատալի կողոպուտների ու բռնութունների յեր յենթարկվում նվաճողների կողմից:

Այսպես իր թագաւորութեան ժամանակաշրջանում Իվան Ահեղը նշանակելիորեն ընդարձակեց ռուսական պետութունը, ռուսական ազգային պետութունը վերածեց բազմազգ պետութեան:

## ԻՎԱՆ ԱՅԵԼԻ ԺԱՄԱՆԱԿԻ ԿՈՒՆՏՈՒԲԱՆ

Կուլտուրական տեսակետից XVI դարի Ռուսաստանը հետամնաց յերկիր էր: Նույնիսկ տարրական գրադիտութուն ունեցող մարդիկ այդ ժամանակ շատ քիչ կային: Ծնված գյուղացիութունը գլխովին անդրադետ էր: Թեպետ և Իվան Ահեղը յերխտասարդ բոյարներին ու ազնվականներին սովորելու յեր ուղարկում արտասահման «զանազան լեզուների ու դիտութունների մեջ վարժվելու համար», բայց ցարական պայտտում դանդաղ բոյարների ու ազնվականների մեջ շատ անդրադետներ կային: Մոսկիւսյում այդ ժամանակ կառավարական վոչ մի դպրոց չկար: Գոյութուն ունեյին միայն մասնաւոր փոքրիկ ուսումնարաններ՝ յեկեղեցիներին կից: Նրանցում դասաւանդում եյին հոգևորականութեան ներկայացուցիչները և հազիւազուտ դեպքում աշխարհիկ մարդիկ: Այդպիսի ուսումնարաններում սովորաբար ուսանում եյին միջանի յերեխաներ: Մեկ տասնյակից ավելի աշակերտ ունեցող ուսումնարանները շատ հազիւազուտ եյին: Սովորում եյին 2—3 տարի: Սովորեցնում եյին յեկեղեցական գրքերի (ժամագրքի ու սաղմոսի) ընթերցանութուն, գրել և յեկեղեցական յերգեցողութուն: Մինչև անգամ հոգևորականութուն իր մեծամասնութեամբ սակաւ զրազետ էր:

XVI դարի առաջին կեսում գրքերը բացառապես ձեռագրեր

եյին: Հոգևորականութեան շատ ներկայացուցիչներ ու կուսակրօններ գրադովում եյին «գրութեամբ գրեանց փոքունց, վորք վասն ուսուցման մանկանց փոքրկանց», այսինքն՝ ձեռքով այբբենարաններ եյին գրում: Միայն XVI դարի յերկրորդ կեսին Ռուսաստանում յերևան ե գալիս գրքերի տպագրութեանը:

Իվան Ահեղը, վորպեսզի փառաբանի իր ինքնակալ իշխանութեանը և կովի բոյարներին ու իշխանիկներին դեմ, 1553 թ. հրամայեց տպարան ստեղծել և կառավարական մենաշնորհ սահմանեց գրքերի հրատարակման վրա: Գրքերի տպագրութեան զլուխ դրվեց Իվան Ֆյոդորովը ոգնական Պյոտր Տիմոֆեյեվի (Մատիսյայնով) հետ: Ֆյոդորովը Մոսկովացի յեր: Նա կրեմլի յեկեղեցիներից մեկի սարկավազն եր: Պյոտր Տիմոֆեյեվը ծագումով Մատիսյայնով քաղաքից եր (այժմ Բելոռուսական ԽՍՀ): Մինչև Մոսկովա գալը նա ծանոթ եր տպագրական գործին: Նա այն հիմնավորապես սովորել եր Հարավ-արեւմտյան Ռուսիայում, վորտեղ գրքերի տպագրութեանը յերևան եր յեկել XVI դարի առաջին կեսին: Ֆյոդորովն ու Տիմոֆեյեվը տասը տարի աշխատեցին Մոսկովյան պետութեան մէջ առաջին տպարանը ստեղծելու վրա: Այն ստացավ «Տպագրատուն» անունը: Կրօնական բովանդակութեան առաջին գիրքը («Առաքյալ») նրանք տպել սկսեցին 1563 թ. ապրիլին և վերջացրին 1564 թ. մարտի մոտերքը:

Ռուսական արտագրութեան այդ առաջին գրքի ստեղծման մեջ ղլխավոր դերը պատկանում եր Իվան Ֆյոդորովին: Նա ինքն եր ձուլում տառերի կաղապարները և հենց տառերը: Նա ինքն եր առաջին գրաչարը, յերես կայողը և նույնիսկ սրբագրիչը: Ահա թե ինչու մեր հայրենիքի պատմութեան մեջ նա մտել ե վորպես ուսուսական նախապագրիչ: 1909 թ. կանգնեցրին նրա հուշարձանը, վորը ներկայումս ել կանգուն ե Մոսկովայում, Սվերդլովի հրատարակից Չերտինսկու հրատարակը տանող մուտքի մոտ, վոչ հեռու այն տեղից, ուր մի ժամանակ «Տպագրատուն» եր գլուխը: Ֆեդորովն իր գործի սքանչելի մասնագետ եր և գրատպութեանն իր կյանքի միակ նպատակն եր համարում:

«Տպագրատունը» գոյութեան ունեցավ մինչև 1568 թ.: Հրատարակիչին կրօնական բովանդակութեամբ միջանի տպագիր գրքեր: Բայց տպագիր գրքերի յերևան գալը խախտում եր «զըրքեր ընդորինակողների», այսինքն՝ արտագրող-կուսակրօնների շահերը: Ռեակցիոն հոգևորականութեանն ու բոյարութեանը նույնպես հակառակ եյին արամագրված այդ նորմուծութեանը: «Մոսկովայում մենք գրատպարան սարքեցինք, — գրում ե ինքը

Ֆեդորովը հետագա հրատարակութեան գրքերից մեկի վերջաբանում, — բայց հաճախակի մենք սկսեցինք դատանագույն գաղազման յենթարկվել վոչ թե իրեն յարի կողմից, այլ շատ պետերի, սրբազան-պետերի ու ուսուցիչների կողմից, վորոնք գեպի մեզ տածած նախանձից, կասկածեցին մեզ զանազան հերետիկոսութեանների մեջ, ցանկացան բարիքը չարիքի փոխել և ասածու գործը ի վերջո կործանել, վոչ այն պատճառով, վոր նրանք շատ դիտուն եյին կամ լեցուն հոգևոր բանականութեամբ, այլ հենց այնպես զուր տեղը մեր մասին չար խոսք տարածեցին»:

Ռեակցիոնների կողմից կաղմակերպված ու զրգոված ամբողջ 1568 թ. տպարանն այրեց: Նախապագրիչն իր ոգնականի հետ ստիպված յեղավ Մոսկովայից փախչել: «Այդ նախանձն ու ատելութեանը, — գրում ե Ֆյոդորովը, — մեզ հարկադրեցին թողնել մեր յերկիրը, աղքն ու հայրենիքը և փախչել ոտար, անծանոթ կողմեր»:

Նույն 1568 թ. Իվան IV-ի հրամանով տպարանը վերականգնվեց: Յերկու վարպետներ, վորոնք առաջ վորպես վարպետացուներ ոգնում եյին նախապագրիչին, ձեռնամուխ յեղան նոր գրքերի հրատարակմանը: Բայց Մոսկովայի 1571 թ. հրեհի ժամանակ տպարանն այրվեց:

Յեզ միայն 1577 թ. Իվան Ահեղը իր մոտ՝ Ալեքսանդրովսկայա ավանում կաղմակերպեց մի փոքր տպարան, բայց այդ տպարանը չեր կարող բավարարել գրքերի ամբողջ պահանջը: 1582 թ. վին Ռուսաստան այցելած մի ոտարեկրացու վկայութեամբ «ուսաներն իրենց ըլոր գրքերն արտագրում են և վոչ թե տպագրում, միայն քիչ-քիչ բան տպելու յ տրվում իրեն թագավորի համար Ալեքսանդրովսկայա ավանում, վորտեղ նա իր տպարանն ունի»:

Ֆյոդորովն անակնկալ կերպով ընկավ Լեհաստան, հետման Խոդկեվիչի մոտ: Բայց վերջինս շուտով հրաժարվեց ոչնել նրան գրքեր հրատարակելու և Ֆյոդորովին առաջարկեց թողնել սիրելի գրադմունքը և զբաղվել յերկրագործութեամբ: Մեծ դժվարութեամբ հաջողվեց Ֆյոդորովին աշխատանք դառնել իշխան Կոնստանտին Ոստրոժսկու մոտ, վորը բաղամթիլ կալվածքներ ուներ վոլինում, Գալիցիայում և Պոդոլիայում:

Ոստրոգ քաղաքում 1581 թ. Ֆյոդորովը տպագրեց հռչակավոր «Ոստրոգի աստվածաշունչը»: Այդ դարաշրջանում նա հանդիսացավ տպագրական արվեստի վերջին նվաճումը: Բոլոր

չրիֆտները, զարդանկարները և այլն ինքը Ֆյոդորովը պատրաստեց և ձուլեց: Այդ հրատարակությունից հետո նա այնուամենայնիվ չկարողացավ նոր աշխատանք գտնել իր համար: Լեհական մագնատները ամենևին չեյին հետաքրքրվում վոչ-անհայտ սպազբրիչի վիճակով, և քիչ էլին հոգ տանում գրատպության վիճակի մասին: Ֆյոդորովը միջոցներ չունեի նույնիսկ այն բանի համար, վոր հետ գներ ինչ-վոր մի վաճառականի մոտ գրավ գրած իր սպազբրական պիտույքները: Կյանքի վերջին տարիներին ուս հռչակավոր նախասպազբրիչը նույն վիճակի մեջ ընկավ, ինչ վիճակի մեջ ընկել էր քառասուն տարի առաջ բելոռուսական գրատպագրիչ Ֆ. Սկարինը: Իվան Ֆյոդորովը մեռավ 1583 թ. դեկտեմբերին Լվովում (Գալիցիա), մոռացության ու անուշադրության մատնված, սարսափելի աղքատության մեջ: Այն գերեզմանաքարի վրա, վորի տակ հանգչում է նրա աճյունը, պահպանվել է հետևյալ արձանագրությունը. «Հոհան Ֆյոդորովիչ, Մոսկովիտիայի տպագրիչ, վորն իր ջանացուցությամբ տպագրությունը լքումից վերանորոգեց», այսինքն այս տպագրիչը՝ Գալիցիայում մինչ այդ լքված տպագրական գործը վերանորոգեց: Արձանագրության վերջում մեկ անգամ ևս ընդգծվում է, վոր նա յեղել է «մինչև այդ չտեսնված գրքերի տպագրիչ»:

Ռուսաստանի կուլտուրայի զարգացումը XVI դարում չէր սահմանափակվում միայն գրատպագրության ծնունդով:

XVI դարը ուսական ազդային ճարտարապետության ծաղկման դարն էր: Ի հիշատակ Կազանի նվաճման իվան IV-ը 1555—1559 թ. թ. Մոսկովայում կառուցեց Պոկրովսկի մայր յեկեղեցին, վորը կոչվեց Վասիլի Յերանելու մայր յեկեղեցի: Այն կառուցել են ուս ականավոր ճարտարապետներ Բարմանն ու Պոստնիկը: Մայր յեկեղեցու կառուցման ժամանակ նրանք յերեվան բերին վոչ միայն իրենց ճարտարապետական տաղանդը, այլ և ցուցաբերեցին ճարտարագիտական փայլուն ընդունակություններ: Նրանց սարածածկերն ավելի քան 300 տարով կանխել են վերածածկերի ժամանակակից սեխնիկան: Վասիլի Յերանելու մայր յեկեղեցին մինչև այժմ հանդիսանում է հին ուսական ազգային ճարտարապետության ամենահոյակապ հուշարձանը: Այն ժամանակ այդ տաճարի հոյակապությունը զարմացնում էր Մոսկովյան պետություն յեկող բոլոր ոտարեկրացիներին: Ռուսական ճարտարապետության գլուխ գործոց է հանդիսանում նմանա-

պես Մոսկովայի մոտի Կոլումենսկոյե դյուղում մինչև այժմ պահպանված յեկեղեցին:


XVI դարում Ռուսաստանում գեղանկարչության մեջ զլխավոր տեղը բռնում էր պատկերանկարչությունը, բայց XVI դարի կեսից զարգանում է աշխարհիկ նկարչությունը: Պալատների, գրքերի միջև մանրանկարների նախազարգումը մեծ հաջողությունների յե հասնում: Աշխարհիկ գեղանկարչությունը զարգարում էր ցարական Գրանովիտայա, Վոսկե և մյուս պալատները. պատկերվում էին տարվա չորս յեղանակները, չորս հողմերի դեմքերը, առաքինություններն ու մոլությունները:

Իվան IV-ի որով լայնորեն զարգանում է գրականությունը: Ճիշտ է, նրանում գերիշխում են յեկեղեցական մոտիվները, բայց արդեն նկատվում է շրջադարձը նաև դեպի աշխարհիկ գրականության կողմը: Աներկբայելիորեն աշխարհիկ ստեղծագործություն է հանդիսանում հռչակավոր «Домострой»-ը («Տնարարություն»): Այն արտացոլել է այն ժամանակի ուսական կյանքի կենցաղային բոլոր կողմերը: «Домострой»-ում ցուցումներ կան, թե ինչպես դաստիարակել յերեխաներին, ինչցուցումներ կան, թե ինչպես պահել տունը և այլն: Կես վարել անտեսությունը, ինչպես պահել տունը և այլն: «Домострой»-ը, արտացոլելով ինքնակալության ամբապնդումը Ռուսաստանում այն ժամանակաշրջանում, ամուսին-հոր անսահմանափակ իշխանությունն էր հաստատում ընտանիքում: «Домострой»-ը XVI դարի գրադեմ մարդկանց ընթերցանության սիրելի գիրքն էր: XVI դարի ուս նշանավոր գրողներից մեկը մեարոպոլիտ Մակարին էր: Նա հեղինակեց հռչակավոր «Степенная книга»-ն («Ծննդարանություն»), վորի մեջ շարադրված էր ուս ցարերի պատմությունը Ռյուրիկից մինչև 1559 թ.:

Իվան Ահեղը մեռավ 1584 թ.: Մոսկովյան պետությունն այդ ժամանակ արդեն խոշորագույն ու ամենաուժեղ բազմադպետություններից մեկն էր վոչ միայն այն ժամանակվա Յելրոպայում, այլև ամբողջ աշխարհում: Դրա հետ մեկտեղ դյուղապայում, այլև ամբողջ աշխարհում ու հետագա ճորտացման ցիլության մասսաների շահագործման ու հետագա ճորտացման ուժեղացման քաղաքականությունը, ինքնակալ ցար Իվան Ահեղի ազնվականների ճնշումը ճորտ գյուղացիության վրա, ժողովրդական մասսաների քայքայումն XVII դարի սկզբում առաջանում են աշխատավորների ուժեղացրած դիմադրությունը ճորտատիրական կեղեքմանը և հասցնում են Ռուսաստանի պատմության մեջ առաջին խոշոր գյուղացիական ապստամբությանն ընդդեմ

բայրների ու կալվածատերերի ի վան Իսայեֆիչ Բորտնիկովի  
դեկավարութեամբ: Գյուղացիական այդ ապստամբութեանն ընդ-  
դեմ իրենց կեղեքիչների և ոռւս մեծ ժողովրդի հերոսական պայ-  
քարը լեհական ինտերվենտների դեմ XVIII դարի սկզբին ՈՍՀՄ  
պատմութեան մեջ մտել են վորպես մեր մեծ հայրենիքի ժողո-  
վուրդների հերոսական անցյալի ամենախառ եջեր:





ՄԱՍՆԱԿԱՆ ԵՐԱՄԱՍԻՆ  
 ՄԱՍՆԱԿԱՆ ԵՐԱՄԱՍԻՆ  
 1533 թ.  
 ՄԱՍՆԱԿԱՆ ԵՐԱՄԱՍԻՆ  
 1824 թ.

0 100 200 300 400 500 600  
 ՄԱՍՆԱԿԱՆ ԵՐԱՄԱՍԻՆ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ռուսաստանի Եկամտիկան XVI դարի առաջին կեսում . . . . .	3
Քոչարական ինքնիշխանության տարիները . . . . .	12
Մոսկվայի պառօղի ազատամբարայանը 1547 թ. և Իվան IV-ի ռեֆորմները . . . . .	18
Կազանի և Աստրախանի նվաճումը . . . . .	28
Կապերի ընդարձակումն արտասահմանի հետ . . . . .	37
Վիվոնական պատերազմը . . . . .	42
Ոպրիչնինա . . . . .	49
Արևմտյան Սիբիրի նվաճումը . . . . .	60
Իվան Ահեղի ժամանակի կուլտուրան . . . . .	63




Թարգմանեց Ն. Հասրաթյան  
 Խմբագիր Բ. Ն. Գավրյան  
 Տեխն. խմբ. Ս. Խաչատրյան  
 Սրբազրիչ Վ. Ջիդեղյան  
 Կանաթալ սրբազրիչ Ե. Արմյան

Գլավխիտի լիտպոր № 4—2525, հրատ. № 727.  
 Պատվեր № 193, տիրած 5000  
 Թղթի չափսը 60x92<sup>1</sup>/<sub>16</sub> (38.400 տպ. նիշ. 1 տպ. մամուլում)  
 4 1/2 տպ. մամուլ, 2 1/4 թերթ թուղթ.  
 Հանձնված է արտադրության 8/IX 1939 թ.  
 Ստորագրված է տպագրելու 10/X 1939 թ.  
 Գինը 1 ա. 50 կ.

Գաղափարական գրականության պետական հրատարակչության  
 տպագրան, Յերևան, Ալլանիկերդյան № 65





« Ազգային գրադարան



NL0403573

